

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ԴԱՆԻԵԼ ՅԱՆ ՎԱՐԴՈՒ ՀԻ ՍՏՅՈՊԱՅԻ

ԳՈՐԾԱՐԱՐ ՇՐՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՈՒ Մ Է Լ Ե ԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԸ (ԻՐԱՎԱՅ ԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼ ՈՒՆՈՒԹՅՈՒՆ) ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք – (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ա.Մ.Հայկյան

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

.....3

ԳԼՈՒԽ 1. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... 16

§1.1. Էլեկտրոնային գործարքների ձևավորման և զարգացման պատմությունը 16

§1.2. Գործարքի կնքման Էլեկտրոնային ձևի առանձնահատկությունները 33

ԳԼՈՒԽ 2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ.....69

§2.1. Էլեկտրոնային ձևով պայմանագրերի կնքման եղանակները 69

§2.2. Օֆերտայի և ալյցեպոի առանձնահատկությունները Էլեկտրոնային ձևով պայմանագրեր կնքելիս 80

ԳԼՈՒԽ 3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՆ ԱՊԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ..... 105

§3.1. Էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերն սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում 105

§3.2. Էլեկտրոնային կոնոսամենտը տրանսպորտային փոխադրումների ոլորտում 117

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....141

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....151

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Ատենախոսուության թեմայի արդիականությունը: 20-րդ դարի ավարտը նշանավորվել է այնպիսի իրադարձություններով, որն էապես փոխել է աշխարհում ավանդական առևտրի ընկալումներն ու մարդկանց գիտակցությունը: Խոսքը համացանցի ստեղծման մասին է, որը կրճատել է տարածությունը, արագացրել տեղեկատվության փոխանակումը: Գործարարական հարաբերությունների մասնակիցները չեն հերքում համացանցի և նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունն իրենց գործունեության, ինչպես նաև ավանդական առևտրի էության և իրականացման ձևի փոխակերպման վրա: Համացանցը, այդուհանդերձ, կանգնեցրել է հասարակությանը առկա ընկալումների վերափոխման փաստի առջև:

Ներկայումս տնտեսական զարգացման հիմնական խթանիչներին են համարվում հաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաները և արդիական են դառնում ոչ միայն վաճառող-գնորդների միջև համացանցով տվյալների փոխանակման արդյունքում կնքված գործարքները, այլև հենց էլեկտրոնային միջավայրում, այսինքն՝ կայքերի և գնորդների միջև առաջացող առևտրային հարաբերությունները: Էլեկտրոնային տեխնոլոգիաները փոխել են տեխնոլոգիական, տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքը: Ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ հաղորդակցության փոխանակումը կատարելագործվել է, լայն տարածում է ստացել էլեկտրոնային հեռահաղորդակցության համակարգերի կիրառությունը գործարարության բնագավառում, ըստ այդմ՝ առավել հաճախակի է դառնում էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքումը: Քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, ուղարկելով էլեկտրոնային օֆերտաներ և ակցեպտներ, կնքում են պայմանագրեր, կատարում այդ պայմանագրերից բխող իրենց պարտավորությունները և երբեմն անգամ լուծում այդ պայմանագրերի շուրջ ծագած վեճերն օնլայն հարթակներում:

Հայաստանում նույնպես էլեկտրոնային առևտուրը համարձակ քայլերով զարգանում է: Էլեկտրոնային ձևով գործարքների կնքմանը խթանում են ազգային ծրագրային լուծումներն ու

նախաձեռնությունները, բանկային ոլորտում արդեն իսկ տարածված ինտերնետային բանկինգի հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Կենտրոնական բանկի վարած քաղաքականությունը Էլեկտրոնային փողերի և միջազգային տարբեր Էլեկտրոնային վճարամիջոցների ներդրման կապակցությամբ:

Էլեկտրոնային առևտրին և ընդհանրապես համացանցի ընձեռած հնարավորություններին իսկզբանե անդրադարձ են կատարել տնտեսագետները, ովքեր, ընկալելով գործարարների համար ստեղծված անսահմանափակ նոր հնարավորությունները, անմիջապես փորձել են վերհանել հաջողակ ու տապալված գործարարների Էլեկտրոնային փորձառությունը ու առաջադրել բիզնես կանոններ համացանցում հաջողության հասնելու ու արագ տնտեսական աճ արձանագրելու համար: Իրավագիտության ոլորտում, սակայն, այսպիսի առաջընթացը հանգեցրել է մի շարք տեսական ու գործնական խնդիրների: Գործող իրավական լուծումներն ու մեխանիզմները, որոնք ստեղծվել էին կարգավորելու ավանդական գործարարությունը, չեն կարող օգտագործվել կարգավորելու այն հարաբերությունները, որոնք ծագում են համացանցի կիրառմամբ:

Նոր իրականությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հասարակական հարաբերությունների կազմում առկա են որակապես նոր հարաբերություններ, որոնք անհրաժեշտ կարգավորման կարիք ունեն: Սակայն Էլեկտրոնային միջավայրում ստեղծած Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Էլեկտրոնային միջավայրում ծագած հարաբերությունները արդի օրենսդրության պայմաններում համալիր չեն կարգավորվում, լիարժեք կերպով չի ապահովվում այդ հարաբերությունների մասնակիցների իրավունքների ու շահերի պաշտպանությունը: Դժվարությունները ծագել են իրավունքի մի շարք ճյուղերում. *քաղաքացիական իրավունքում* Էլեկտրոնային տվյալների փոխանակմամբ պայմանագրերի կնքման, համացանցով կնքված գործարքների, կատարված Էլեկտրոնային վճարումների,

Էլ Եկտրոնային թվային ստորագրության և Էլ Եգիտիմության, Ինչպես նաև հեղինակային իրավունքների պաշտպանության կապակցությամբ, *քաղաքացիական դատավարության ոլորտում* համակարգչային ցանցերով կնքված գործարքների դատական պաշտպանության կապակցությամբ, *Ֆինանսական իրավունքում* հարկային ու մաքսային խնդիրների կապակցությամբ:

Վերոնշյալ խնդիրների առկայությունն էլ ստեղծել է մի իրավիճակ, երբ անհրաժեշտ է վերանայել Էլ Եկտրոնային միջոցներով գործարքների կնքման ձևի, օֆերտայի, ակցեպտի, դրանց հետևանքի, պայմանագրի կնքման պահի, Էլ Եկտրոնային միջավայրում սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ մեր մոտեցումները և լուծել այս ոլորտում առկա ինչպես տեսական, այնպես էլ գործնական հիմնահարցերը:

Յետագոտության նպատակը և խնդիրները: Յետագոտության նպատակը Էլ Եկտրոնային միջավայրում պայմանագրերի կնքման տեսական և գործնական մասնավոր իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությունն է, կատարված հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության դրույթների կատարելագործմանը, սպառողների իրավունքների արդյունավետ պաշտպանության մեխանիզմների ամրապնդմանն ուղղված առաջարկների մշակումը:

Նշված նպատակներին հասնելու համար խնդիր է դրվել .

- ուսումնասիրել Էլ Եկտրոնային գործարքների, հատկապես Էլ Եկտրոնային պայմանագրերի ձևավորման պատմությունը,

- հետազոտել գործարքի կնքման գրավոր ձևի առանձնահատկությունները՝ ուշադրություն դարձնելով գրավոր փաստաթղթի ու ձեռագիր ստորագրության գործառույթներին,

- վեր հանել Էլ Եկտրոնային միջոցներով կնքվող գործարքների առանձնահատկությունները՝ առանձնացնելով Էլ Եկտրոնային փաստաթղթի ու Էլ Եկտրոնային ստորագրության վերաբերյալ առկա մոտեցումներն ու վերջիններիս գործառույթները,

- համեմատել գրավոր ձևով կնքվող գործարքների առանձնահատկությունները Էլ Եկտրոնային միջոցներով կնքվող գործարքների հետ՝ որոշելով այս ինստիտուտի գործառնության

հիմնական ուղղությունները և հեռանկարները և գիտություն մեջ գործարքի կնքման երրորդ ձևի առանձնացումը,

- Էլեկտրոնային պայմանագրերի կնքման եղանակների ուսումնասիրման արդյունքում ճշգրտել ու հստակեցնել Էլեկտրոնային միջոցներով փոխանակվող օֆերտայի, ակցեպտի, դրանց հետևանքի, պայմանագրի կնքման պահի և վայրի որոշման առանձնահատկությունները,

- վերլուծել Էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքումն առանձին ոլորտներում՝ առանձնացնելով սպառողների իրավունքների պաշտպանության հնարավոր մեխանիզմների արդյունավետության վերհանումն ու փոխադրումների ոլորտում Էլեկտրոնային կոնոսամենտի լայն կիրառության մարտահրավերները,

- ուսումնասիրել Էլեկտրոնային պայմանագրերի առանձնահատկությունները կարգավորող հայրենական օրենսդրությունը, հետազոտել արտասահմանյան իրավակարգավորումներն ու դատական պրակտիկան, գնահատել ՀՀ-ում առկա կարգավորման արդյունավետությունը ու բացահայտել օրենսդրական բացերը,

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրամշակել և ներկայացնել Էլեկտրոնային պայմանագրերի առանձնահատկությունները կարգավորող քաղաքացիական օրենսդրության դրույթների կատարելագործման առաջարկներ՝ այդպիսով նպաստելով քննարկվող ինստիտուտի ամրապնդմանը և զարգացմանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում Էլեկտրոնային օֆերտայի, ակցեպտի, դրանց հետևանքի, Էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքման պահի, Էլեկտրոնային միջավայրում սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Որպես հետազոտության առարկա հանդես է գալիս Էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքման ինստիտուտը և իրավական կարգավորման առկա հիմնախնդիրները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Էլեկտրոնային միջոցներով գործարքների,

հատկապես պայմանագրերի կնքումը սկսել է դառնալ տարբեր ուսումնասիրությունների առարկա՝ միայն 1990-ական թվականների վերջից սկսած: Այս կապակցությամբ առավել խորը վերլուծություններ կատարվել են հատկապես ամերիկյան և եվրոպական համալսարանների և գիտնականների կողմից, սակայն անհրաժեշտ է նկատել, որ այդպիսիք մեծամասամբ տնտեսագիտական հետազոտություններ են: Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի կողմից նմուշային միջառք օրենքների մշակմամբ արևմտյան երկրներում էլեկտրոնային առևտրի ոլորտում սկսվեցին ու այդուհետ շարունակվեցին նաև իրավական վերլուծությունները: Ռուսական իրավագիտական միտքը նույնպես սկսել է անդրադառնալ էլեկտրոնային ձևի հետ կապված խնդիրների վերհանմանն ու ուսումնասիրությանը, սակայն այդպիսիք դեռ համալիր բնույթ չեն կրում: Հայկական իրականության մեջ տեսական ուսումնասիրություններ գործարքի կնքման էլեկտրոնային ձևի, էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքման վերաբերյալ իսպառ բացակայում են:

Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է պայմանագրերի կնքման էլեկտրոնային ձևի առանձնահատկություններին նվիրված արտասահմանյան աղբյուրներից: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Պ. Թոդի, Ջ. Պոլի, Գ. Չեկոխի, Ս. Դեբատիստայի, Ջ. Դիքի, Լ. Դեմատեոյի, Ա. Չափգալկինի, Յ. Կարեվի, Դ. Կոզլեի, Ի. Կուզմինի, Ե. Սիբիրսկայի և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և գործնական հիմք են հանդիսացել էլեկտրոնային պայմանագրերի իրավական կարգավորում նախատեսող ՀՀ օրենսդրությունը, միջազգային իրավական ակտերը, Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ ԱՄՆ), Եվրոպական Միության, Եվրոպական միջառք պետությունների օրենսդրական ակտերը, ինչպես նաև արտասահմանյան և ներպետական դատական պրակտիկայի նյութերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտությունն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկայի և պատմական, համատե-

սական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, անալոգիայի, քննադատական, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային, համեմատական-իրավական մեթոդների օգտագործմամբ, որոնց կիրառմամբ վերլուծվել են Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների օրենսդրությունը, գիտահետազոտական աշխատանքները, դատական ակտերը, վեր են հանվել այս բնագավառում առկա տեսական և գործնական հիմնախնդիրները, դրանց լուծման ուղղությամբ առաջարկվող ընդհանուր լուծումները:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտությունը հայ իրավագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել համալիր և բազմակողմանի քննարկել էլեկտրոնային ձևով գործարքների, հատկապես պայմանագրերի կնքումը, բացահայտել էլեկտրոնային միջոցներով գործարքի կնքման գրավոր ձևի էությունը ու առանձնահատկությունները, առաջարկվել է տեսության մեջ այն դիտարկել առանձին՝ որպես գործարքի կնքման յուրօրինակ ձև իր առանձնահատկություններով: Աշխատանքում վերլուծության են ենթարկվել էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքման ընթացքում ծագող բազմաթիվ իրավական խնդիրները ներկայիս իրավակարգավորման շրջանակներում, սպառողների իրավունքների անարդյունավետ պաշտպանությունն ու դրա ամրապնդմանն ուղղված հնարավոր մեխանիզմները, փոխադրումների ոլորտում էլեկտրոնային կոնոսամենտի կիրառությանը խոչընդոտող գործնական հիմնախնդիրները: Ներպետական, արտասահմանյան, միջազգային իրավական ակտերի վերլուծության, գործնական խնդիրների լուծմանն ուղղված դատական ակտերում արտահայտված դիրքորոշումների ուսումնասիրության արդյունքում կատարվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ ներկայացվել են ՀՀ օրենսդրության և հետագայում իրավակիրառ դատական պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթը ակնհայտորեն դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Էլեկտրոնային պայմանագրերի առանձնահատկությունները, օրեցօր զարգացող տեխնոլոգիաները, Էլեկտրոնային պայմանագրերի կիրառության ոլորտների ընդլայնումն ու միևնույն ժամանակ ինտերնետային մարտահրավերները թույլ են տալիս եզրակացնել, որ առաջիկայում Էլեկտրոնային միջոցներով գործարքների կնքման ծավալներն անհամեմատ աճում են ու Էլեկտրոնային միջոցներով գործարքների կնքումը հնարավոր է դառնա փաստաթղթային միջոցով գրավոր գործարքների կնքման համեմատ գերակամիջոց: Այս տեսանկյունից հարց է առաջանում, թե որքանով է գործարքի կնքումը Էլեկտրոնային միջոցներով համապատասխանում գործարքի փաստաթղթային գրավոր ձևի չափորոշիչներին, նամանավանդ, որ յուրաքանչյուր գործարքի և պայմանագրի տեսակի հետ կապված Էլեկտրոնային միջոցները թելադրում են իրենց առանձնահատկություններն ու ըստ այդմ՝ ենթադրում նոր յուրահատուկ իրավակարգավորումներ: Գրավոր և Էլեկտրոնային փաստաթղթերի, ձեռագիր ու Էլեկտրոնային ստորագրությունների կատարած գործառնությունների ուսումնասիրությունից ու համեմատությունից հանգում ենք եզրակացության, որ Էլեկտրոնային փաստաթուղթն ու Էլեկտրոնային ստորագրությունը ոչ միայն կատարում են ձեռագիր փաստաթղթի ու ձեռագիր ստորագրության գործառնությունը, այլ և ապահովում են միջարք առավելություններ, որոնք հասանելի չեն ավանդական գրավոր ձևի պարագայում: *Մասնավորապես՝ Էլեկտրոնային ձևի դեպքում դուրս է մղվում բնօրինակ և պատճեն փաստաթղթերի խնդիրը, թվային ստորագրության պարագայում բարձրանում է ստորագրողի նույնականացման հուսալիությունը, կրճատվում են ժամանակային և տարածական գործոններն ու դրանց հետ կապված ծախսերը: Բացի այդ, առանձնահատուկ կարգավորում են պահանջել մեր կողմից կատարված հետազոտության շրջանակներում ընդգրկված բոլոր հարցերը, մասնավորապես՝ օֆերտայի, ակցեսպոի, դրանց հետկանչի, պայմանագրի կնքման պահի, սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ կարգավորումները, վերացել է կոնսուամենտի երեք օրինակ կազմելու և բեռին*

ուղեկցել ու անհրաժեշտության դեպքում: Ուստի քաղաքացիական իրավունքի տեսության մեջ գործարքների կնքման բանավոր և գրավոր ձևերի հետ միասին առաջարկվում է առանձին քննարկման առարկա դարձնել նաև գործարքների կնքման էլեկտրոնային ձևը: Իրավունքի տեսության մեջ գործարքի այս ձևի առանձնացումը թույլ կտա կատարել նպատակաուղղված ուսումնասիրություններ գործարքի կնքման հետևյալ ձևի վերաբերյալ՝ չսահմանափակվելով ավանդական լուծումներով, չհամեմատելով այն գործարքի կնքման այլ ձևերի հետ և հնարավորություն տալով առաջադրել նորարարական լուծումներ հարիր այսյուրօրինակ ոլորտին:

2. «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում¹ տրված «Էլեկտրոնային թվային ստորագրություն» հասկացությունը (էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար) անհարկի սահմանափակում է էլեկտրոնային միջավայրում կիրառվող ու ճանաչվող այլ ստորագրությունները (կոդեր, անուն-ազգանուն, հաշիվներ, գաղտնաբառեր) և ճանաչում միայն թվային ստորագրությունների իրավական կարգավիճակը: Էլեկտրոնային և թվային ստորագրությունների վերաբերյալ առկա միջազգային կարգավորումների, այդ հասկացությունների տարբերությունների ու դրանց հիմքում ընկած հիմնավորումների, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրության վերաբերյալ տեսությանը հայտնի մոտեցումների ու մոդելների ուսումնասիրությունից հետևում է, որ էլեկտրոնային թվային ստորագրությունը չի կարող դիտարկվել որպես էլեկտրոնային ստորագրության միակ օրենքով պաշտպանվող

¹ Տե՛ս թիվ ՀՕ-40 օրենք, ընդունվել է 14.12.2004թ.-ին, ուժի մեջ է 15.01.2005թ.-ից, ՀՀՊՏ 2005.01.26/7(379):

տեսակ, քանի որ նման կերպ արժեզրկվում են հաղորդագրությանը ունենող արկղին անհատականացնող առկա այլ լուծումները: Առաջարկվում է ինչպես ՀՀ քաղաքացիական իրավունքում, այնպես էլ օրենսդրական մակարդակով տարբերակել թվային և էլեկտրոնային ստորագրությանը ունենեցող:

3. «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը միայն սահմանում է տեղեկատվական համակարգի հասկացությունը (էլեկտրոնային փաստաթղթերի նախապատրաստման, առաքման, ստացման, պահպանման կամ այլ տիպի ապարատաճրագրային մշակման համակարգ) և չի կարգավորում էլեկտրոնային հաղորդագրությանը ունենեցող արկղում ու ստացումը: Էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքման եղանակների հետազոտության, միջազգային փորձի հաշվի առմամբ ներպետական իրավակարգավորումների ուսումնասիրությունն իր կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում գործնականում անհնար կլինի որոշել էլեկտրոնային հաղորդագրությանը ունենեցող արկղի ստացման պահը՝ հաշվի առնելով վերջիններիս առանձնահատկությունները: Այս առնչությամբ առաջարկվում է որոշել էլեկտրոնային հաղորդագրությանը ունենեցող արկղի պահը և տարբերակել հասցեատիրոջ նշած ու չնշած տեղեկատվական համակարգերին ուղարկվող հաղորդագրությանը ունենեցող ստացմանը պահը:

4. Էլեկտրոնային պայմանագրերը կնքվում են ակնթարթորեն, քանի որ օֆերտան կամ ակցեպտը կարող են ուղարկվել կոճակի մեկ սեղմմամբ վայրկյանների ընթացքում: Նման պարագայում, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումները և այն հանգամանքը, որ գործնականում օֆերտայի կամ ակցեպտի հետևանքի վերաբերյալ էլեկտրոնային հաղորդագրությանը գրեթե երբեք էլեկտրոնային օֆերտայի կամ ակցեպտի վերաբերյալ հաղորդագրության չուտ չի հասնում, էլեկտրոնային միջոցներով կնքվող պայմանագրերի համար ներկայիս իրավակարգավորման պայմաններում անհնար է դառնում օֆերտայի և ակցեպտի հետևանքի մեխանիզմից օգտվելը: Ուստի առաջարկվում է նախատեսել «մտածելու որոշակի ժամկետ» էլեկտրոնային միջոցով

կատարվող օՖերտայի և ակցեպտի հետևանքի համար: Պայմանագրի կնքման պահի վերաբերյալ տեսութայունների ուսումնասիրության հիման վրա, միևնույն ժամանակ էլեկտրոնային միջոցներով ուղարկվող օՖերտայի և ակցեպտի հետևանքի մեխանիզմի կիրառության մասին պայմանավորված՝ առաջարկվում է նաև հստակեցնել էլեկտրոնային միջոցներով կնքվող պայմանագրի կնքման պահը:

5. Էլեկտրոնային ձևով ապրանքներ պատվիրելիս սպառողները կայքում կարողանում են տեսնել միայն իրենց կողմից պատվիրված ապրանքի նկարն ու նկարագրությունը: Ստանալով ապրանքը՝ սպառողը հաճախ հայտնաբերում է, որ այն էականորեն տարբերվում է կայքում առկա ապրանքի նկարագրից կամ պարզապես չի համապատասխանում սպառողի պատկերացումներին ու սպասելիքներին: Ստացվում է, որ էլեկտրոնային ձևով առևտուր կատարելիս սպառողը հայտնվում է անբարենպաստ վիճակում, քանի որ գրկվում է ապրանքը տեսնելու, շոշափելու և այն գնել /չ գնելու որոշում կայացնելու հնարավորությունից: Էլեկտրոնային առևտուրը խթանելու, ինչպես նաև գործնականում էլեկտրոնային կայքում գնում կատարած սպառողին խանութում գնում կատարած սպառողի համեմատ վատթարացնող վիճակում չդնելու համար, ԵՄ իրավակարգավորումներին ու միջազգային պրակտիկային համահունչ, առաջարկվում է գնորդներին իրավունք ընձեռել ոչ միայն փոխարինել, այլև վերադարձնել ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել: Օրենսդրորեն պետք է ամրագրվեն նաև այն բացառությունները, որոնց դեպքում ապրանքը չի կարող վերադարձվել՝ ելնելով այդ ապրանքի առանձնահատկություններից, արագ փչանալուց, կապարակնքումից, տեսականիշերով որոշվող ապրանք լինելուց, համակարգչից ներբեռնվող կամ կրիչով ձեռք բերվող թվային տեղեկատվություն լինելուց:

6. Սպառողներն այժմ հաճախակի են կնքում պայմանագրերի նտերնետային կայքում կամ էլեկտրոնային հավելվածով: Կայքերը սովորաբար նախատեսում են պայմանագրերի կնքմանն ուղղված մի շարք քայլերի հաջորդականություն: Այդ քայլերը տարբերվում

են՝ ըստ կայքերի ու հաճախ սպառողի համար անհասկանալի է լինում, թե իր որ քայլից կամ գործողությունից հետո է պայմանագիրը համարվել ու կնքված: Այսինքն՝ հետևելով կայքում նշված քայլերի հաջորդականությանը սպառողը չի իմանում և չի էլ կարողանում կանխատեսել, թե իր կոնկրետ որ քայլը իրավական հետևանքներ կառաջացնի իր և վաճառողի համար: Հարցերի առկայության պարագայում սպառողը երբեմն չի կարողանում կապվել վաճառողին՝ վերջինիս գտնվելու վայրի, կապ հաստատելու միջոցների վերաբերյալ տվյալների բացակայության պատճառով: Սպառողների իրավունքների պաշտպանության և էլեկտրոնային կայքում առևտուր կատարելու համար պահանջվող քայլերի կանխատեսելիության տեսանկյունից անհրաժեշտ է նախատեսել մեխանիզմներ, որոնք թույլ կտան սպառողին կանխորոշելու իր կողմից ձեռնարկվելիք քայլերը, անհրաժեշտության դեպքում կապ հաստատելու վաճառողի հետ, ինչպես նաև հասկանալու, թե որ պահից է ծագում իր՝ վճարում կատարելու պարտավորությունը: Առաջարկվում է նաև նախատեսել այն նվազագույն տվյալների ցանկը, որն ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը պետք է տեղադրի ու հասանելի դարձնի ցանկացած սպառողի, որպեսզի սպառողի կողմից վաճառողի կամ արտադրողի հետ կապ հաստատելու հնարավորությունը լինի արդյունավետ:

7. Էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքումը արագացնում է առևտրաշրջանառությունը և զերծ պահում բազմաթիվ ծախսերից: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (այսուհետ՝ ՄԱԿՄԱԻՀ) կողմից մշակված «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքում ընդհանուր դրույթներից զատ հատուկ անդրադարձ է կատարվում փոխադրումների բնագավառում էլեկտրոնային փաստաթղթերին, քանի որ փոխադրումների շնորհիվ է տեղի ունենում փաստացի ապրանքաշրջանառություն: Այդուհանդերձ, փոխադրումների իրավահարաբերության կողմերը սովորաբար ավանդական փաստաթղթային լուծումների կողմնակից են, քանի որ այդպիսիք վստահություն են ներշնչում ոչ միայն գործարքի կողմերին, այլ և ակրեդիտիվով աշխատող ֆինանսական կառույցներին, ուստի և տվյալ

բնագավառում փոփոխությունները կատարելը առավել հստակություն ու կանխատեսելիություն է պահանջում: Այս տեսանկյունից ուսումնասիրվել են թղթային կոնոսամենտների գործառնությունները, հետազոտվել է էլեկտրոնային կոնոսամենտների կիրառությունը պրակտիկայում, վերանայվել ՀՀ օրենսդրությունը վեր հանելու, թե արդյոք առկա իրավակարգավորումները որքանով են ճկունություն ապահովում էլեկտրոնային կոնոսամենտների կիրառության համար ՀՀ-ում: Մեր օրենսդրությունը թեև նախատեսում է տիտղոսի ռեգիստրում հնարավորություն, սակայն այն փաստացի գոյություն չունի: Առաջարկվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում որպես գործունեության առանձին տեսակ նախատեսել տիտղոսի ռեգիստրների կողմից անվանական կամ օրդերային արժեթուղթ հանդիսացող տրանսպորտային փաստաթղթով հավաստված իրավունքների ամրագրման գործունեությունը, ինչպես նաև նախատեսել մի շարք կանոններ, որոնց առկայության դեպքում կարող են ստեղծվել ու արդյունավետ գործել տիտղոսի ռեգիստրներ: Տիտղոսի ռեգիստրում կատարված գրանցումը պետք է ունենա նույն իրավական ուժը, ինչ թղթային կոնոսամենտներով իրավունքի փոխանցման դեպքում և կխթանի էլեկտրոնային կոնոսամենտի կիրառությունը փոխադրումների ոլորտում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների տեսական նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է էլեկտրոնային առևտրի, գործարքների կնքման էլեկտրոնային ձևի ուսումնասիրությունը, էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքման կարգի, սպառողների իրավունքների պաշտպանությանը, էլեկտրոնային կոնոսամենտներին նվիրված առաջին համալիր աշխատանքը հայ իրավագիտության մեջ: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել քաղաքացիական իրավունք դասընթացի դասավանդման ժամանակ և հետագա գիտական հետազոտություններում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է պայմանագրերի կնքման ձևին, էլեկտրոնային միջավայրում

գործարքների կնքմանը, Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանը, սպառողների կողմից Էլեկտրոնային կնքված գործարքների կապակցությամբ նրանց իրավունքների պաշտպանության հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրությանը:

Հետազոտության արդյունքները և բացահայտված հիմնահարցերի լուծման առաջարկներն ու դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև և օգտագործվել են իրավաստեղծ գործունեության ժամանակ, ինչպես նաև կարող են նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների ներդրումն ու փորձարկումը:

Ատենախոսությանը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Ատենախոսությանը նույն արտացոլված եզրահանգումները, հիմնադրույթները և առաջարկությունները համամասնորեն արտացոլված են հրատարակված թվով 6 գիտական հոդվածներում, ներկայացվել են Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրի շրջանակներում 2015թ. մայիսի 8-9-ին կայացած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին հայեցակարգերի նախագծերի շուրջ» կլոր սեղան-քննարկմանը, ինչպես նաև ներառվել են ՀՀ արդարադատության նախարարությանը ներկայացված օրենսդրական փոփոխությունների կատարման առաջարկում: «Պաշտպանության ներկայացվող դրույթներ»-ի 5-րդ և 6-րդ կետերում արտացոլված առաջարկները ներառվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու օրենսդրական փաթեթում և 2016 թվականի հունիսի 17-ին ընդունվել ՀՀ Ազգային ժողովի կողմից որպես օրենք²:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկա-

² Տե՛ս թիվ ՀՕ-115-Ն օրենք, ընդունվել է 17.06.2016թ.-ին, ու ժի մեջ է 23.07.2016թ.-ից, ՀՀՊՏ 2001.08.02/25(157), ինչպես նաև թիվ ՀՕ-118-Ն օրենք, ընդունվել է 17.06.2016թ.-ին, ու ժի մեջ է 23.07.2016թ.-ից:

ցած է ներածությունից, 3 գլուխներից, որոնք ներառում են 6 պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ՃԼՈՎ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐՈՂ

§1.1. ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՃԼԱՎՈՐԴԱՆ և ԳԱՐԳԱՅՄԱՆ ԱՄՈՒՈՒԹՅՈՒՆՆԸ

Իր գարգացման ընթացքում հասարակությունն ընդլայնում է նոր երևույթների կանոնակարգման անհրաժեշտությունը, որը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված է գիտատեխնիկական գարգացմամբ: Դարաշրջանը, որում մենք ապրում ենք, հաճախ անվանում են էլեկտրոնային կամ տեղեկատվական: Տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների ներմուծումը հասարակական կյանք պայմանավորել է հասարակական հարաբերությունների նոր համալիրի առաջացումը, որն էլ պահանջում է հատուկ կարգավորում:

Թերևս քսաներորդ դարի ամենամեծ հայտնագործություններից է համացանցը: Այն բացել է նորանոր շուկաներ, արագացրել է գործարքների կնքումն ու կատարումը, իսկ որոշ ապրանքների առաքումը դարձրել է վայրկենական: Համակարգչային, հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաները փոխում են ինֆորմացիայի փոխանակման և գործարքների կատարման միջոցները՝ ազդելով տնտեսական և սոցիալական գործոնների վրա ամբողջ աշխարհում: Ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով աշխարհի ամենատարբեր անկյուններում գտնվող միլիոնավոր մարդիկ կարողանում են կապ հաստատել: Ինֆորմացիան տարածվում է ավելի արագ և ընդգրկում է այն տարածաշրջաններ:

Դարեր շարունակ արակտիկան հետևել է օրենքին, սակայն նոր հազարամյակում տեխնոլոգիական գարգացումն այնքան սրընթաց է, որ ականատես ենք լինում հակառակ երևույթին³: Համացանցը խթանում է էլեկտրոնային պայմանագրերի կնքումն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով՝ հնարավորություն է ընձեռելով գործարարներին նվազագույն ծախսերով արագ կապ հաստատելու մեծաքանակ սպառողների հետ: Համացանցի միջոցով

³ Տե՛ս *Yousaf Haroon Mujahid*, E-commerce and WTO, Digitalizing Trade Liberalization, Islamabad, 2003, էջ 2:

ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնող սուբյեկտները կարողանում են գովազդել, արտադրել կամ այլ կերպ իրականացնել իրենց գործառնությունները: Սպառողների տեսանկյունից համացանցը հնարավորություն է տալիս մրցակցության պայմաններում ընտրել այն վաճառողին և ծառայությունը, որն առավել ագույնս է համապատասխանում իրենց պահանջներին: Սկզբնական շրջանում համացանցը կիրառվում էր մարդկանց հաղորդակցության նպատակով հիմնականում էլեկտրոնային փոստերի միջոցով: Ծառայությունների ոլորտում համացանցն առավել ասես կիրառվում էր բանկերում: Համացանցային բանկինգն առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում 1990-ականների սկզբներին: Այն հնարավորություն էր ստեղծում բանկում ավանդներդնել, գումարներ փոխանցել, կատարել էլեկտրոնային վճարումներ, ստուգել իրենց քաղվածքները: Հիմնականում այդ ծառայություններն ավանդական են, որոնք առաջարկվում են նորմատուցման ճանապարհով, այն է՝ համացանցով⁴: Բանկերը դրանով նվազեցնում են իրենց օպերատիվ ծախսերը⁵: Էլեկտրոնային ձևով բանկային գործառնությունների վարումը թույլ է տալիս նաև նվազեցնել կուտակումները բանկերում և բանկումատների մոտ⁶:

Թեև իրավաբանական հետազոտություններում էլեկտրոնային պայմանագրերը (ընդհանուր առմամբ էլեկտրոնային առևտուրը) սկսել են ակտիվորեն քննարկվել, երբ ի հայտ է եկել համացանցը, սակայն գործարքներ կատարելու համար առաջին էլեկտրոնային համակարգերն ստեղծվել են դեռևս 20-րդ դարի 60-70-ականներին: 1960 թվականին American Airlines և IBM ընկերությունների կողմից ստեղծվեց չվերթները նախապես պատվիրելու ընթացակարգի ավտոմատացված համակարգ: 1960-ականների կեսերին հայտնվեցին պլաստիկ քարտերը, որոնցից Visa-ն և MasterCard-ը 20-րդ դարի 70-ականներից գրավեցին միջազգային շուկան: 1970-ականների կեսերին գործարքներ կատարելու համար սկսեցին օգտագործվել տվյալների

⁴ Տե՛ս **Radhakrishna G.**, Liability issues in Internet Banking in Malaysia. Communications of IBIMA., Volume 7, 2009, էջ 1:

⁵ Տե՛ս **Rusu R. F., Shen K. N.**. An Empirical Study on E-Banking Acceptance in the United Arab Emirates, Journal of Electronic Banking Systems, 2011, էջ 1:

⁶ Տե՛ս **Kasemsan M. L. K., Hunngam N.**. Internet Banking Security Guideline Model for Banking in Thailand. Communications of the IBIMA, 2011, էջ 1:

Էլեկտրոնային փոխանակման միջոցները (Electronic Data Interchange): 1977 թվականին տեղի ունեցավ Ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման առաջին միջազգային միջբանկային ցանցի բացումը՝ Ֆինանսական հեռահաղորդակցությունների համաշխարհային միջբանկային հասարակությունը (Society for Worldwide Interbank Financial Telecommunication, SWIFT)⁷: SWIFT-ը դարձավ առաջին մասնավոր-իրավական համաձայնությունը Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում:

Դեռևս 1960-ական թվականներից փորձ էր արվում մի շարք համակարգիչներ իրար կապել և դրանցով տեղեկություն փոխանցել ու փոխանակել: Համակարգիչները կապող ամենավաղ ցանցերից էր ARPANET-ը, որը տեղադրվել էր 1969 թվականին Ամերիկայի պաշտպանության նախարարության առաջավոր հետազոտությունների ծրագրերի գործակալության կողմից: Այն կազմակերպվել էր միավորել ու 4 համակարգիչներ ԱՄՆ-ի տարբեր շրջաններից: Առաջին տասնամյակի ընթացքում այն հիմնականում օգտագործվում էր Էլեկտրոնային նամակներ ուղարկել ու նպատակով և հնարավորություն էր ստեղծում կառավարության և համալսարանների, գործակալությունների ու ընկերությունների հետ տվյալների փոխանակման համար⁸: Հետագայում ARPANET-ի միացումներն օգտագործվում էին որպես անկյունաքար այլ ցանցերի միացման համար: Ըստ որոշ հեղինակների՝ հենց ARPANET-ն էլ արդյունքում դարձավ պարտադիր հաղորդակարգ համացանցի համար: Ուստի համացանցի ծննդյան օրը նդունված է համարել 1983թ. հունվարի մեկը, երբ ամերիկյան ARPANET գիտական հեռահաղորդակցության ցանցն անցավ տվյալների փոխանակման TCP/IP համակարգին: Այլ հեղինակներ պնդում են, որ համացանցի ստեղծման հիմքը հանդիսանում է NSFNET-ը: 1986 թվականին Ազգային գիտությունների հիմնադրամը (National Science Foundation) միավորեց Ամերիկայի վեց համակարգչային հզոր կենտրոնները և ստեղծեց իր

⁷ SWIFT-ը միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որը ստեղծվել է 1973թ. -ին Բրյուսելում Ամերիկայի և Արևմտյան Եվրոպայի 15 երկրների 239 բանկերի ներկայացուցիչների կողմից: Այն ինֆորմացիայի փոխանցման և վճարումների իրականացման միջազգային միջբանկային համակարգ է:

Տե՛ս http://www.swift.com/about_swift/company_information/swift_history.page?lang=en:

⁸ Տե՛ս *Bacchetta M., Low P., Mattoo A., Schuknecht L., Wagerand H., Wehrens M.*, Electronic Commerce and The Role of The WTO, Geneva, 1998, էջ 10:

ցանցը՝ NSFNET-ը: Այն նույնպես միացած էր ARPANET-ին, հետևաբար օգտագործում էր TCP/IP: Այն ֆինանսավորվում էր ԱՄՆ կառավարության կողմից և արդյունքում փոխարինեց ARPANET-ին⁹: Փաստորեն, NSFNET-ը ցանցերի ցանց էր սկզբնապես միայն ԱՄՆ համալսարանների, սակայն հետագայում նաև ակադեմիական այլ ինստիտուտների համար, իսկ ավելի ուշ նաև գործարարների և այլ օգտագործողների համար: Արդեն 1996 թվականին համացանցին միացել էին ավելի քան 13 մլն համակարգիչներ, ընդ որում՝ եթե ի սկզբանե ARPANET-ն ու NSFNET-ը նախատեսված էին գուտակադեմիական հետազոտությունների համար, ապա համացանցը լցվեց թե՛ մասնավոր անձանցով, թե՛ առևտրային կազմակերպություններով¹⁰: Հարկ է ընդգծել, որ էլեկտրոնային պայմանագրերը լայն տարածում են ստացել միայն համացանցի ստեղծումից հետո, քանի որ հենց այդ ժամանակվանից տվյալների էլեկտրոնային փոխանակումը դարձավ հասանելի մարդկության զգալի հատվածի համար:

Համացանցը համակարգչային ցանց է: Հենց «ինտերնետ» բառն ինքնին նշանակում է միջցանցային: Համակարգչային ցանցը էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և սարքերի համակցություն է՝ կապված մեկ միասնական համակարգում կամ համակարգերի համալիրում որոշակի ծրագրերի օգնությամբ: Վերջիններս նախատեսված են թվայնացված ինֆորմացիայի փոխանցման, ստացման կամ մշակման համար: Համացանցը կարող է պահել մեծաքանակ ինֆորմացիոն աղբյուրներ, այն չունի հրատարակողներ և խմբագրողներ, որոնք կհսկեին տեղեկատվության տեղաբաշխումը: Ամեն մարդ ինքն է հանդես գալիս որպես լրագրող, արտադրող և սպառող: Այլ խոսքերով՝ համացանցում հիմնական հաղորդակցվողը հենց անհատն է¹¹:

Համացանցը ֆիզիկական օբյեկտ չէ, այն շոշափելի չէ, բաղկացած է մի շարք ցանցային հաղորդակարգերից, որոնք և թույլ են տալիս ինֆորմացիայի փոխանցումը միմյանց միջև: Չնայած այն

⁹ Տե՛ս **Todd P.**, E-Commerce Law, Routledge-Cavendish, New York, 2007, էջ 7:

¹⁰ Տե՛ս **Козье Д.**. Электронная коммерция. Москва, 1999, 22-23 էջեր:

¹¹ Տե՛ս **Blumenthal v. Drudge and American Online, Inc.**, http://epic.org/free_speech/blumenthal_v_drudge.html:

չունի ֆիզիկական գոյություն՝ բացի այն համակարգիչներից, որոնց վրա հիմնվում է, այդուհանդերձ, այն շարունակում է մնալ իրական, քանի որ վիրտուալ աշխարհում տեղի ունեցած ինֆորմացիայի փոխանակումը ունենում է իրական հետևանքներ¹²:

Համացանցը չունի իրավասուբյեկտություն, քանի որ չի համապատասխանում իրավաբանական անձին բնորոշ հատկանիշներին: Այն չունի կազմակերպական միասնություն, սեփական առանձնացված գույք, քանի որ նրանում օգտագործվող նյութական և տեղեկատվական ռեսուրսները սեփականության իրավունքով պատկանում են տարբեր սուբյեկտների: Համացանցը չի կարող ունենալ իրավունքներ և կրել պարտականություններ, քանի որ դրանով աշխատելիս ծագող յուրաքանչյուր իրավահարաբերության հետևում կանգնած է իրավունքի որևէ սուբյեկտ:

Համացանցը երբեմն քննարկվում է որպես իրավունքի օբյեկտ, որին ուղղված են տարբեր հարաբերությունների սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները: Տանցը բաղկացած է համակարգիչներից և այլ տեխնիկական սարքերից, կապի միջոցներից, ինչպես նաև ծրագրային ապահովումից: Տանցի միջոցով փոխանցվում է միայն ինֆորմացիան: Թե՛ տեխնիկական սարքերը, թե՛ կապի միջոցները, թե՛ համակարգիչներն ու ցանցի միջոցով փոխանցվող տեղեկատվությունն առանձին իրավահարաբերությունների օբյեկտ են: Դրանք համակցության մեջ չեն կարող դիտվել որպես մեկ բարդ օբյեկտ: Ուստի համացանցը չի կարող համարվել նաև իրավունքի օբյեկտ, քանի որ ցանցը պարզապես մի գործիք է, որի օգնությամբ համապատասխան հարաբերությունների սուբյեկտների միջև հաստատվում է հաղորդագրություն:

Տանցերի մասսայական տարածումն ամբողջ աշխարհով մեկ պահանջեց այնպիսի միջոցի ստեղծում, որը յուրաքանչյուր օգտագործողի թույլ կտար գտնել և կարդալ փաստաթղթեր, որոնք տեղադրված են սերվերներում: Տեղեկատվական ծառայությունների այդ նոր տեսակը մշակվեց 1994 թվականին և դարձավ հայտնի համաշխարհային սարդոստայն անվանումով (World Wide Web, www): Այն

¹² Տե՛ս **Zekos G. I.** State Cyberspace Jurisdiction and Personal Cyberspace Jurisdiction, International Journal of Law and Information Technology, Volume 15, Oxford University Press, 2005, 2-3 էջեր:

փաստաթղթերի ապակենտրոնացված ընդարձակ հավաքածու է, որը ներառում է տեքստեր, վիզուալ նկարներ և անգամ ձայնագրություններ¹³: WWW-ն կարող է աշխատել միայն այն դեպքում, երբ դրան միացած բոլոր համակարգիչներն ունեն իրենց հաղորդակարգի հասցեն: Մինչև www-ի ստեղծումը էլեկտրոնային պայմանագրերը կնքվում էին հիմնականում ընկերությունների միջև: Խնդիրն այն էր, որ կողմերը պետք է պայմանավորվածություն ձեռք բերեին ոչ միայն պայմանագրի կետերի շուրջ, այլև այն հաղորդակարգերի, որոնցով հաղորդակցվելու էին: Մինչդեռ www-ն հնարավորություն է ընձեռեց օգտագործելու համացանցում ամրագրված հաղորդակարգեր, որոնք ունիվերսալ են, ուստիև կոնտրագենտներն այլևս չեն անդրադառնում հաղորդակարգերի խնդրին: Միակ անհրաժեշտությունն այն է, որ նրանք հավաստիանան, որ իրենց համակարգիչը միացած է ցանցին: Յետևաբար էլեկտրոնային պայմանագրերը, որոնք կնքվում են ֆիզիկական անձված առողների և սպառողների կամ ընկերությունների և սպառողների միջև, ունեն մոտ 20 տարվա պատմություն¹⁴:

Ցանցը «տեղաբաշխված» բնույթ ունի, ոչ աստիճանակարգային: Այն «ներքևից վերև» և ոչ թե «վերևից ներքև» է կառավարվում, չունի արտադրության որևէ կենտրոնացված կետեր¹⁵: Թեև համացանցն ու www-ն անկառավարելի են, սակայն հսկողությունն սահմանելու փորձ միշտ էր կենտրոնում կատարվել է: Օրինակ՝ Մինգապուրը փորձել է կանխել իր քաղաքացիների մուտքն այնպիսի կայքեր, որոնք պարունակում են բռնության կամ պոռնոգրաֆիայի վերաբերյալ նյութեր: Մինգապուրի համացանց օգտագործողները պարտավոր են իրենց ծրագրային ապահովումը (software) կարգավորել այնպես, որ համաշխարհային համակարգչային ցանցից տեղեկատվություն խնդրելիս միանան կառավարության կողմից հսկվող համակարգիչներին: Դա չանելը հանգեցնում է տուգանքների: Այդ հզոր համակարգիչ-սերվերները ստուգում են բոլոր հարցվող կայքերը, և եթե կայքը կառավարության կողմից

¹³ Տե՛ս **Dickie J.**, Producers and Consumers in EU E-Commerce Law, Hart Publishing, Oxford and Portland, Oregon, 2005, էջ 7:

¹⁴ Տե՛ս **Todd P.**, նշված աշխատությունը, էջ 10:

¹⁵ Տե՛ս **Dickie J.**, նշված աշխատությունը, էջ 3:

արգելված կայքերի ցանկում ներառված է, ապաստարանները արգելում է մուտքը¹⁶: Չինաստանում ևս հսկողություն է իրականացվում երկու հազարից ավելի կայքերի նկատմամբ, իսկ այնպիսի կայքերը, ինչպիսիք են Facebook-ն ու Twitter-ը, արգելափակված են¹⁷:

WWW-ի միջոցով որակապես փոխվեցին էլեկտրոնային պայմանագրերի սուբյեկտներն ու ոլորտները: Ցանցը սպառողի հետ հաղորդակցության արդյունավետ միջոց է¹⁸: Եթե սկզբնական շրջանում էլեկտրոնային պայմանագրերը կնքվում էին միայն առուվաճառքի ոլորտում և հիմնականում կորպորացիաների, բանկերի միջև, ապա համացանցի գործածության արդյունքում ներկայումս էլեկտրոնային պայմանագրեր են կնքվում նաև սպառողների հետ¹⁹: Արտադրողները հաճախ ստեղծում են իրենց ապրանքների կատալոգներ, դրանց միջոցով նրանք տեղեկանում են, թե գնորդները ինչպիսի ապրանքներով են հետաքրքրվում: Հաճախ կայքերում տրվում են հարցումներ, որոնց հիման վրա և վիճակագրություն է անցկացվում վաճառվող ապրանքների մասին: Ավելի, վաճառողները հաճախ սպառողների էլեկտրոնային հասցեներին ուղարկում են ապրանքի թարմացման մասին տեղեկություններ²⁰:

Այսպիսով, համացանցի և ցանցի ստեղծումը մեծապես խթան հանդիսացավ էլեկտրոնային առևտրի և էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքման համար:

Իրավագետները տարբերում են էլեկտրոնային պայմանագրերի երկու տեսակ.

1. նյութական ապրանքների պատվերներ, որոնք պետք է հասցվեն ավանդական եղանակներով, ինչպիսիք են փոստային առաքումները (անուղղակի էլեկտրոնային առևտուր, որը կախված է արտաքին գործոններից).
2. ոչ նյութական ապրանքների և ծառայությունների պատվեր

¹⁶ Տե՛ս **Todd P.**, նշված աշխատությունը, էջ 15:

¹⁷ Տե՛ս China lifts ban on Facebook - but only for people living in a 17 square mile area of Shanghai, <http://www.dailymail.co.uk/sciencetech/article-2431861/China-lifts-ban-Facebook--people-living-working-small-area-Shanghai.html>

¹⁸ Տե՛ս **Todd P.**, նշված աշխատությունը, էջ 6:

¹⁹ Տե՛ս **Козье Д.**, նշված աշխատությունը, էջ 2:

²⁰ Տե՛ս **Козье Д.**, նշված աշխատությունը, էջ 12:

(օր.՝ համակարգչային ծրագրերը, Էլեկտրոնային ամսագրերը, տեղեկատվական ծառայությունները), վճարում և առաքում (ուղղակի Էլեկտրոնային առևտուր)²¹:

Օրինակ՝ ebay.com կայքում գրքի ձեռքբերումը չի համարվում մաքուր (ուղղակի) Էլեկտրոնային առևտուր, քանի որ գիրքը հասցվում է գնորդին ավանդական ճանապարհով, մինչդեռ ծրագրային ապահովում ձեռք բերելու դեպքում տեղի է ունենում մաքուր Էլեկտրոնային առևտուր:

Այսինքն՝ մաքուր (ուղղակի) Էլեկտրոնային պայմանագրի դեպքում ցանցում ոչ միայն կնքվում է գործարքը, այլև իրացվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Խառը (անուղղակի) Էլեկտրոնային պայմանագիրը ենթադրում է, որ համացանցի միջոցով ծագած հարաբերություններից բխող իրավունքներից օգտվելն ու պարտականությունները կատարելը տեղի է ունենում ավանդական միջոցով: Ընդ որում, թեև Էլեկտրոնային պայմանագրերի գերակշիռ մասն անուղղակի են, ուղղակի Էլեկտրոնային առևտուրը շարունակ զարգանում է, և օրեցօր առաջարկվում են նորանոր ծառայություններ և ապրանքներ, որոնց հետ կապված պայմանագրերը կնքվում և կատարվում են միայն համացանցով:

Էլեկտրոնային պայմանագրերը հնարավոր է տարբերակել նաև՝ կախված պայմանագրի կողմ հանդիսացող մասնակիցներից: Էլեկտրոնային շուկան ներառում է տարբեր տնտեսական մասնակիցներ՝ արտադրողներ, վաճառողներ, սպառողներ, և ոգիստիկայով զբաղվող ընկերություններ, որոնք հավաքում և տեղաբաշխում են վիրտուալ խանութների ապրանքները: Էլեկտրոնային բիզնեսի առաջացմամբ կարող ենք դասակարգել ընկերությունների երեք տեսակ՝

1. ավանդական, որոնք գործում են միայն ֆիզիկական շուկայում.
2. խառը, որոնք իրենց գործունեության մի մասն իրականացնում են համացանցով.

²¹ Տե՛ս **Hernandez J.L.M., Portela M.J.I.**, M-commerce: contract law, electronic payment and consumer protection, էջ 47:

3. Էլեկտրոնային, որոնք գործում են միայն համացանցում²²:

Մասնակիցներից ելնելով՝ Էլեկտրոնային պայմանագրերը լինում են մի քանի տեսակ.

1. B2B (Business to Business) - թե՛ վաճառողը, թե՛ գնորդը առևտրային կազմակերպություններ են.
2. B2C (Business to Customer) - վաճառողն առևտրային կազմակերպություն է, իսկ սպառողը՝ մասնավոր անձ: Այս մոդելների թվին են դասվում Էլեկտրոնային խանութները.
3. C2C (Customer to Customer) – ինչպես վաճառողը, այնպես էլ գնորդը սպառողներ են: Այս դեպքում անձը, չհետապնդելով պարբերաբար շահույթ ստանալու նպատակ, ցանկանում է վաճառել իր սեփականությունը հանդիսացող որևէ գույք.
4. C2B (Customer to Business) – ապրանքի կամ ծառայություն վաճառողը մասնավոր անձ է, իսկ գնորդը՝ առևտրային կազմակերպություն.
5. B2G (Գործարարություն և կառավարություն), C2G (Սպառող և կառավարություն) և հակառակը, ինչպես նաև G2G (կառավարություն և կառավարություն):

Քանի որ սկզբում մասնավոր ցանցերը հիմնականում հասանելի էին կորպորացիաներին, Էլեկտրոնային պայմանագրերը կնքվում էին առավել ասես B2B մակարդակով, սակայն հետագայում Էլեկտրոնային առևտուրը վերափոխվեց B2C-ի, C2C-ի, G2C-ի²³:

Թեև համացանցը միջավայր ստեղծեց և միջոց հանդիսացավ Էլեկտրոնային պայմանագրերի կնքման, իսկ երբեմն էլ կատարման համար, սակայն Էլեկտրոնային պայմանագրերի հետագա զարգացման հիմքում դրվեցին հիմնականում սպառողների սպասելիքները և արտադրողների ու վաճառողների նորարարական մոտեցումները: Այսպես՝ Էլեկտրոնային պայմանագրերի հետագա զարգացումը ապահովեց «գնումներ սայլակում» կոճակը, որը հնարավորություն տվեց օգտագործողին ոչ թե ընտրել և գնել մեկ ապրանք, ինչպես նախկինում էր, այլ ընտրել ու պահպանել մի շարք ապրանքներ և միայն վերջում կատարել վճարում: Էլեկտրոնային պայմանագրերի

²² Տե՛ս *Сибирская Е.В., Старцева О.А.*. Электронная коммерция, Москва, 2008, էջ 5:

²³ Տե՛ս *Yousaf Haroon Mujahid*, նշված աշխատությունը, էջ 4: Տե՛ս նաև *Е.В. Сибирская, О. А. Старцева*, նշված աշխատությունը, էջ 7:

գարգացման հաջորդ փուլն այն էր, որ հնարավորություն ընձեռվեց սպառողին ստուգել, թե կոնկրետ որտեղ է գտնվում իր ապրանքը: Օրինակ՝ այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են Federal Express-ը, United Parcel Service-ը, American President Lines-ը և այլք, հնարավորություն են տալիս ստուգել ապրանքի առաքումը համացանցային կայքի միջոցով²⁴:

Էլեկտրոնային պայմանագրերի պատմական գարգացման հաջորդ փուլը դրանց կիրառումն էր պետական մարմինների հետ գործառնություններում: Pew կենտրոնի կողմից անցկացված հետազոտության արդյունքների համաձայն՝ հարցվածների 44 %-ը նախընտրել էր պետական մարմինների ծառայություններից օգտվել օնլայն կարգով, մինչդեռ կառավարությունների միայն 5-7%-ն է այդպիսի հնարավորություն ընձեռում: Հարկ է ընդգծել, որ հարցման մասնակցած անձանց մեծամասնությունը նախընտրել էր տարբեր լիցենզիաների, վճարումների համար օգտագործել էլեկտրոնային միջոցները: Ըստ կանխատեսումների, եթե կառավարություններն այդպիսի հնարավորություն ընձեռեն, ապա սպառողները կնախընտրեն էլեկտրոնային միջոցներով գործառնությունների իրականացումը, քանի որ նրանք արդեն իսկ վարժվել են գործ ունենալ amazon.com, e-bay ու նմանատիպ այլ կայքերի հետ²⁵:

Էլեկտրոնային պայմանագրերը կնքվում են գործունեության ամենատարբեր ոլորտներում: Գործունեության հիմնական ոլորտների թվին են դասվում էլեկտրոնային մարկետինգը, էլեկտրոնային խանութների ստեղծման ֆինանսավորումը, ինչպես նաև դրանց ապահովագրությունը, առևտրային գործարքները, որոնք ներառում են ապրանքի պատվերը, առաքումը և վճարումը, մի քանի ընկերությունների կողմից նոր ապրանքների համատեղ մշակումը, բիզնեսի կազմակերպումը (հարկեր, մաքսատուրքեր և այլն), հաշվապահական հաշվառումը և այլն: Էլեկտրոնային առևտուրը սպառողներին հասանելի ապրանքներն ու ծառայությունները բազմառեսակ է դարձնում, այն ընդարձակում է ներկա շուկաները,

²⁴ Տե՛ս *Козье Д.*, նշված աշխատությունը, էջ 16:

²⁵ Տե՛ս *Rocheleau B., Wu L.*, E-Government and Financial Transactions: Potential Versus Reality. The Electronic Journal of e-Government, 2005, էջ 219:

ստեղծում նոր շուկաներ²⁶: Վերջին տարիներին օնլայն (առցանց) սոցիալական ցանցերի առաջացումը հսկայական ազդեցություն է գործել ընկերությունների էլեկտրոնային մարկետինգի վարման մեթոդների վրա: Ընկերությունները սոցիալական ցանցերի միջոցով նոր հաճախորդների են ներգրավում, կարողանում են գտնել նորանոր կոնտրագենտների, գովազդում են իրենց ապրանքանիշը (բրենդը), վարում են շուկայի հետազոտություն²⁷: Օրինակ` LinkedIn-ը գանձում է 10 դոլար յուրաքանչյուր օր իր կայքում տեղադրված գովազդի համար²⁸: Հաճախ ընկերությունները հանրության համար կարևորություն են ներկայացնող ապրանքը վաճառում են անվճար, իսկ դրա վրա կատարվող հետազարել ավումները` բարձր գնով: Օրինակ` Մայքրոսոֆթը Internet Explorer-ը օգտագործման է հանձնում անվճար, սակայն դրա հետազարել ավումները վաճառում է բարձր գնով: Այս քաղաքականությունը թույլ է տալիս սեղմ ժամկետներում ձեռք բերել հաճախորդներ, որոնք էլ հետագայում ձեռք կբերեն տվյալ ընկերության այլ արտադրանք:

Թեև համացանցով գործարքները սկսեցին կնքվել և կատարվել շատ ավելի վաղ, քան տրված էր դրանց իրավական կարգավորումը, սակայն էլեկտրոնային պայմանագրերի զարգացման գործում մեծ դեր խաղացին էլեկտրոնային առևտրի կարգավորման կապակցությամբ տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից ձեռնարկված քայլերը:

Էլեկտրոնային առևտրի ոլորտում ընդունված առաջին ակտը 1987թ. ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովում հրատարակված «Կառավարման մեջ, առևտրում և տրանսպորտում տվյալների էլեկտրոնային փոխանցման» փաստաթղթի առաջին հրատարակությունն էր` UN/EDIFACT-ը, որն էլ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ առևտրային գործունեության վարումը կարգավորող առաջին միջազգային ստանդարտն է²⁹:

²⁶ Տե՛ս *Dickie J.*, նշված աշխատությունը, էջ 6:

²⁷ Տե՛ս *Bolotaeva V., Cata T.*, Marketing Opportunities with Social Networks. Journal of Internet Social Networking and Virtual Communities, 2010, էջ 1:

²⁸ Տե՛ս LinkedIn's advertising cost, [https://help.linkedin.com/app/answers/detail/a_id/7431/~linkedin-ads-campaign-pricing---overview](https://help.linkedin.com/app/answers/detail/a_id/7431/~/linkedin-ads-campaign-pricing---overview)

²⁹ Տե՛ս *Зажигалкин А. В.*, Международно-правовое регулирование электронной коммерции, Санкт-

1996թ. ՄԱԿՄԱԻՅ-ը մշակեց «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենք: Նշված օրենքը գործածության մեջ դնելու ուղեցույցում աշխատանքային խումբը նշել է, որ Էլեկտրոնային հաղորդակցության միջոցների կիրառումը միջազգային առևտրային գործարքներում արագորեն ընդլայնվում է, մինչդեռ դրա զարգացմանը կարող են խոչընդոտել միջարք իրավական խնդիրներ: Նմուշային օրենքի նպատակը ազգային օրենսդիրներին միջազգայնորեն ընդունված միջարք կանոններ առաջարկելն է, թե ինչպես այդ խոչընդոտները կարող են վերացվել, և ինչպես կարելի է ստեղծել ավելի ապահով իրավական միջավայր Էլեկտրոնային առևտրի համար³⁰: Նմուշային օրենքի մշակման որոշումը պայմանավորված էր նրանով, որ միջարք երկրներում Էլեկտրոնային հաղորդակցության և ինֆորմացիայի կուտակման և պահպանման իրավական կարգավորումը բացակայում էր կամ համահունչ չէր պրակտիկ զարգացումներին, ինչն էլ հանգեցնում էր իրավական բնույթի միջարք անորոշությունների:

Թեև նմուշային օրենքով տրված չէ Էլեկտրոնային առևտրի հասկացությունը, սակայն դրա 2-րդ հոդվածում տրվել է Էլեկտրոնային տվյալների փոխանակման հասկացությունը, և աշխատանքային խումբը նշել է, որ Էլեկտրոնային տվյալների փոխանակման միջոցով կատարվող ամենատարբեր գործարքները պետք է ընդգրկվեն այդ հասկացության մեջ³¹: Նմուշային օրենքի ընդունումը նաև պայմանավորված էր նրանով, որ օրենքը պետք է լիներ ուղեցույց միջազգային կոնվենցիաներ մեկնաբանելիս, ինչպես նաև կողմերի միջև Էլեկտրոնային միջոցներով պայմանագրեր կնքելիս:

Ուղեցույց լինելով հանդերձ՝ նմուշային օրենքը չի տալիս Էլեկտրոնային պայմանագրերին վերաբերող բոլոր կարգավորումները, որոնք կարող են անհրաժեշտ լինել պետությունների կողմից այդ մեթոդների կիրառման համար: Ինչպես աշխատանքային խումբն է նշել, պետություններն իրենք

Петербур, 2005, էջ 21: Տե՛ս նաև <http://www.unece.org/trade/untidd/welcome.html>:

³⁰ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment 1996 with additional article 5 bis as adopted in 1998, United Nations Publications, New York, 1999, էջ 16:

³¹ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce, նշված աշխատանքությունը, 17-18 էջեր:

պետք է լրացուցիչ կարգավորումներ առաջարկեն ընթացակարգային խնդիրների լուծման համար, ընդ որում՝ նրանք պետք է ձգտեն պահպանել նմուշային օրենքում տրված դրույթների ճկունությունը³²:

Էլեկտրոնային առևտրի հետ կապված հարցերի և լուծման տարբերակների վերհանման խնդիրը դրված է ՄԱԿՄԱԻՅ-ի աշխատանքային 4-րդ խմբի վրա: 2001 թվականին ՄԱԿՄԱԻՅ-ի կողմից մշակվեց «Էլեկտրոնային ստորագրությունների մասին» նմուշային օրենքը, 2011 թվականից աշխատանքային խմբի կողմից մշակվում է «Էլեկտրոնային փոխանցելի տվյալների վերաբերյալ իրավական հարցեր» փաստաթուղթը: Նմանապես 2012 թվականից մշակման փուլի մեջ է գտնվում «Նույնականացման վերաբերյալ իրավական հարցեր» փաստաթուղթը³³: Ընդ որում՝ ՄԱԿՄԱԻՅ-ի երրորդ աշխատանքային խումբը զբաղվում է օնլայն վեճերի լուծման մեխանիզմների մշակմամբ և այդ կապակցությամբ դեռևս 2010 թվականից պատրաստվում են «Օնլայն վեճերի լուծումը միջսահմանային էլեկտրոնային առևտրի գործարքների համար. ընթացակարգային կանոնները»³⁴: Հավելենք նաև, որ դեռևս 2005 թվականին Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվել է «Միջազգային պայմանագրերում էլեկտրոնային հաղորդակցության կիրառման մասին» կոնվենցիա (այսուհետ՝ ՄԱԿ-ի կոնվենցիա), որով սահմանվեցին պայմանագրերի կնքման նպատակով էլեկտրոնային հաղորդագրությունների կիրառման դեպքում կողմերի գտնվելու վայրը, էլեկտրոնային հաղորդագրությունների իրավաբանական ուժի ճանաչումը, այդպիսի հաղորդագրությանը ներկայացվող ձևական պահանջները, էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկման և ստացման տեղն ու ժամանակը և այլն: Վերոնշյալ կոնվենցիային ՀՀ-ն դեռևս չի միացել:

Էլեկտրոնային առևտրի ոլորտին և էլեկտրոնային պայմանագրերին անդրադարձ է կատարվել նաև Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՅԿ) Էլեկտրոնային

³² Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce, նշված աշխատությունը, էջ 19:

³³ Տե՛ս UNCITRAL, Working group IV, Electronic commerce
http://www.uncitral.org/uncitral/ru/commission/working_groups/4Electronic_Commerce.html:

³⁴ Տե՛ս UNCITRAL, Working group III, Online Dispute Resolution
http://www.uncitral.org/uncitral/commission/working_groups/3Online_Dispute_Resolution.html:

առևտրի աշխատանքային ծրագրում, որն ընդունվել է ԱՅԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1998 թվականի սեպտեմբերի 25-ին³⁵: Այդուհետև ԱՅԿ-ի կողմից անցկացվել են տարեկան սեմինարներ ու վերապատրաստումներ զարգացող երկրներում էլեկտրոնային առևտրի խթանման ուղղությամբ: Ընդ որում, ինչպես ԱՅԿ-ի աշխատանքային խումբն է նշել, էլեկտրոնային առևտուրն ու համացանցային տեխնոլոգիաները ձևավորում են ապագայի տնտեսությանը, որտեղ ֆիզիկական սահմանները վերանում են, և վիրտուալ իրականություն է առաջանում, որտեղ ներմուծման և արտահանման անհրաժեշտությունը վերանում է, ուստիև ԱՅԿ կանոնները գրոյանում են³⁶: ԱՅԿ-ն էլեկտրոնային առևտուրը բաժանում է երեք փուլերի՝ գովազդի և փնտրման փուլի, պատվիրման ու վճարման փուլի, առաքման փուլի: Այս բոլոր փուլերը կամ գոնե դրանցից մեկը կարող են իրականացվել էլեկտրոնային միջոցներով³⁷: *Էլեկտրոնային պայմանագրերի զարգացմանն ու տարածմանը չխոչընդոտելու նպատակով ԱՅԿ-ն որոշել է մաքսատուրքեր չգանձել էլեկտրոնային գործարքների իրականացման համար: Սակայն այդ որոշումը վերաբերում է միայն այն գործարքներին, որոնցով իրավունքների և պարտականությունների իրացումը կատարվում է էլեկտրոնային միջոցներով, մինչդեռ այն ապրանքների նկատմամբ, որոնք պատվիրվում են օնլայն, սակայն առաքվում ավանդական ճանապարհով, մաքսատուրքերը կիրառելի են*³⁸:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD) 1998 թվականին Օտտավայում կազմակերպեց և անցկացրեց կոնֆերանս «Առանց սահմանների աշխարհ. գլոբալ էլեկտրոնային առևտրի պոտենցիալի գիտակցումը» խորագրով: Կոնֆերանսի արդյունքում մասնակից կառավարությունների կողմից ստորագրված

³⁵ Տե՛ս World Trade Organization, Work programme on electronic commerce, http://www.wto.org/english/tratop_e/ecom_e/wkprog_e.htm:
³⁶ Տե՛ս **Yousaf Haroon Mujahid**, նշված աշխատությունը, էջ 1:
³⁷ Տե՛ս **Malkawi B.**, E-Commerce in Light of International Trade Agreements: The WTO and the United States-Jordan Free Trade Agreement, International Journal of Law and Information Technology, Oxford University Press, 2006, 153-154 էջեր:
³⁸ Տե՛ս **Mattoo A., Schuknecht L.**, Trade Policies for Electronic Commerce, The World Bank Development Research Group, 2000, էջ 3:

հայ տարարություններով պետությունները հաստատեցին իրենց պարտականությունները՝ ապահովել գլոբալ ցանցերի օգտագործման կապակցությամբ օգտատերերի իրավունքների պաշտպանությունը, կանխել անհարկի սահմանափակումները միջսահմանային տվյալների փոխանցման դեպքում, ապահովել սպառողների մասնակցությունը էլեկտրոնային առևտրին և մշակել նրանց իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներ, քայլեր ձեռնարկել օգտագործողներին կրթելու համար: Կառավարությունները նաև պարտավորվեցին ոչ խտրական վերաբերմունք դրսևորել էլեկտրոնային նույնականության վերաբերյալ, խրախուսել առևտենտիկության (նույնականացման) մեխանիզմների մշակման ջանքերը, կատարել համապատասխան փոփոխություններ իրենց օրենքներում՝ հիմք ընդունելով ՄԱԿՄԱԻՅ-ի կողմից մշակված «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքի համապատասխան դրույթները³⁹: 1999 թվականին Փարիզում կայացած էլեկտրոնային առևտրի վերաբերյալ ֆորումում քննարկվեց Կորեայի կողմից ներկայացված «Էլեկտրոնային գործարքների և թվային ստորագրության մասին ակտը», ինչպես նաև «Էլեկտրոնային առևտրի բնորոշման և չափման մասին» զեկույցը, որում տրվեց էլեկտրոնային առևտրի հասկացությունը: 2009 թվականին կազմակերպությունը հերթական կոնֆերանս անցկացրեց այս անգամ էլեկտրոնային առևտրով զբաղվող սպառողների իրավունքների և նրանց պաշտպանությունն ամրապնդող միջոցներին նվիրված⁴⁰:

Էլեկտրոնային առևտրի ոլորտում ընդունված ունիվերսալ ակտերի հետ մեկտեղ ընդունվել են նաև տարածաշրջանային ակտեր: Օրինակ՝ Եվրոպական Միությունում (այսուհետ՝ ԵՄ) ընդունվել են մի շարք ակտեր, որոնցից առավել կարևոր են հետևյալ կանոնակարգումները՝ «Ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար էլեկտրոնային նույնականացման և հավատարմագրային ծառայությունների վերաբերյալ» ԵՄ 910/2014 կանոնակարգը, «Տեղեկատվական հասարակությանը

³⁹ Տե՛ս OECD Ministerial Conference, "A Borderless World: Realising The Potential of Global Electronic Commerce", Conference Conclusions, Ottawa, 1998, 14, 17, 19 էջեր:

⁴⁰ Տե՛ս Defining and measuring e-commerce, status report, <http://www.oecd.org/dataoecd/12/55/2092477.pdf>:

ծառայությունների, մասնավորապես ներքին շուկայում
Էլեկտրոնային առևտրի մի շարք իրավական ասպեկտների մասին
(«Էլեկտրոնային առևտրի մասին» դիրեկտիվ)» 2000/31/EC,
«Ֆինանսական ծառայությունների վերաբերյալ» 2002/65/EC⁴¹,
«Սպառողների իրավունքների վերաբերյալ» 2011/83/EU⁴²:

Հարկ է ընդգծել, որ պետություններից այս ոլորտն
առավելապես կարգավորել է ԱՄՆ-ը: Առաջին հերթին հայտնի են
«Գլոբալ և ազգային առևտրում Էլեկտրոնային
ստորագրությունների մասին» (Electronic Signatures in Global and National
Commerce Act)⁴³ և «Էլեկտրոնային գործարքների մասին» օրենքները
(Uniform Electronic Transactions Act, UETA): Մեծ Բրիտանիայում
Էլեկտրոնային առևտրի կարգավորման ուղղությամբ ներպետական
իրավական ակտեր առայժմ չեն ընդունվել:

ՌԴ-ում Էլեկտրոնային առևտրի բնագավառում ընդունվել են
երկու դաշնային օրենքներ՝ «Էլեկտրոնային առևտրի մասին»⁴⁴, որով
տրվում է Էլեկտրոնային առևտրի հասկացությունը, և
«Էլեկտրոնային թվային ստորագրության մասին»⁴⁵, սակայն 2011
թվականին օրենքն էական փոփոխությունների է ենթարկվել և այժմ
օրենքի վերտառությունն է «Էլեկտրոնային ստորագրության
մասին» ՌԴ օրենք⁴⁶:

*Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ՀՀ-ում տվյալների
Էլեկտրոնային փոխանակման բնագավառում ընդունվել են
«Էլեկտրոնային փաստաթղթի և Էլեկտրոնային թվային
ստորագրության մասին» (2004թ., դեկտեմբերի 14) և «Էլեկտրոնային
հաղորդակցության մասին» (2005թ., հունիսի 8) ՀՀ օրենքները: 2016թ.
հունիսին փոփոխություններ կատարվեցին ինչպես ՀՀ*

⁴¹ Տե՛ս Directive 2002/65/EC of the European Parliament and of the Council of 23 September 2002 concerning the distance marketing of consumer financial services and amending Council Directive 90/619/EEC and Directives 97/7/EC and 98/27/EC:

⁴² Տե՛ս Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council of 25 October 2011 on consumer rights, amending Council Directive 93/13/EEC and Directive 1999/44/EC of the European Parliament and of the Council and repealing Council Directive 85/577/EEC and Directive 97/7/EC of the European Parliament and of the Council

⁴³ Տե՛ս Joint FTC/Commerce Department Report Released on "Reasonable Demonstration" Requirement of ESIGN, <http://www.ftc.gov/os/2001/06/esign7.htm>:

⁴⁴ Տե՛ս Федеральный закон РФ "Об электронной торговле", 6 июня 2001 года, N1582-III ГД

⁴⁵ Տե՛ս Федеральный закон РФ "Об электронной подписи", 6 апреля 2011 года, N 63-ФЗ:

⁴⁶ Տե՛ս թիվ 63-Փ3 դաշնային օրենք, ընդունվել է ՌԴ Դաշնային խորհրդի կողմից 25.03.2011թ. -ին, ուժի մեջ է 06.04.2011թ. -ից:

քաղաքացիական օրենսգրքում, այնպես էլ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում՝ ամրագրելով առավել հստակ մեխանիզմներ ու սպառողների իրավունքների պաշտպանության և բացուցիչ և ծակներ:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքում տրվում են էլեկտրոնային փաստաթուղթ, էլեկտրոնային ստորագրություն և մի շարք այլ հիմնական հասկացությունների բնորոշումներ: «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքն անդրադառնում է էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում պետական կառավարմանը և կարգավորմանը, ռադիոհաճախականության ներքին տիրույթի կառավարմանը, սպառողների իրավունքների պաշտպանությանը, օպերատորների, ծառայություններ մատուցողների և վերջնական օգտագործողների իրավունքներին և պարտականություններին:

Ընդհանրացնելով պատմական զարգացման վերոնշյալ ասպեկտները՝ կարծում ենք՝ էլեկտրոնային պայմանագրերի զարգացումը կարելի է դիտարկել պայմանականորեն տարանջատվող երկու փուլերի շրջանակներում, այն է՝

(1) սեղեկատվական տեխնոլոգիաների առաջացումից մինչև և համացանցի (1986) և www-ի (1994) ստեղծումը, և

(2) համացանցի և www-ի ստեղծումից մինչև այժմ:

Առաջին փուլում էլեկտրոնային պայմանագրերը հիմնականում կնքվում էին գործարար շրջանակներում: Դա պայմանավորված էր նրանով, որ միայն հզոր կազմակերպություններն ունեին համապատասխան տեխնոլոգիաներ ձեռք բերելու, ինչպես նաև դրանցից մասնագիտական հմտությունների կիրառմամբ օգտվելու հնարավորություն: Նրանք կարողանում էին պայմանավորվել ոչ միայն կոնկրետ պայմանագրի դրույթների, այլև համապատասխան տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների կիրառման շուրջ, մինչդեռ համացանցն ու www-ն այդպիսիք հասանելի դարձրին հասարակ սպառողին: Արդյունքում էլեկտրոնային միջոցները և այն տարածում ստացան առօրյակյանքում կնքվող գործարքներում: Հարկ է ընդգծել, որ իրավական զարգացման առումով էլեկտրոնային

ապյ մանագրերի կարգավորումն առավել ապես սրվել է հենց երկրորդ փուլում, ինչը որոշակիության և վստահության մթնոլորտ է ձևավորել էլ եկտրոնային ձևով գործարքներ կնքող կողմերի համար՝ առավել նաաստելով այդ ապյ մանագրերի կիրառման շրջանակի ընդլայնմանը:

ՏՆՆ. Գործարքի կնքման ԷԼ Եկտրոնայ ին ձևի առանձ նահարկու թյ ու նները

Գործարքները քաղաքացիական իրավու նքներ և պարտականու թյ ու ններ առաջացնող և դարարեցնող առավել տարածված իրավական փաստեր են⁴⁷: Գործարքի կայացման համար անհրաժեշտ է նրամասնակիցների ինչպես ներքին կամքը, այնպես էլ կամահայ տնու թյ ու նը: Կամահայ տնու թյ ու նը պետք է այս կամ այն ձևով ամրապնդված լինի: Պայմանագրեր կնքելիս անհրաժեշտ է լինում նաև հասնել կողմերի կամահայ տնու թյ ու նների փոխհամաձայնեցմանը⁴⁸: Կամահայ տնու թյ ան արտահայտման կամ ձևակերպման եղանակը կոչվում է գործարքի ձև⁴⁹:

Քաղաքացիական իրավու նքի տեսու թյ ան մեջ նշվում են գործարքի կնքման երկու ձևեր՝ բանավոր և գրավոր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածում նախատեսվում է գործարքի կնքման երկու ձև՝ բանավոր և գրավոր: Այսպես, վերոնշյալ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն, *գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով: Գործարքը, որը կարող է կնքվել բանավոր, համարվում է կնքված նաև այն դեպքում, եթե անձի վարքից ակնհայտ է գործարք կնքել ու նրա կամքը:*

Ակնհայտ է, որ օրենքն անձի վարքագծի միջոցով հայտնված կամահայ տնու թյ ու նը հավասարեցնում է բանավոր գործարքներին: Նման տիպի գործողու թյ ու նները, սակայն, քաղաքացիական իրավու նքի տեսու թյ ան մեջ կոչվում են կոնկլյուդենտ⁵⁰: Անհրաժեշտ է նկատել, որ գրավոր գործարքների կապակցու թյ ամբ օրենքը նախատեսում է դրանց հասարակ և որակյալ, այսինքն՝ նոտարական վավերացմամբ ձևերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքել ու*

⁴⁷ Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.**, Հայաստանի Հանրապետու թյ ան քաղաքացիական իրավու նք, առաջին մաս, Երևան, 2014, էջ 204:

⁴⁸ Տե՛ս Учебник гражданского права. Часть 1, Под общ. ред. Т.И. Илларионовой, Б.М. Гонгалю, В.А. Плетнева. Москва., 1998, էջ 172:

⁴⁹ Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.**, նշված աշխատու թյ ու նը, էջ 214:

⁵⁰ Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.**, նշված աշխատու թյ ու նը, էջ 215:

համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, **Էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրահսկությունը և ճշգրիտորոշելու, որ այն էլ նույն է պայմանագրի կողմից:** Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս, եթե օրենքով նման պայմանագրի ձևի վերաբերյալ այլ պահանջ սահմանված չէ, Էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված Էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը⁵¹:

Սա նշանակում է, որ օրենսդիրը Էլեկտրոնային միջոցներով կնքված պայմանագիրը հավասարեցնում է ավանդական փաստաթղթային ձևով կնքվող պայմանագրերին⁵²:

Նմանատիպ դիրքորոշում առկա է նաև տեսության մեջ: Տեսաբանները նշում են, որ Էլեկտրոնային պայմանագրերը ավանդական պայմանագրերից տարբերակելու հիմնական չափանիշը համապատասխան Էլեկտրոնային միջոցների օգտագործումն է⁵³: Ավանդական ձևով կնքվող պայմանագրերի համար ցանցը տվյալների

⁵¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ մասի վերջին նախադասությունում արտացոլված փոփոխությունը (ուժի մեջ է մտել 2016թ. հունիսին) ընդրգկվել էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների վրա աջ խստող աջ խատանքային խմբի վերջնական առաջարկում ու ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարությանը:

⁵² Սույն ատենախոսության շրջանակներում պարբերաբար կիրառվելու են թե «գործարքի կնքման Էլեկտրոնային ձև», թե «Էլեկտրոնային միջոցներով գործարքի կնքման գրավոր ձև» հասկացությունները: Ակնհայտ է, որ այդպիսիք տարբեր հասկացություններ են և երկրորդի դեպքում ինկատի ենք ունենում Էլեկտրոնային գործարքը որպես գրավոր գործարքի տարատեսակ: Այդուհանդերձ, գիտական առաջարկներ կատարելիս առաջնորդվելու ենք այն դիրքորոշմամբ, որ արդեն իսկ անհրաժեշտ է գործարքի կնքման Էլեկտրոնային ձևի առանձնացում առնվազն գիտական մակարդակով, սակայն մինևույն ժամանակ օրենսդրական փոփոխությունների առաջարկներում հասկացությունը կկիրառվի ավելի կոնսերվատիվ մոտեցմամբ՝ այն դիտարկելով որպես գրավոր գործարքի տարատեսակ:

⁵³ Տե՛ս **Васильева Н. М.**. Правовое регулирование налогообложения электронной коммерции, Москва, 2007, էջ 44:

փոխանցման միջոց է, համացանցով կնքվող գործարքների համար ցանցը դրանց իրականացման շուկա է⁵⁴: Յարկ է ընդգծել, որ այսպիսի դիրքորոշում են որդեգրել ՄԱԿ-ը, ԵՄ-ն և զարգացած պետությունները, որոնք առաջինն են կարգավորել այս ոլորտը: **Կարծում ենք, որ այս մոտեցումը ձևավորվել է այն պարճառով, որ ժամանակին պետությունները և միջազգային կազմակերպությունները էլեկտրոնային միջոցներով կատարվող առևտրի խոչընդոտները վերացնելու համար միջոցներ են ձեռնարկել՝ հավաստիանալով, որ գուտ էլեկտրոնային լինելու պարճառով փաստաթուղթը չի զրկվի իրավական ուժից, կամ գործարքի կնքվածության հանգամանքը չի մերժվի:** Միևնույն ժամանակ, դեռևս այն ժամանակ չունենալով ամբողջական և համալիր պատկերացում նոր ձևավորված երևույթի մասին, որն արագորեն փոխակերպվում և զարգանում էր, էլեկտրոնային միջոցներով փաստաթղթերի փոխանակումը կարող էր համարվել հնարավոր ամենաօպտիմալ լուծումը, մինչև գործարար շրջանառությունը և ձևավորվող պրակտիկան կառաջադրեին իրենց պահանջները, կվերհասնեին բացերն, ու ըստ այդմ՝ պետությունների կողմից կտրվեր նոր կարգավորում:

Այսպես, ՄԱԿՄԱԻՅ-ի մշակած «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, *տեղեկությունը չի կարող զրկվել իրավական ուժից, վավերությունից կամ հայցային ուժից միայն այն հիմքով, որ այն ունի էլեկտրոնային փաստաթղթի ձև, իսկ 6-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքը պահանջում է՝ տեղեկատվությունը լինի գրավոր, այդ պահանջը կարող է բավարարվել էլեկտրոնային հաղորդագրությամբ, եթե դրանում ներառված տեղեկատվությունը հասանելի է հետագա հղման համար:* Յետևում է, որ **5-րդ հոդվածով սահմանվում է մի կարևոր սկզբունք. էլեկտրոնային հաղորդագրությունը միայն էլեկտրոնային լինելու հիմքով չափս է ենթարկվի խաթակնություն⁵⁵:** Նմանատիպ ձևակերպում է տրված նաև ՄԱԿ-ի կոնվենցիայի 8-րդ և 9-րդ հոդվածներում: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետից հետևում է,

⁵⁴ Տե՛ս *Кузьмин И. Г.*. Электронная торговля в России: экономическая эффективность, проблемы и перспективы развития, Санкт-Петербург, 2002, էջ 11:

⁵⁵ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 32:

որ կոնվենցիան չի պարտադրում կողմերին օգտագործել
Էլեկտրոնային հաղորդակցություն, սակայն կողմերի
համաձայնությունն այդ մասին կարող է ենթադրվել նաև նրանց
վարքագծից: ՄԱԿՄԱԻՅ-ի «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային
օրենքից անմիջապես հետո «Էլեկտրոնային գործարքների մասին»
ԱՄՆ միասնական օրենքը սահմանեց, որ Էլեկտրոնային
գրառումները չեն կարող միայն ձևական հիմքերով զրկվել
իրավաբանական ուժից: Եթե օրենքը պահանջում է, որ գրառումը
կատարվի գրավոր, ապա Էլեկտրոնային գրառումը բավարարում է այդ
պահանջները:

ԵՄ «Էլեկտրոնային առևտրի մասին» 2000/31/EC դիրեկտիվը⁵⁶
հարկադրեց անդամ-պետություններին հավաստիանալ, որ նրանց
իրավական համակարգը թույլ է տալիս պայմանագրերը կնքել
Էլեկտրոնային միջոցներով, ինչը նշանակում է, որ այն
խոչընդոտներ չի ստեղծում Էլեկտրոնային միջոցների կիրառման և
Էլեկտրոնային պայմանագրերի կնքման համար⁵⁷:

*Պարզելու համար, թե արդյոք Էլեկտրոնային միջոցներով
կնքվող պայմանագրերը պետք է հավասարեցվեն գրավոր
պայմանագրերին ձևի տեսանկյունից, անհրաժեշտ է ուսու մնասիրել
**գրավոր փաստաթղթի գործառույթները, այդ թվում՝ դրավրակատարվող
ստորագրության նպատակները, հասկանալ, թե ինչու են գործարքները
կնքվում գրավոր ձևով, ինչպիսի երաշխիքներ է ձևը տալիս
պայմանադիր կողմերին: Այնուհետև անհրաժեշտ է պարզել, թե արդյոք
նույն գործառույթները կատարում են նաև Էլեկտրոնային
փաստաթուղթն ու ստորագրության ու նը, հետևաբար և կարելի է արդյոք
Էլեկտրոնային միջոցներով կնքված պայմանագրերը հավասարազոր
համարել գրավոր պայմանագրերին, թե անհրաժեշտ է դրանք
տարբերակել հենց նույն ձևի տեսանկյունից***⁵⁸:

Գրավոր փաստաթուղթ և Էլեկտրոնային փաստաթուղթ.

⁵⁶ Տե՛ս Directive 2000/31/EC of the European Parliament and of the Council of 8 June 2000 on certain legal aspects of information society services, in particular electronic commerce, in the Internal Market ('Directive on electronic commerce'), <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:32000L0031:En:HTML>

⁵⁷ Տե՛ս **Jill Poole**, Contract Law, 10th edition, Oxford University Press, 2010, 194-195 էջեր:

⁵⁸ Տե՛ս Հայկյանց Ա., Դանիելյան Վ., «Գործարքի կնքման Էլեկտրոնային ձևի հարցի շուրջ», Բանբեր, 139.3, Երևան, 2013, էջ 37:

Չաճախ մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ բանավոր ձևով կնքվում են այն գործարքները, որոնք արժանի չեն գրավոր ձևակերպելու: Այդուհանդերձ, այս ընկալումը սխալ ենք համարում, քանի որ բանավոր գործարքը նույնքան պարտավորեցնող է, որքան գրավորը: Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքներից (1998թ.)⁵⁹ և Մասնավոր իրավունքի ունիֆիկացման միջազգային ինստիտուտի (UNIDROIT) Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքներից (1994թ.) հետևում է, որ պարտադիր չէ պայմանագիրը ձևակերպել գրավոր: Այն կարող է ապացուցվել ցանկացած միջոցներով, ներառյալ վկաների ցուցմունքներով⁶⁰:

Ներկայումս որոշ տեսաբաններ գտնում են, որ մեր հասարակությունը վերադառնում է գրավոր ձևով ձևակերպող գործարքներին: Գրականության մեջ նշվում է, որ սխալ կլինի ենթադրել, թե ձևականություններն այլևս կարևոր չեն ժամանակակից համակարգերում: Չակառակը, ձևական պահանջներ ներկայացվում են ամենուր, առաջին հերթին՝ սպառողների իրավունքների պաշտպանության նպատակով: Ձևական պահանջներին համապատասխան գործարքներ կազմելը խլում է ժամանակ և ջանքեր, հետևաբար այդպիսիք կարող են արդարացված լինել միայն ողջամիտ պատճառներով: Մեկ այդպիսի պատճառ կարող է լինել գրավոր փաստաթղթի ապացուցողական ուժը: Կողմերն այդ կերպ կարող են խուսափել բազմաթիվ վեճերից: Երբեմն էլ ձևականությունները պահանջվում են՝ ընդգծելու համար, որ բանակցությունների փուլն ավարտվել է, և վրա է հասել պայմանագրի ձևակերպման փուլը: Չաճախ նախապայմանագրային բանակցությունները երկար են տևում, կողմերը պայմանագրային փուլ անցնելիս կարող են նորից չհամաձայնել այն պայմաններին, որոնց շուրջ նախկինում համաձայնության էին եկել: Բանակցային շրջանում երկու կողմերն էլ գիտեն, որ բանակցությունների գրավոր ձևակերպումները պարտավորեցնող չեն, և չեն կարող վստահ լինել մյուս կողմի հետ ձեռք բերված նախնական

⁵⁹ Տե՛ս The Principles of European Contract Law - Parts I and II revised 1998 (Parts I and II revised 1998, Part III 2002)

⁶⁰ Տե՛ս **Ewan McKendrick**, Contract Law, Text, Cases and Materials, Fourth Edition, Oxford University Press, 2010, 260-262 էջեր:

պայ մանավորված ու թյ ու նների կապակցությամբ, քանի դեռ պայ մանագիրը գրավոր չի ձևակերպվել⁶¹:

Տարբեր օրենսդրություններում գրավոր ձև ասելով՝ հասկանում են նաև տեքստի մեքենագիր, պատճենահանված, նկարված կամ արտացոլման ու արտահայտման տեսանելի ցանկացած ձև⁶²: Գրավոր ձևն առնվազն պետք է համաձայնության մեջ մտնող կողմերի համար ակնհայտ դարձնի պայ մանագրի առարկան և դրա պայ մանները⁶³:

Ընդհանրացնելով վերևում ասվածը՝ կարելի է արձանագրել, որ պետությունների ազգային օրենսդրությունը նախատեսում է պայ մանագրի գրավոր ձևով ձևակերպում հետևյալ պատճառներով՝

1. գրավոր ձևը վստահություն է ներշնչում առ այն, որ կողմերի մտադրության մասին առկա է շոշափելի ապացույց,

2. գրավոր ձևը տեղեկացնում և զգուշացնում է կողմերին, որ պայ մանագիրն առաջացնելու է հետևանքներ,

3. գրավոր ձևի միջոցով կողմերը վստահ են լինում, որ փաստաթղթային ձևակերպում ստացած պայ մանագիրը մնալու է անփոփոխ, քանի դեռ կողմերը չեն համաձայնվել այն փոփոխել,

4. գրավոր ձևը հնարավորություն է ընձեռում փաստաթղթի պատճենը տրամադրելու կողմերին,

5. գրավոր ձևի միջոցով ապահովվում է պայ մանագրի կողմերի նույնականացումը նրանց կողմից դրված ստորագրության միջոցով,

6. գրավոր ձևը նաև պարզեցնում և հեշտացնում է հաշվապահությունը, հարկային և այլ պարտականությունների կատարումը և այլն⁶⁴:

Գրավոր և էլեկտրոնային փաստաթղթերի գործառնությունների համեմատության նպատակով վերոնշյալ պատճառներից հատկապես ուշադրություն է դարձվել ու 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերին՝ հաշվի առնելով, որ մնացածները հավասարապես վերաբերում են նաև էլեկտրոնային փաստաթղթերին ու դրանց առանձին անդրադարձ

⁶¹ Տե՛ս **Ewan McKendrick**, նշված աշխատությունը, էջ 263:

⁶² Տե՛ս E-commerce and Convergence, A guide to the Law of Digital Media, Fourth Edition, editor Mike Butler, Great Britain, 2011, 183-184 էջեր:

⁶³ Տե՛ս **Davidson, Knowles and Forsythe**, Business Law, Principles and Cases in The Legal Environment, Fifth Edition, USA, 1996, էջ 315:

⁶⁴ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 35:

կատարելու անհրաժեշտությունն առկա է: «Էլեկտրոնային փաստաթուղթ կամ տեղեկություն» հասկացությունը տարբեր մեկնաբանություններ է ստացել: «Էլեկտրոնային առևտրի մասին» ՄԱԿՄԱԻՅ-ի նմուշային օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ *Էլեկտրոնային հաղորդագրությունը տեղեկություն է, որը ձևակերպվել է, ուղարկվել, ստացվել կամ պահպանվում է որևէ էլեկտրոնային, օպտիկական կամ նմանատիպ միջոցներով, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, տվյալների էլեկտրոնային փոխանակումը, էլեկտրոնային փոստը, հեռագիրը, տելեքսը կամ ֆաքսը: «Էլեկտրոնային գործարքների մասին» ԱՄՆ օրենքում տրվում է էլեկտրոնային գրառում (electronic record) հասկացությունը, այն է՝ ցանկացած գրառում, որը ստեղծվել, ուղարկվել, ստացվել կամ պահպանվում է էլեկտրոնային միջոցների օգնությամբ: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում տրվում է էլեկտրոնային փաստաթղթի հասկացությունը, համաձայն որի՝ էլեկտրոնային փաստաթուղթը տեղեկություն է գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.*

Էլեկտրոնային փաստաթղթերի առնչությամբ մեծ կարևորություն է ներկայացնում էլեկտրոնային փաստաթղթերի բնօրինակների և պատճենների հարցը: «Էլեկտրոնային առևտրի մասին» ՄԱԿՄԱԻՅ-ի նմուշային օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ այն նդեպում, երբ օրենքը պահանջում է, որ տեղեկատվությունը ներկայացվի բնօրինակով, այդ պահանջը համարվում է կատարված,

ա. եթե գոյություն ունի վստահելի երաշխիք, որ տեղեկությունն ամբողջական է՝ այն պահից սկսած, երբ այն ստեղծվել է իր վերջնական տեսքով՝ որպես էլեկտրոնային փաստաթուղթ,

բ. այն դեպքում, երբ պահանջվում է, որ տեղեկությունը ներկայացվի, առկա է համապատասխան անձին այն ցուցադրելու հնարավորություն:

Տեղեկության ամբողջականությունն ու միասնականությունը որոշելու համար չափանիշ պետք է լինի այն, թե արդյոք հաղորդագրությունը մնացել է ամբողջական և անփոփոխ՝ բացառությամբ այն փոփոխությունների, որոնք կատարվում են հաղորդակցության, պահպանման կամ ցուցադրման բնական ընթացքում⁶⁵: Տեղեկության հուսալիությունը պետք է գնահատվի կոնկրետ հանգամանքների լույսի ներքո՝ հիմք ընդունելով այն նպատակը, որի համար տեղեկությունն ստեղծվել է:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ *Էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակը գոյություն ունի միայն էլեկտրոնային կրիչի վրա: Էլեկտրոնային կրիչի վրա գրանցված և նույնական էլեկտրոնային փաստաթղթերի բոլոր օրինակները համարվում են բնօրինակներ և ունեն հավասար իրավական նշանակություն: Եթե պահանջվում է ներկայացնել էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակը, ապա այդ պահանջը համարվում է բավարարված, եթե՝ ա) հնարավոր է ապացուցել, որ էլեկտրոնային փաստաթուղթը չի փոփոխվել այն պահից, երբ այն հաղորդվել է և (կամ) տրվել է պահպանության՝ բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար. բ) էլեկտրոնային փաստաթուղթն առանց բովանդակային փոփոխությունների հնարավոր է ներկայացնել արտաքին ձևով հատուկ տեխնիկական գիտելիքներ չունեցող անձի ընկալման համար մատչելի և հասկանալի ձևով: Այսինքն՝ մեր օրենքով իրավակարգավորումը կրկնում է նմուշային օրենքում առաջարկված տարբերակը, ինչն արդարացված ենք համարում:*

Վերոնշյալ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային փաստաթղթի պատճեններն ստեղծվում են էլեկտրոնային փաստաթղթի

⁶⁵ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 42:

Ներկայացման արտաքին ձևով՝ թղթի վրա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացնելով դրանց համապատասխանություները բնօրինակին: Էլեկտրոնային փաստաթղթի պատճենները թղթի վրա պետք է պարունակեն նշում այն մասին, որ նրանք համապատասխան էլեկտրոնային փաստաթղթի պատճեններն են:

Ինչպես հետևում է օրենքի դրույթից, էլեկտրոնային կազմված և էլեկտրոնային ստորագրությամբ բոլոր փաստաթղթերը համարվում են բնօրինակ, և առայժմ առկա չէ որևէ տեխնիկական լուծում, որով հնարավոր կլիներ էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթի վրա փոփոխություն անել (օր.՝ փաստաթղթի վրա ավելացնել կրկնօրինակ կամ պատճեն բառը) էլեկտրոնային ստորագրության պահպանմամբ, քանի որ փաստաթղթի վրա ցանկացած փոփոխության կատարում կհանգեցնի էլեկտրոնային ստորագրության անվավերության: Յետևում է, որ առայժմ մեր իրավակարգավորման պարագայում էլեկտրոնային փաստաթղթերը կարող են ունենալ պատճեններ բացառապես թղթային կրիչի ձևով, ուստի այս առնչությամբ էլեկտրոնային միջավայրում դեռևս իրավական կարգավորման խնդիր չի ծագել: Մյուս կողմից էլ օրենքը չի պատասխանում այն հարցին, թե էլեկտրոնային կրիչի վրա առկա բնօրինակ փաստաթուղթն էլեկտրոնային փոստով ուղարկվելու պարագայում արդյոք ստացողի մոտ ներբեռնված օրինակը ևս հանդիսանում է բնօրինակ: Գրավոր փաստաթղթերի դեպքում բնօրինակ փաստաթուղթը շրջանառելիս այդ օրինակն անցնում է մեկի տիրապետությանից մյուսին, մինչդեռ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերն ունեն առավելություն այդ առումով, քանի որ դրանց փոխանցումից հետո անգամ սկզբնական տիրապետողի ցանկությամբ տվյալ փաստաթղթի բնօրինակը կարող է պահպանվել նաև իր մոտ: Այդ է պատճառը, որ ի տարբերություն գրավոր բնօրինակ փաստաթղթերին՝ էլեկտրոնային բնօրինակ փաստաթղթերում նշում չի պարունակվում, թե դրանք քանի օրինակից են պատրաստված:

Տեսաբանները էլեկտրոնային փաստաթղթերի կիրառությունը քննադատում են երեք հիմնական պատճառներով՝ ֆիզիկական ոչ շոշափելիության հանգամանքով, դրանք ստորագրած անձի նույնականացման դժվարությամբ և դրա բովանդակությունը

փոփոխելու հնարավորությունը⁶⁶: Կարծում ենք՝ առաջին հիարթեզն անհիմն է, քանի որ էլեկտրոնային փաստաթղթերը կարող են պահպանվել շատ ավելի երկար, քան թղթայինները, բացի այդ՝ դրանք կարող են արտատպվել թղթային կրիչի վրա և այսպիսի մոտեցումը պարզապես հոգեբանական ավանդական մոտեցում է տեխնոլոգիական նոր լուծումների հանդեպ:

Ինչ վերաբերում է մյուս երկու հիարթեզներին, ապա դրանք էլեկտրոնային առևտրի կիրառության հիմնական խոչընդոտներից են, սակայն տեխնոլոգիական զարգացումն արդեն իսկ ապահովել է դրանց լուծման հնարավոր տարբերակները, որոնք ժամանակի ընթացքում ավելի են կատարելագործվում:

Ձեռագիր ստորագրություն և էլեկտրոնային ստորագրություն.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և **ստորագրված է** գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Հարկ է ընդգծել, որ գրավոր փաստաթղթի ստորագրման պահանջը ներկայացվում է բոլոր իրավական համակարգերում, քանի որ ստորագրման հիմնական նպատակը հավաստիացումն է, որ անձը գրավոր ձևակերպված փաստաթղթի բովանդակությունը կողմ է, և ստորագրում է տվյալ պայմանագրի կողմ հանդիսացող անձը: Հակառակ պարագայում փաստաթղթի գրավոր ձևակերպումը կդառնա ոչ անհրաժեշտ և իմաստագուրկ:

Ընդհանրապես օրենքներում ստորագրության հասկացությունը չի տրվում, պարզապես նշվում է, որ փաստաթուղթը պետք է ստորագրվի⁶⁷: Ստորագրությունը ստորագրողի՝ պայմանագրի կնքելու առնչությամբ կամքի արտահայտությունն է: Ստորագրությունն ապահովում է փաստաթղթի իսկությունը⁶⁸: Ստորագրության հիմնական գործառնություններն են անձի

⁶⁶ Տե՛ս *Kapes Я. А.* Электронные документы и сообщения в коммерческом обороте: правовое регулирование, էջ 10:

⁶⁷ Տե՛ս *Paul Todd*, E-commerce Law, նշված աշխատությունը, էջ 121:

⁶⁸ Տե՛ս *Martien Schaub*, European Legal Aspects of E-commerce, Amsterdam, 2004, էջ 129:

նույնականացումը, անձին տվյալ փաստաթղթի բովանդակության հետ կապելը, ճշգրտության ապահովումն առայն, որ անձն ինքն է ստորագրում տեքստի տակ: Ստորագրությունը նույնականացում է կողմերին՝ ելնելով նրանց առանձնահատուկ նշաններից, որոնք պայմանավորված են յուրաքանչյուրի ձեռագրով⁶⁹: Պետք է նշել, որ, ավանդական ձեռագիր ստորագրությունից բացի, առկա են ստորագրության այլ տիպեր ևս (օր.՝ կնքում կամ կնիքի վրա առկա ստորագրություն), որոնք ապահովում են ճշգրտության տարբեր մակարդակներ⁷⁰:

Շատ իրավական համակարգեր ունեն հատուկ ընթացակարգեր և պահանջներ, որոնք ուղղված են ստորագրությունների հուսալիության ամրապնդմանը: Մասնավորապես, այդպիսիք են՝

ա. *նոտարական վավերացումը*, որը հնարավորություն է տալիս հաստատել իրավական փաստաթղթի վրա ստորագրության նույնականացումը, ինչը կատարվում է նոտարի առջև անձի \$իզիկական ներկայությամբ:

բ. *ստեստացիան*, որը մեկ անձի կողմից մեկ այլ անձի ստորագրման փաստի վկա հանդիսանալն է և այնուհետև որպես վկա ստորագրելը: Աստեստացիայի միջոցով պարզապես հիմնավորվում է, որ կոնկրետ անձն է ստորագրել փաստաթուղթը, իսկ փաստաթղթի բովանդակությանն անդրադարձ չի կատարվում: Դրանով, փաստորեն, վկան հաստատում է, որ այն անձը, որին ինքը տեսել է ստորագրելիս, իսկապես ստորագրել է՝ որևէ կերպ չանդրադառնալով ստորագրված փաստաթղթի բովանդակությանն ու դրա իրավաչափությանը:

գ. *կնքումը*. աշխարհի որոշակի շրջաններում շատ տարածված է ստորագրության վրա կնիք դնելը: Այն հատկապես կատարվում է ընկերությունների կողմից՝ տնօրենի կամ իրավասու այլ անձի ստորագրության վրա: Կնքումը ևս ստորագրողի անձի հաստատման ապացույց է, քանի որ կնիքները տրվում են անհատապես՝ կոնկրետ անձանց անունով կամ կազմակերպությունների անվանումներով⁷¹:

⁶⁹ Տե՛ս *Twomeu I., Jennings D., Fox M.*, Andersons's Business Law and the Legal Environment, 18th edition, US, 2002, էջ 301:

⁷⁰ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 37: Տե՛ս նաև UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of electronic authentication and signature methods, Vienna, 2009, էջ 5:

⁷¹ Տե՛ս UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of

Գործարքների հուսալիության հետ կապված ամենախնդրահարույց հարցերն են՝ հաղորդագրության ուղարկողի և ստացողի անձի նույնականացումը, հաղորդագրության անփոփոխ լինելը, էլեկտրոնային վճարումների հետ կապված հարցերը: Էլեկտրոնային միջավայրում դժվար է տարբերել բնօրինակ հաղորդագրությունը կրկնօրինակից, ի հայտ բերել հաղորդագրություն ուղարկողին և ստացողին, ուստի և մեծանում է զեղծարարության նկատմամբ: Սրանից խուսափելու համար ստեղծվել են կողմերին նույնականացնելու, հաղորդագրությունը իդենտիֆիկացնելու տարբեր միջոցներ՝ ստորագրություններ, կոդեր, գաղտնաբառեր: Էլեկտրոնային առևտրի զարգացման հիմնական գործոններից մեկը էլեկտրոնային ստորագրությունների իրավական կարգավորումն է: Էլեկտրոնային ստորագրությունները կարող են իդենտիֆիկացնել հեռավորության վրա կատարվող գործարքների կողմերին և պահպանել նամակագրության գաղտնիությունը⁷²:

Կոնտրագենտների նույնականացման հարցը, պայմանավորված հաղորդակցության միջոցների առանձնահատկություններով, մշտապես առկա է եղել էլեկտրոնային առևտրի սուբյեկտների համագործակցության ժամանակ: Կողմերի միջև անմիջական շփման բացակայությունը բարձրացնում է կոնտրագենտին նույնականացնելու, նրա անձի մեջ սխալվելու ռիսկը, ինչն ամբողջությամբ վերացնելն անհնար է: Կողմերի նույնականացման խնդրի լուծման միջոց է էլեկտրոնային ստորագրությունը, ուստի էլեկտրոնային առևտրի զարգացումը էապես նաև պայմանավորվում է էլեկտրոնային ստորագրությունների իրավական կարգավորմամբ: Էլեկտրոնային ստորագրությունների միջոցով նույնականացվում են հեռավորության վրա կնքվող գործարքների կողմերը, և պահպանվում է նամակագրության գաղտնիությունը⁷³, հնարավորինս ապահովվում է կնքվող գործարքների հուսալիությունն ու էլեկտրոնային շրջանառության կայունությունը:

electronic authentication and signature methods, նշված աշխատությունը, 6-7 էջեր:

⁷² Տե՛ս **John Dickie**, *Internet and Electronic Commerce Law in the European Union*, Oxford, North America, 1999, էջ 35:

⁷³ Տե՛ս **John Dickie**, *Internet and Electronic Commerce Law in the European Union*, նշված աշխատությունը, էջ 35:

Էլեկտրոնային ստորագրությունը կատարվում է Էլեկտրոնային ձևով: Դրա նպատակն անձի իդենտիֆիկացման ստուգումն է⁷⁴: Էլեկտրոնային ստորագրությունները՝ որպես Էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակության և նույնականության հաստատման միակ հարաբերականորեն հուսալի միջոց, իրենց ամրապնդումն են ստացել աշխարհի տարբեր երկրների օրենսդրություններում: Երկրների մեծ մասում օգտագործվում է «Էլեկտրոնային ստորագրություն» (electronic signature), իսկ մյուսներում՝ «թվային ստորագրություն» (digital signature) հասկացությունը: Որոշ երկրներում էլ (օր.՝ Սինգապուրում) օգտագործվում են երկու հասկացություններն էլ: ՀՀ-ը դրսևորել է հիբրիդային մոտեցում՝ ընդունելով «Էլեկտրոնային փաստաթղթի և Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» վերտառությունը օրենք:

Էլեկտրոնային ստորագրությունն ավանդական ստորագրության տեսք չունի: Այն կարող է լինել Էլեկտրոնային նամակի վերջում գրված անձի անունը, նրա սկանավորված, ձեռքով կատարված ստորագրությունը կամ կայքի էջում «Ես ընդունում եմ (I accept)» կոճակի սեղմումը⁷⁵: Այն կարող է կատարված լինել ցանկացած տառերի, թվերի, սիմվոլների թվային կարգով, որոնք հավելվում են Էլեկտրոնային փաստաթղթին՝ դրա իսկության հաստատման համար: Գոյություն ունեն սարքեր, որոնք թույլ են տալիս ստորագրել Էկրանի վրա և ձեռքի ստորագրությունը թվայնացնել: Էլեկտրոնային ստորագրություններ կան, որոնց միջոցով անգամ հնարավոր է որոշել, թե երբ է կազմվել և ստորագրվել փաստաթուղթը⁷⁶:

Թվային ստորագրությունը Էլեկտրոնային ստորագրության տեսակ է: Այն անձի անվան կամ ազգանվան հետ որևէ առնչություն չունի, այն փաստաթուղթը կողավորելու միջոց է, որը մյուս կողմն ապակողավորում է, եթե նրան տրվել է դրա համար անհրաժեշտ բանալի: Հարկ է ընդգծել, որ ներկայումս մշակվում են

⁷⁴ Տե՛ս OECD Recommendation on Electronic Authentication and OECD Guidance for Electronic Authentication, 2007, էջ 15:

⁷⁵ Տե՛ս E-commerce and Convergence, A guide to the Law of Digital Media, նշված աշխատությունը, էջ 185:

⁷⁶ Տե՛ս **Martien Schaub**, նշված աշխատությունը, 131-132 էջեր:

գրաֆիկական ծրագրեր, որոնք հնարավոր կդարձնեն թվային և էլեկտրոնային ստորագրությունների համատեղումը, այսինքն՝ անձի անվան և ազգանվան թվային կոդավորումը⁷⁷:

Թվային ստորագրությունների օգտագործումը դեռևս համընդհանուր տարածում չի ստացել, սակայն պայմանագրի մյուս կողմին նույնականացնելու համար օգտագործվում են այլ միջոցներ ևս: Այս միջոցները ներառում են էլեկտրոնային նամակի ուղարկումը, ֆաքսիմիլային հավաստիացումն այն մասին, որ էլեկտրոնային ձևով պայմանագիրը ստորագրվել է հենց այդ անձի կողմից⁷⁸: էլեկտրոնային փոստի օգտագործումը, սակայն, հաճախ հանգեցնում է բարդությունների. հաղորդագրությունն ստացողը չի կարող հաստատապես նշել, որ հաղորդագրությունն ուղարկված է հենց այն անձի կողմից, որի հասցեից այն ստացվել է, և որ այդ անձն օժտված է գործարքների կնքելու լիազորությամբ: Բացի այդ՝ վտանգ է ստեղծվում, որ հաղորդագրությունը կարող է այլ անձի կողմից կազմված կամ փոփոխված լինել: Այդ է ինդիքը, որ չնայած ոչ շատ կիրառելիությանը և տարածվածությանը, թվային ստորագրությունն առայժմ միակ միջոցն է, որն ապահովում է հուսալիության հնարավոր ամենաբարձր մակարդակը:

Թվային ստորագրությունները ստեղծվում են կրիպտոգրաֆիայի միջոցով, որը բարձրագույն մաթեմատիկայի ճյուղ է: Թվային ստորագրությունը հաղորդագրությունները դարձնում է անընթեռնելի, իսկ այնուհետև վերափոխում ընթեռնելի: Ստորագրությունները հիմնված են կոդավորման սիմետրիկ և ասիմետրիկ մեթոդների վրա: Առաջին դեպքում երկու կողմերը օգտագործում են մի քանակի, որը հայտնի է միայն իրենց: Երկրորդի դեպքում օգտագործվում են մի քանի քանակիներ⁷⁹: Բանալիներ ասելով՝ պետք է հասկանալ սիմվոլների որոշակի կրիպտոգրաֆիական հաջորդականություն, որը թույլ է տալիս ստեղծել թվային ստորագրություն կամ ստուգել դրա իսկությունը: Դրանք տարբեր

⁷⁷ Տե՛ս առավել մանրամասն ծրագրի մասին <https://www.docusign.com/how-it-works/electronic-signature/digital-signature>

⁷⁸ Տե՛ս **Larry A. DiMatteo, Lucien J. Dhooge**, International Business Law, a Transactional Approach, 2nd edition, US, 2006, էջ 544:

⁷⁹ Տե՛ս **Twomeu I., Jennings D., Fox M.**, Andersons's Business Law and the Legal Environment, նշված աշխատությունը, էջ 301:

օրենսդրություններում կոչվում են տարբեր կերպ՝ բաց և փակ, հանրային և մասնավոր: Այդ բանալիները որևէ առնչություն չունեն անձի հետ, դրանք պարզապես թվային համախմբեր են: Մասնավոր բանալին օգտագործվում է թվային ստորագրության ստեղծման համար, և այն հաղորդագրությունը դարձնում է անընթեռնելի, իսկ մյուսը՝ հակառակը: Մասնավոր բանալու տերն այն պետք է գաղտնի պահի: Հիմնականում մասնավոր բանալին պահվում է քարտերի վրա: Չնայած մասնավոր ու հանրային բանալիները մաթեմատիկորեն փոխկապված են, սակայն անհնար է հանրային բանալու իմացությունը ստանալ մասնավոր բանալու համախումբը⁸⁰:

Նախկին «Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՌԴ դաշնային օրենքն օգտագործում էր բաց և փակ բանալի հասկացությունները, օրենքում տրված էր Էլեկտրոնային փաստաթղթի հասկացությունը, մինչդեռ 2011 թվականի փոփոխությունների արդյունքում Էլեկտրոնային փաստաթղթի հասկացությունը չի տրվում, իսկ բաց և փակ բանալիների փոխարեն օգտագործվում են «Էլեկտրոնային ստորագրության բանալի» և «Էլեկտրոնային ստորագրության ստուգման բանալի» արտահայտությունները: Հարկ է ընդգծել, որ Էլեկտրոնային ստորագրության ստեղծման և ստուգման տվյալներ հասկացությունները օգտագործվում են նաև «Ներքին շուկայում Էլեկտրոնային գործարքների համար Էլեկտրոնային նույնականացման և հավատարմագրային ծառայությունների վերաբերյալ» ԵՄ 910/2014 կանոնակարգում⁸¹: «Էլեկտրոնային փաստաթղթի և Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը չի օգտագործում բանալիներ հասկացությունը: Դրա փոխարեն օրենքի 2-րդ հոդվածում տրվում են Էլեկտրոնային ստորագրության ստեղծման և ստուգման տվյալների հասկացությունները, որոնք համընկնում են ՌԴ օրենքում տրված վերոնշյալ հասկացությունների հետ: Այսպես, *ըստ ՀՀ վերոնշյալ օրենքի, Էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման*

⁸⁰ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Signatures with Guide to Enactment, New York, 2002, էջ 22:

⁸¹ Տե՛ս Regulation (EU) No 910/2014 of the European Parliament and of the Council of 23 July 2014 on on electronic identification and trust services for electronic transactions in the internal market, http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=uriserv%3AOJ.L_.2014.257.01.0073.01.ENG

տվյալներ ասելով հասկանում ենք պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն ստորագրող անձն օգտագործում է իր էլեկտրոնային թվային ստորագրությունը յուրաքանչյուր անգամ կիրառելիս: Փաստորեն, էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալները հայտնի են միայն ստորագրության սեփականատիրոջը: *Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ ասելով՝ հասկանում ենք պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր անգամ էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:* Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները կարող են տրվել ցանկացած անձի, որպեսզի ստուգվի, թե արդյոք ստորագրությունը պատկանում է ստորագրող անձին: Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները ստեղծում է ստորագրող անձը կամ հավաստագրման կենտրոնը:

Բացի բանալիներից՝ անհրաժեշտ է նաև ծրագիր, որը կոչվում է hash function, և այն օգտագործվում է թե՛ թվային ստորագրությունն ստեղծելիս, թե՛ այն կարդալիս: Այն ալգորիթմի վրա հիմնված մաթեմատիկական պրոցես է, որի միջոցով հաղորդագրությունը վերափոխվում է: Հաղորդագրությունն ստորագրելու համար ստորագրողն առաջին հերթին նշում է այն սահմանները, որոնք պետք է ստորագրվեն, այնուհետև, սեղմելով այդ ֆունկցիան, հատուկ ծրագիրը հաղորդագրությունը դարձնում է ստորագրելու համար պատրաստ վիճակի, որն էլ այնուհետև վերափոխվում է թվային ստորագրության: Այդ ստորագրությունը կցվում է հաղորդագրությանը և ուղարկվում ստացողին: Ստորագրությունը ստուգելու համար ստացողը պետք է օգտագործի նույն hash ֆունկցիան, այնուհետև իր հանրային բանալիով այն վերափոխի բնօրինակ տեսքի, այսինքն՝ թե՛ ուղարկողը, թե՛ ստացողը պետք է իմանան ծրագիրը (այլ կերպ ասած՝ շիֆրը), որն օգտագործվել է տեքստը կոդավորելիս⁸²: Ծրագիրն ստորագրությունն ստուգելիս այն համարում է թույլատրելի, եթե հանրային և մասնավոր

⁸² Տե՛ս *Козье Д.*, նշված աշխատությունը, էջ 65:

բանալիները միմյանց համապատասխանում են, և եթե հաղորդագրությունն անփոփոխ է⁸³:

Քանի որ էլեկտրոնային միջավայրում կողմերը հաճախ միմյանց չեն ճանաչում, չեն ունեցել որևէ գործնական փոխարաբերություն, ուստի վստահություն միմյանց նկատմամբ հիմնականում չեն ունենում, հանրային բանալին մյուս կողմին տրամադրելու համար անհրաժեշտ է լինում երրորդ անձի առկայություն, որն էլ սերտիֆիկացնող կենտրոնն է⁸⁴: Մասնավոր բանալին ապագա ստորագրողին տալով՝ սերտիֆիկացնող կենտրոնը տալիս է նաև հավաստագիր, որը պարունակում է հանրային բանալին և այն անձի անունը, ում այն տրվում է: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ *Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը փաստաթուղթ է՝ թղթի, էլեկտրոնային կամ այլ կրիչ ներքի վրա, որը հաստատում է ստորագրող անձին էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և էլեկտրոնային թվային ստորագրության պատկանելությունը և ծառայում է որպես էլեկտրոնային թվային ստորագրության իսկության ստուգման միջոց*: Սերտիֆիկատի հիմնական ֆունկցիան ստորագրողին համապատասխան հանրային բանալի հետ կապելն է⁸⁵: Սերտիֆիկատը ծառայում է նաև որպես թվային ստորագրության իսկության ստուգման միջոց⁸⁶: Սերտիֆիկատը կարող է ունենալ ժամկետ: Միևնույն ժամանակ հանրային բանալին հասանելի դարձնելու համար սերտիֆիկատը պետք է հրապարակվի սերտիֆիկատների շտեմարանում, որն իրենից ներկայացնում է սերտիֆիկատների առցանց բազա⁸⁷: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ և 14-րդ հոդվածների համաձայն՝ *հավաստագիրը պետք է պարունակի հետևյալ*

⁸³ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Signatures with Guide to Enactment, նշված աշխատությունը, 23-24 էջեր:

⁸⁴ Տե՛ս UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of electronic authentication and signature methods, նշված աշխատությունը, 19-20 էջեր:

⁸⁵ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Signatures with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 27:

⁸⁶ Տե՛ս **Bacchetta M., Low P., Mattoo A., Schuknecht L., Wagerand H., Wehrens M.**, նշված աշխատությունը, էջ 38:

⁸⁷ Տե՛ս UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of electronic authentication and signature methods, նշված աշխատությունը, էջ 24:

տեղեկությունները՝ ա) հավաստագրի եզակի գրանցման համարը՝ ըստ տվյալ կենտրոնի, բ) անձի անունը, ազգանունը կամ նրակեղծանունը (մտացածին անունը), գ) Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները, դ) Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի տրման օրը, ամիսը, տարեթիվը, իսկ եթե Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրն ունի գործողության ժամկետ, ապա նաև այդ ժամկետը, ե) Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնի անվանումը, գործունեության իրականացման հասցեն և իրավաբանական անձի գտնվելու վայրը: Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը կարող է ունենալ գործողության ժամկետ: Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի գործողության ժամկետը լրանալու պահից հետո տվյալ Էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը չեն համարվում Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված: Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները բոլոր շահագրգիռ անձանց կողմից օգտագործման համար տարածում է՝ ա) ստորագրող անձը՝ անձամբ հանձնելով կամ հաղորդելով այդ տվյալները կամ տվյալ Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը. բ) հավաստագրման կենտրոնը՝ ի պատասխան շահագրգիռ անձանց կողմից կատարված հարցման:

Էլեկտրոնային ստորագրության վերաբերյալ առկա մոտեցումներն ու մոդելները.

Էլեկտրոնային ստորագրությունը նպատակ ունի նույնականացնել անձին, իսկ Էլեկտրոնային նույնականացման օրենսդրությունը տարբեր երկրներում տարբեր կերպ է զարգանում: Այս կապակցությամբ գիտության մեջ առաջ են եկել երեք մոտեցումներ՝ միևնույնիստական, տեխնոլոգիական և փոխկապված (two-tiered):

1. **Միևնույնիստական մոտեցում** պարագայում պահպանվում է տեխնոլոգիական չեզոքություն: Այս մոտեցումը կոչվում է միևնույնիստական, քանի որ տալիս է նվազագույն իրավական կարգավիճակ Էլեկտրոնային ստորագրության բոլոր տեսակներին:

Էլեկտրոնային ստորագրությունները ձեռագիր ստորագրությանը համարժեք են և ունեն նույն իրավական ուժը բոլոր այն երկրներում, որտեղ ապահովվում է հուսալիության համարժեք մակարդակ: Այս մոտեցումը նույնանում է **ստորագրության թույլ արման մոդելի** հետ, ըստ որի՝ Էլեկտրոնային ստորագրություն պետք է համարել ցանկացած նշաններ կամ դրանց համակցություն, որոնցով կարելի է նույնականացնել այն օգտագործող անձին:

Նման մոտեցում է ամրագրել ՄԱԿՄԱԻՅ-ը թե «Էլեկտրոնային առևտրի մասին», թե «Էլեկտրոնային ստորագրության մասին» նմուշային օրենքներում: ՄԱԿՄԱԻՅ-ի առաջադրած այս մոտեցումն արդարացված ենք համարում՝ հաշվի առնելով տեխնոլոգիական արագընթաց զարգացումները: Բացի այդ՝ այս մոտեցումը թույլ է տալիս կողմերին, որ իրենք ընտրեն իրենց նախընտրելի տեխնոլոգիան: Ներպետական օրենսդրությամբ այսպիսի մոտեցման առկայության պարագայում Էլեկտրոնային ստորագրության համարժեքության հարցի որոշումը կատարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի կողմից կոնկրետ գործի կապակցությամբ⁸⁸: «Էլեկտրոնային ստորագրությունների մասին» ԱՄՆ միասնական օրենքը ընդհանուր կերպով ամրագրել է ձեռագիր և Էլեկտրոնային ստորագրությունների հավասարագործությունը՝ սահմանելով, որ բավարար է անձի՝ փաստաթուղթը ստորագրելու մտադրությունը, որպեսզի վերջինս իրավական ուժ ունենա⁸⁹:

2. **Տեխնոլոգիական մոտեցման** դեպքում Էլեկտրոնային ստորագրության թույլ ատրելիության ապահովման համար պարտադիր է որոշակի տեխնոլոգիայի օգտագործումը: Սա այն դեպքն է, երբ օրենքը, օրինակ, պարտադիր է համարում հանրային բանալիների օգտագործումը: Այսպիսին էր կարգավորումը Գերմանիայում մինչև ԵՄ դիրեկտիվի ընդունումը: Այս մոտեցման թերությունն այն է, որ հաճախ բացառվում են հուսալիության նույն մակարդակը տրամադրող այլ տեխնոլոգիաներ: Բացի այդ՝ ոչ բոլոր

⁸⁸ Տե՛ս UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of electronic authentication and signature methods, նշված աշխատությունը, 36-39 էջեր:

⁸⁹ Տե՛ս Schmitthoff's export trade, the law and the practice of international trade, 10th edition, London, 2000, էջ 693:

հարաբերություններում է անհրաժեշտ լինում հուսալիության այդքան բարձր մակարդակ: Ճատ դեպքերում կողմերը շեշտը դնում են գործարար շրջանառության արագության ու պարզության վրա:

Այս մոտեցմանը համարժեք է **հանրային բանալու մոդելը**, որի դեպքում իրավաբանական ուժ ունեն միայն այն թվային ստորագրությունները, որոնց համար նորմատիվ կարգով ձևակերպված է բաց բանալու պատկանելության մասին վկայական: Խոսքն իրավաբանական և տեխնիկական մեխանիզմների մասին է, որոնք ապահովում են փակ բանալիների գաղտնիությունը և բաց բանալիների սեփականատերերի նույնականացումը, թույլ են տալիս վերահսկել սերտիֆիկատներ տալ և ու սերտիֆիկացնող կենտրոնների լիցենզավորման գործընթացը:

Հանրային բանալու կառուցակարգի ներդրման դեպքում մի պետության իրավասու մարմինների կողմից տրված ստորագրությունները մյուս պետության ունում ճանաչվում են միայն այն դեպքում, եթե վերջինիս օրենսդրությամբ էլեկտրոնային ստորագրություններին ներկայացվում են նմանատիպ պահանջներ: Պետք է նշել, որ թվային ստորագրությունների հանրային բանալիները կարող են խնդրահարույց լինել, քանի որ սերտիֆիկատների ժամկետի ավարտից հետո կորցնում են իրենց ուժը, իսկ մասնավոր բանալիները կարող են դառնալ անընթեռնելի ծրագրային նոր ապահովումների պատճառով:

3. **Փոխկապված մոտեցման** դեպքում օրենսդրությունը էլեկտրոնային ստորագրություններին տալիս է ձեռագիր ստորագրություններին հավասար կարգավիճակ՝ հիմնվելով տեխնոլոգիապես չեզոք չափանիշի վրա, սակայն բարձր հուսալիություն տրամադրող տեխնոլոգիաները պետք է համապատասխանեն որոշակի պահանջների: Այս մոտեցմանը համապատասխանում է **չափանիշների վրա հիմնվող մոդելը**: Այսպիսի օրենսդրություն է մշակվել առաջին հերթին Սինգապուրում, այնուհետև Եվրոպական միությունում⁹⁰:

⁹⁰ Տե՛ս UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of electronic authentication and signature methods, նշված աշխատությունը, 40-42 էջեր:

«Ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար էլեկտրոնային նույնականացման և հավատարմագրային ծառայությունների վերաբերյալ» ԵՄ 910/2014 կանոնակարգով ստորագրությունները տարանջատվում են երկու կարգի՝ էլեկտրոնային ստորագրություն և առաջադեմ էլեկտրոնային ստորագրություն (advanced electronic signature)⁹¹: Ընդ որում՝ կանոնակարգվում են նաև էլեկտրոնային ու առաջադեմ էլեկտրոնային կնիքները: Դիրեկտիվի 2-րդ հոդվածում *էլեկտրոնային ստորագրությունը բնորոշվում է որպես էլեկտրոնային ձևով տվյալ, որը կցվում է կամ կապված է էլեկտրոնային այլ տվյալի հետ և ծառայում է որպես նույնականացման միջոց: Էլեկտրոնային ստորագրությունը համարվում է առաջադեմ, եթե այն բավարարում է հետևյալ պահանջները.*

- *այն ուրույն կերպով կապված է ստորագրող անձի հետ,*
- *այն թույլ է տալիս որոշել ստորագրողին,*
- *այն ստեղծվում է այնպիսի միջոցների օգտագործմամբ, որոնք ստորագրողը կարող է պահել իր միանձնյա հսկողության ներքո,*
- *այն կապված է այլ տվյալների հետ այնպես, որ տվյալների ցանկացած հաջորդական փոփոխություն կարող է բացահայտվել:*

Այս չափանիշների առկայությունը թույլ է տալիս ճանաչել էլեկտրոնային ստորագրությունը որպես առաջադեմ, և այն կարող է օգտագործվել դատարանում որպես ապացույց: Այդ ստորագրություններն ունեն ամբողջական իրավական գործողություն, ինչպես թանաքով կատարված ձեռագիր ստորագրությունները⁹²:

Այն էլեկտրոնային ստորագրությունները, որոնք չեն համապատասխանում վերոնշյալ պայմաններին, մտնում են ստորագրությունների առաջին կատեգորիայի մեջ: Այս ստորագրությունները չունեն հուսալիության այն մակարդակը,

⁹¹ Տե՛ս **Larry A. DiMatteo, Lucien J. Dhooge**, նշված աշխատությունը, էջ 544:
⁹² Տե՛ս E-commerce and Convergence, A guide to the Law of Digital Media, նշված աշխատությունը, 186-187 էջեր:

ինչ առաջ ադեմ էլ եկտրոնայ ին ստորագրու թյ ու ն ները⁹³: Միևնույն ժամանակ, սակայն, դիրեկտիվի 5-րդ հոդվածով չի թույլատրվում գրկել էլ եկտրոնայ ին ստորագրու թյ ու նը իրավաբանական ու ժից և որպես ապացույց ընդունել ու ց միայն այն հիմքով, որ այն.

- ունի էլ եկտրոնայ ին ձև կամ
- հիմնված չէ որակավորված սերտիֆիկատի վրա կամ
- հիմնված չէ հավատարմագրված սերտիֆիկացնող ծառայությունն ապահովողի կողմից տրված որակավորված սերտիֆիկատի վրա կամ
- չի ստեղծվել ապահով ստորագրու թյ ու ն ստեղծող սարքի կողմից:

Վերոնշյալ դիրեկտիվի ընդունման արդյունքում անդամ-պետությունները համապատասխանեցրին իրենց օրենսդրությունը ԵՄ դիրեկտիվի պահանջներին:

Անհրաժեշտ է նշել, որ «Էլ եկտրոնայ ին ստորագրու թյ ան մասին» ՌԴ օրենքի 2011 թվականի ինկորպորացիայի համաձայն՝ էլ եկտրոնայ ին ստորագրու թյ ու նը էլ եկտրոնայ ին ձևով ինֆորմացիա է, որը կցված է էլ եկտրոնայ ին ձևով այլ ինֆորմացիայի (ստորագրվող ինֆորմացիա), և որն օգտագործվում է ինֆորմացիան ստորագրող անձի իդենտիֆիկացման համար: Ընդ որում՝ վերջին փոփոխություններով օրենքը ստորագրու թյ ու ն ները տարանջատում է երկու տեսակների, ինչպես դրանք առկան են ԵՄ-ում, այն է՝ հասարակ էլ եկտրոնայ ին ստորագրու թյ ան և ուժեղացված էլ եկտրոնայ ին ստորագրու թյ ու ն (усиленная электронная подпись):

Վերլուծելով վերոհիշյալ մոտեցումները՝ պետք է նշել, որ թվային ստորագրու թյ ու նը, որը համապատասխանում է բաց մոդելի ինֆրաստրուկտուրային կամ որ նույնն է՝ տեխնոլոգիական մոտեցմանը, առավել ապես է պաշտպանում էլ եկտրոնայ ին փաստաթուղթը և երաշխավորում դրա նույնականությունը: Ձևականացված ընթացակարգը թույլ է տալիս ապահովել հուսալիություն շատ բարձր մակարդակ, որն առևտրաշրջանառության մասնակիցների համար համացանցերով խոշոր գործարքներ կատարելիս ունի սկզբունքային նշանակություն: Միևնույն

⁹³ Տե՛ս *Larry A. DiMatteo, Lucien J. Dhooge*, նշված աշխատությունը, էջ 544:

Ժամանակ այս մոտեցման կոշտությունը ստեղծում է խոչընդոտներ այն գործարքների համար, որոնց դեպքում հուսալիության այսքան բարձր մակարդակը ժամանակի և ֆինանսական միջոցների լրացուցիչ ծախս է: Այդ իսկ պատճառով զարգացած միջարք պետություններին օրենսդրություններն ամրապնդում են «չափանիշների վրա հիմնված» և «ստորագրություն թույլ տալու» մոդելները, որոնք թույլ են տալիս կիրառել տարբեր տեխնիկական մեխանիզմներ:

Էլեկտրոնային ստորագրության իրավական կարգավորումը և ձևավորված դատական արակտիկան.

Անդրադառնալով էլեկտրոնային ստորագրության իրավական կարգավորմանը միջազգային և ազգային մակարդակով և դրա հիմնական գործառնություններին՝ հարկ է առաջնահերթ արձանագրել, որ ընդունված ցանկացած ակտում առաջին հերթին ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ փաստաթուղթը կամ ստորագրությունը չպետք է գրկվի իրավական ուժից միայն այն հիմքով, որ էլեկտրոնային է:

Էլեկտրոնային հաղորդագրության առևտնտիկությունն ապահովելու համար ՄԱԿՄԱԻՅ-ի «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքի 7-րդ հոդվածով նախատեսվում է, որ եթե օրենքը պարտադիր է համարում անձի ստորագրության առկայությունը, ապա այդ պահանջը էլեկտրոնային հաղորդագրության դեպքում համարվում է կատարված, եթե.

ա. օգտագործվել է մի մեթոդ, որը հնարավորություն է տալիս անհատակացնել անձին և ցույց տալ, որ նա տվել է իր համաձայնությունը էլեկտրոնային հաղորդագրության մեջ ներառված ինֆորմացիային,

բ. այդ մեթոդը հուսալի է այնքանով, որքանով դա անհրաժեշտ է կոնկրետ հանգամանքներում տվյալ էլեկտրոնային հաղորդագրության ստեղծման կամ հաղորդակցության համար:

Փաստորեն, հոդվածում հատուկ ուշադրություն է դարձվում ստորագրության երկու գործառնություններին՝ փաստաթղթի հեղինակի հայտնաբերմանը և այդ փաստաթղթի բովանդակությանը նրա կողմից համաձայնելու փաստի հաստատմանը: Նմուշային օրենքը հենվում է մի մոտեցման վրա, որը հաճախ անվանվում է ֆունկցիոնալ-համարժեք

մոտեցում: Այդ մեթոդով վերհանվում են ավանդական գրավոր ձևի պահանջի սահմանման նպատակները, գրավոր ձևի գործառույթները որոշելու համար, թե դրանք ինչպես կարող են իրականացվել էլեկտրոնային միջոցներով⁹⁴: Թղթային փաստաթղթի ֆունկցիաներից են փաստաթղթի ընթեռնելի, չփոփոխված լինելը, կրկնօրինակ ստեղծելու հնարավորության առկայությունը, կողմին ստորագրության միջոցով նույնականացնելը և այլն: Չարկ է նկատել, որ էլեկտրոնային փաստաթղթերը վերոնշյալ ֆունկցիաները ամբողջությամբ կարող են կատարել, երբեմն անգամ կարող են ապահովել հուսալիության և արագության ավելի բարձր մակարդակ:

«Էլեկտրոնային ստորագրության մասին» ՄԱԿՄԱԻՉ-ի նմուշային օրենքի 6-րդ հոդվածը, էլեկտրոնային ստորագրությունների կիրառման կրկին տեխնոլոգիապես չեզոք մոդել նախատեսելով հանդերձ, առավել մանրամասն է կարգավորել էլեկտրոնային ստորագրությունների հուսալիության որոշման հարցը: Մասնավորապես, հիշյալ դրույթի համաձայն՝ էլեկտրոնային ստորագրությունը կարող է համարվել վստահելի, եթե.

ա. Ստորագրության ստեղծման տվյալները կապված են այն ստորագրողի և ոչ որևէ այլ անձի հետ,

բ. Այդ տվյալներն ստորագրման պահին եղել են ստորագրողի և ոչ այլ անձի վերահսկողության ներքո,

գ. Էլեկտրոնային ստորագրության ցանկացած փոփոխությունն հայտնաբերելի է,

դ. Այն դեպքերում, երբ պարտադիր է երաշխավորել, որ փաստաթուղթը միասնական ու ամբողջական է, ինֆորմացիայի ցանկացած փոփոխությունն կարող է հայտնաբերվել:

ԵՄ-ում էլեկտրոնային ստորագրություններին ճանաչում է տրվել «Ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար էլեկտրոնային նույնականացման և հավատարմագրային ծառայությունների վերաբերյալ» ԵՄ 910/2014 կանոնակարգը:

⁹⁴ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 20:

Էլեկտրոնային ստորագրություններին դրանով տրվել է հավասար ուժ, ինչ ձեռքով կատարվող ստորագրություններին: Կանոնակարգի բացթողումներից է այն, որ այն անդրադառնում է միայն ստորագրության իրավական կարգավիճակին՝ չանդրադառնալով այն փաստաթղթի իրավական կարգավիճակին, որին այն կցված է: Ավելին՝ դիրեկտիվը չի անդրադառնում նաև ապացույցի դատական քննարկմանը, այլ պարզապես նշում է, որ Էլեկտրոնային ստորագրությունները պետք է ընդունվեն որպես ապացույց: Կանոնակարգը չի հստակեցնում, թե կոնկրետ ինչ տեսակի ստորագրություններ պետք է կիրառվեն որոշակի գործարքների դեպքում: Արդյունքում Էլեկտրոնային ստորագրությունների կիրառման իրավական հետևանքները մինչ այժմ պարզ չեն և էականորեն տարբերվում են անդամ-պետությունում⁹⁵:

ԱՄՆ-ում Էլեկտրոնային առևտուրը կարգավորող օրենսդրության միասնականությունն ապահովելու համար ընդունվել են երկու ակտեր՝ Էլեկտրոնային գործարքների վերաբերյալ միասնական ակտը (the Uniform Electronic Transactions Act) և «Գլոբալ և ազգային առևտուրում Էլեկտրոնային ստորագրությունների մասին» ակտը (the Electronic Signatures in Global and National Commerce Act (E-sign)). UETA-ն նմուշային օրենք է իր բնույթով, որը կարող է տարբեր նահանգների կողմից փոփոխության ենթարկվել և հարմարեցվել: Արդյունքում բազմաթիվ նահանգներ դրա հիման վրա ընդունել էին տեղային օրենք, սակայն կատարել էին մի շարք փոփոխություններ, ինչը կրկին բերել էր անկայունության և ոչ միատեսակ օրենսդրության: Վիճակը շտկելու համար ԱՄՆ Կոնգրեսը 2000 թվականին ընդունեց E-sign-ը: Այն, ի տարբերություն նախորդի, դաշնային օրենսդրություն է, որը կիրառելի է բոլոր նահանգներում: Փաստացի երկու օրենքներն էլ իրենց բնույթով ընթացակարգային են և կոչված են ապահովելու միասնական իրավական դաշտի ձևավորումը Էլեկտրոնային փաստաթղթերի և ստորագրությունների կիրառման դեպքում: Օրենքներում նշվում է, որ Էլեկտրոնային ստորագրությունը չի կարող զրկվել իրավական ուժից միայն այն պատճառով, որ կատարվել

⁹⁵ Տե՛ս *Martien Schaub*, նշված աշխատությունը, 131, 141 էջեր:

Ե Էլ Եկտրոնայ ին ձևով, ընդ որում օրենքը որևէ առավել ություն չի տալիս Էլ Եկտրոնայ ին ձևերից որևէ մեկին⁹⁶: Պետք է հավելել, որ Էլ Եկտրոնայ ին ստորագրությունների համարժեքությունը ճանաչվել է նաև Չինաստանում ու Կորեայում⁹⁷: Կանադայի օրենսդրությունը հնարավոր է համարում վկայի կողմից իր պարտականությունների կատարումը Էլ Եկտրոնայ ին ստորագրությամբ կատարել⁹⁸:

Ըստ «Էլ Եկտրոնայ ին փաստաթղթի և Էլ Եկտրոնայ ին թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ *Էլ Եկտրոնայ ին թվային ստորագրություն է համարվում Էլ Եկտրոնայ ին թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ Էլ Եկտրոնայ ին փաստաթղթի ստեղծկատվության կրիպտոգրաֆիական փոխակերպությունների միջոցով ստացված և Էլ Եկտրոնայ ին թվային ձևով ներկայացված պայմանաշանների եզակի հաջորդականությունը, որը կցված կամ տրամաբանորեն կապված է Էլ Եկտրոնայ ին փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև Էլ Եկտրոնայ ին փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար*: «Էլ Եկտրոնայ ին փաստաթղթի և Էլ Եկտրոնայ ին թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ *Էլ Եկտրոնայ ին փաստաթղթի պաշտպանվածությունն ապահովելու նպատակով Էլ Եկտրոնայ ին փաստաթուղթը կարող է ներառել մեկ կամ մի քանի Էլ Եկտրոնայ ին թվային ստորագրություններ: Էլ Եկտրոնայ ին թվային ստորագրությամբ պաշտպանված Էլ Եկտրոնայ ին փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է Էլ Եկտրոնայ ին թվային ստորագրության իսկությունը, և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության՝ բացառությամբ այն*

⁹⁶ Տե՛ս *Twomeu I., Jennings D., Fox M.*, նշված աշխատությունը, էջ 302:

⁹⁷ Տե՛ս *Minyan Wang*, The Impact of Information Technology Development on the Legal Concept – A Particular Examination on the Legal concept of Signatures, International Journal of Law and Information Technology, Volume 15, 2007, էջ 8:

⁹⁸ Տե՛ս Electronic Transactions Act and Digital Signature Act: Background, Major Provisions and Implication, OECD Forum on Electronic Commerce, 12-13 October, 1999, Paris, էջ 5:

դարձու նակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոնշյալ օրենքում տրված էլեկտրոնային ստորագրության հասկացությունից հետևում է, որ չնայած դրանում առկա չէ որևէ կոնկրետ տեխնոլոգիայի օգտագործման պայման, սակայն միաժամանակ թվային ստորագրություն չհամարվող էլեկտրոնային ստորագրությունների որևէ իրավական կարգավիճակ և ճանաչում տրված չէ, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ մեր օրենքի նման իրավակարգավորումը առավել ապես համապատասխանում է վերևում նշված տեխնոլոգիական մոտեցման հատկանիշներին, թեև ունի որոշ առանձնահատկություններ (կոնկրետ տեխնոլոգիաների կիրառման պահանջի բացակայություն):

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում «Էլեկտրոնային թվային ստորագրություն» արտահայտությունը այն բովանդակությամբ, ինչպես այն տրված է օրենքում, մեր կարծիքով, նկարագրում է պարզապես թվային ստորագրությունը, քանի որ տեսության մեջ հայտնի և գործնականում մեծ տարածում ստացած էլեկտրոնային ստորագրության այլ տեսակների (կոդեր, գաղտնաբառեր, մատնահետքեր, անուն-ազգանուն) կիրառումը նման կարգավորման պարագայում բացառվում է: Օրենսդրի տված այսպիսի ձևակերպումը ճշգրտորեն համապատասխանում է շատ երկրներում, ինչպես նաև միջարք միջազգային փաստաթղթերում տրված թվային ստորագրության հասկացությանը: Ավելին՝ նման կարգավորումը օրենքում որևէ այլ ձևակերպման բացակայության պարագայում (օր.՝ այնպիսի կարգավորում, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ չապահովված մյուս էլեկտրոնային փաստաթղթերը չեն կարող զրկվել իրավական ուժից միայն այն հիմքով, որ էլեկտրոնային են) վիճելի էր դարձնում բոլոր մյուս էլեկտրոնային փաստաթղթերի իրավական և ապացուցողական ուժը և դատարանների կողմից դրանց ընդունելի լինելու հանգամանքն ու վերաբերմունքը: Խնդիրը մասամբ լուծվել է 2016թ. հունիսին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ մասում կատարված փոփոխությամբ, այդուհանդերձ, համակարգային

լ ու ծ ու մ տալ ու համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել հենց «Էլ եկտրոնային փաստաթղթի և Էլ եկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխության կատարմանը: **Ուստի առաջարկում ենք «Էլ եկտրոնային փաստաթղթի և Էլ եկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի վերտառությունը փոխել «Էլ եկտրոնային փաստաթղթի և Էլ եկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենք վերտառությամբ: Նման պարագայում օրենքում հարկ է նախատեսել Էլ եկտրոնային ստորագրության, իսկ այնուհետև թվային ստորագրության հասկացությունները, որոնցից առաջինը պետք է լինի շատ ավելի լայն և ընդգրկի թվային ստորագրությունը՝ որպես իր տարատեսակ: Էլ եկտրոնային ստորագրության հասկացությունը չպետք է լինի սահմանափակ, այլ պետք է հնարավոր համարի անձի իդենտիֆիկացման ցանկացած միջոց, եթե այն կլինի հուսալի և եթե վստահաբար հնարավոր կլինի որոշել, որ բովանդակությունը փոփոխության չի ենթարկվել: Նման պարագայում օրենքով, փաստորեն, հաշվի կառնվեն նաև տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում սպասվող հետագա զարգացումները ծրագրային և ապարատային ապահովման առումով: Բացի այդ՝ օրենսդիրը կարող է ավելի հեռուն գնալ և նախատեսել այնպիսի իրավական կարգավորում, ինչպիսին նախատեսվել է ԵՄ դիրեկտիվով: Ստորագրությունների երկու տեսակների (Էլ եկտրոնային ստորագրություն և առաջադեմ Էլ եկտրոնային ստորագրություն, որը նույնն է, ինչ թվային ստորագրությունը) նախատեսումը կկայունացնի ու կպարզեցնի Էլ եկտրոնային շրջանառությունը, ինչպես նաև ընդունելի կդարձնի ՀՀ-ում կիրառված Էլ եկտրոնային թվային ստորագրությունները ԵՄ-ում⁹⁹:**

⁹⁹ Գիտնականները քննարկել են նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում Էլ եկտրոնային փաստաթղթաշրջանառության հետ կապված հարցերը: Այսպես, ենթադրենք՝ պայմանադիր կողմերն ունեն Էլ եկտրոնային ստորագրություն և կնքում են Էլ եկտրոնային պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, դրանից ծագող իրավունքներն Էլ՝ պետական գրանցման: Իհարկե, կարելի է պայմանագիրը կնքել Էլ եկտրոնային ձևով, իսկ այնուհետև թղթային կրկնակներն ուղարկել գրանցման, սակայն այսպիսի հիբրիդային տարբերակը ակնհայտորեն զրկում է Էլ եկտրոնային փաստաթղթաշրջանառությունը մի շարք առավելություններից: Տեսություն մեջ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման Էլ եկտրոնային գրանցման առնչությամբ գերիշխող մոտեցումն այն է, որ անշարժ գույքի հատուկ նշանակությամբ պայմանավորված Էլ եկտրոնային ձևով նման պայմանագրերի կնքումը պետք է բացառել կամ մանրամասն կանոնակարգել,

Այժմ անդրադառնանք ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ փաստաթղթերի և ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ստորագրությունների ընդունման առնչությամբ զարգացած երկրներում և Հայաստանի Հանրապետությունում ձևավորված դատական պրակտիկային:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ փաստաթղթերի հարցում դատական պրակտիկան միանշանակ չէ: Այսպես, գոյություն ունի ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ գրառումների ապացուցողական ուժի ճանաչման միտում: Առավել լիբերալ մոտեցում են ցուցաբերում այս հարցում ԱՄՆ դատարանները, որոնք հաճախ որպես ապացույց դիտարկում են նաև ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ փոստը: Օրինակ՝ այն դեպքերում, երբ կողմերը պարբերաբար օգտագործել են ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ փոստը իրենց բանակցություններում, դատարանները որոշել են, որ նամակի վերջում անձի անվան կամ անվան և ազգանվան առկայությունը բավարար է այն ստորագրություն դիտարկելու համար: Գերակշռող դիրքորոշումն այն է, որ ստորագրությունը ցանկացած սիմվոլ է, որը մի կողմը հատկապես նշել է իր անձն ու իր գրածը նույնականացնելու համար: Այսպիսի մոտեցում են որդեգրել նաև Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի դատարանները¹⁰⁰: Մայրցամաքային իրավունքի երկրները հակված են ավելի կոշտ մոտեցման, քանի որ այս երկրների մեծ մասում փաստաթուղթը ենթադրում է նույնականացման որոշակի ընդունված ձև¹⁰¹:

Հարկ է ընդգծել, որ այս կապակցությամբ օրենսդրությունն ու դատական պրակտիկան մեծ դեր են կատարում, քանի որ ըստ այդմ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ երկրում ձևավորվում է ապահով միջավայր ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ապացույցների թույլատրելիության տեսանկյունից: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ապացույցները կարևորվում են նաև

որպեսզի չառաջանա անշարժ գույքի շրջանառության անկայունության սպառնալիք (Տե՛ս Kapev Я. А., նշված աշխատությունը, էջ 55):

¹⁰⁰ Mehta v J. Pereira Fernandes SA 2006թ. գործով ընկերության տնօրենի անունից ուղարկվել էր ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ անձնական երաշխավոր, որը, սակայն, չի պարունակել վերջինիս անունն ու ստորագրությունը: Այդուհանդերձ, ծառայություն մատուցողները (service provider) կարողացել են ցույց տալ այն ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ հասցեն, որից ուղարկվել էր նամակը: Բրիտանական դատարանը գտել էր, որ եթե նամակը վերջում պարունակեր վերջինիս անունը, դրանով կհիմնավորվեր, որ նա հատուկ է կատարել այդ նշումը, որպեսզի այն ընդունվի որպես ստորագրություն, ապա այն կընդունվեր որպես ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ստորագրություն:

¹⁰¹ Տե՛ս UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of electronic authentication and signature methods, նշված աշխատությունը, 48-50 էջեր:

ընկերությունների կողմից իրենց հարկային կամ աուդիտ պարտականությունները կատարելիս¹⁰²:

«Էլեկտրոնային առևտրի մասին» ՄԱԿՄԱԻՅ-ի նմուշային օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր դատավարական գործողության ժամանակ օրենքի դրույթները չպետք է կիրառվեն այն ձևով, որ բացառվի Էլեկտրոնային փաստաթղթի՝ որպես ապացույցի թույլատրելիությունը: Էլեկտրոնային փաստաթղթի ձևով ներկայացված տեղեկությանը պետք է տրվի համապատասխան ապացուցողական ուժ: Էլեկտրոնային տվյալի ապացուցողական ուժը գնահատելիս պետք է ուշադրություն դարձնել հաղորդագրության ստեղծման, պահպանման և հաղորդակցման հուսալիությանը, ինֆորմացիայի միասնականությանը, ուղարկողի անձի իդենտիֆիկացմանը և այլ վերաբերելի գործոնների: ԶՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթեր և նյութեր, այդ թվում՝ **Էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները***¹⁰³: Փաստորեն, Էլեկտրոնային միջոցներով փոխանցված փաստաթղթերը, հավասարեցվելով գրավոր ապացույցներին, ունեն դրանց հավասար ապացուցողական ուժ, և այդ դեպքում անհրաժեշտ է լինում միայն հիմնավորել դրանց իսկությունը, ինչը թվային ստորագրության առկայության պարագայում որևէ խնդիր չի առաջացնի: ԶՅ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը¹⁰⁴: ԶՅ վճռաբեկ դատարանը թիվ

¹⁰² Տե՛ս *Bacchetta M., Low P., Mattoo A., Schuknecht L., Wagerand H., Wehrens M.*, նշված աշխատությունը, էջ 37:

¹⁰³ Տե՛ս ԶՕ-247, ընդունվել է 17.06.1998թ.-ին, ուժի մեջ է 01.01.1999թ.-ից:

¹⁰⁴ Տե՛ս ԶՅ Սահմանադրություն (2005թ. և 2015թ. փոփոխություններով) (ընդունվել

Լ Դ0749/02/10 և թիվ ԵԿԴ 2293/02/10 քաղաքացիական գործերով 27.04.2012թ.-ին կայացված որոշումներում¹⁰⁵, անդրադառնալով փաստաթուղթ հասկացող թյանը, արձանագրել է. «Փաստաթուղթ տերմինի մեկնաբանությունն անհրաժեշտ է կատարել՝ հաշվի առնելով նաև երկրում գործող փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կարգավորումը: Ուստի «փաստաթուղթ» տերմինը սույն հոդվածի իմաստով չպետք է նույնացվի բացառապես թղթային կրիչի օգտագործմամբ կազմված գրավոր արտահայտված տեղեկության հետ: Դրանում կարող են ներառվել կրիչի ցանկացած տեսակի (էլեկտրոնային (\$աքս, լուսապատճեն և այլն), նյութական այլ կրիչներ) օգտագործմամբ կատարված գրառումները: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «փաստաթուղթ» տերմինի նեղ մեկնաբանումն անհարկի սահմանափակում է և չի ներառում դեպքերի այն շրջանակը, որոնց պարագայում փաստաթղթերը կազմվում և տարածվում են էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ»: Պետք է նշել, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը թիվ ԵԿԴ 0750/02/12 քաղաքացիական գործով 14.11.2012թ. կայացված վճռով¹⁰⁶, հիմք ընդունելով կողմերի skype ծրագրով փոխանակված էլեկտրոնային հաղորդագրությունները, հաստատված է համարել կողմերի միջև աշխատանքային հարաբերությունների ծագման հանգամանքը: Այլ էլեկտրոնային ստորագրություններով ուղարկված փաստաթղթերի, ինչպես նաև չստորագրված փաստաթղթերի վերաբերյալ առայժմ ՅՅ-ում համապատասխան դատական պրակտիկա չի ձևավորվել:

Յարկ է նշել, որ էլեկտրոնային թվային ստորագրությունները ներկայումս լայնորեն կիրառվում են հարկային հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելիս: ՅՅ հարկային օրենսգրքի¹⁰⁷ 56-րդ հոդվածի համաձայն՝ հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում

Ե 05.07.1995թ.-ին, ու ժի մեջ է 13.07.1995թ.-ից)

¹⁰⁵ Տե՛ս ՅՅ վճռաբեկ դատարանի թիվ Լ Դ0749/02/10 քաղաքացիական գործով 27.04.2012թ. որոշումը, ՅՅ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ 2293/02/10 քաղաքացիական գործով 27.04.2012թ. որոշումը:

¹⁰⁶ Տե՛ս Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԵԿԴ0750/02/12 քաղաքացիական գործով 14.11.2012թ. վճիռ

¹⁰⁷ Տե՛ս թիվ ՅՕ-165-Ն օրենք, ընդունվել է 04.10.2016թ.-ին, ու ժի մեջ է 01.11.2016թ.-ից ՅՅՊՏ 2016.11.04/79(1259):

Էլեկտրոնային ձևով: Այսինքն՝ հաշվարկային փաստաթղթերի Էլեկտրոնային ձևով դուրսագրումը պարտադիր է: Նույն օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողները **Էլեկտրոնային ստորագրու թյամբ** վավերացնում են հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ընդունված աշխատանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների, աշխատանք կատարողների և ծառայություն մատուցողների կողմից դուրս գրված հարկային հաշիվները: Պետք է նշել, որ հարկային հաշիվները սովորաբար հանդես են գալիս որպես գործարքի կատարման ապացույց, քանի որ դրանք դուրս գրելուց առաջ կողմերը հիմնականում արդեն իսկ կնքել են պայմանագիր կամ ձեռք բերել բանավոր պայմանավորվածություն:

Գրավոր փաստաթղթի և ձեռագիր ստորագրու թյան համեմատու թյունը Էլեկտրոնային փաստաթղթի ու Էլեկտրոնային ստորագրու թյան հետ

Գրավոր փաստաթղթերի և ձեռագիր ստորագրու թյունների, ինչպես նաև Էլեկտրոնային փաստաթղթի և Էլեկտրոնային ստորագրու թյունների նպատակների, գործառույթների վերլուծու թյան արդյունքում հանգում ենք այն եզրակացու թյանը, որ Էլեկտրոնային պայմանագրերը սկզբունքային առումով չեն տարբերվում թղթային կրիչի վրա կնքված պայմանագրերից: Պետք է համաձայնել ամերիկյան այն հետազոտողների հետ, որոնք նշում են, որ գործարքի տեսակը որոշվում է նրա առարկայով, այլ ոչ թե կնքման ձևով, հետևաբար Էլեկտրոնային պայմանագիրը պայմանագրի առանձին տեսակ չէ¹⁰⁸: Էլեկտրոնային միջոցներով պայմանագրերի կնքումը որևէ կերպ չի հանգեցնում պայմանագրի բովանդակային էու թյան փոփոխու թյան (օր.՝ առու ծախի կամ ցանկացած այլ քաղաքացիաիրավական պայմանագրի դեպքում պայմանագրի հասկացու թյունն ու էու թյունը բովանդակային տեսանկյունից չի փոխվում): Այսինքն՝ Էլեկտրոնային պայմանագրերը չեն կարող կազմել մի համախումբ և ուսումնասիրվել առանձին որպես պայմանագրի առանձին տեսակ (օրինակ՝ ընդհանրացնելով

¹⁰⁸ Տե՛ս *Donnie Jr., Kidd L., and Danghtrey W.* Adapting Contract Law to Accommodate Electronic Contracts//Rutgers Computer and Technology Law Journal. Vol. 26, էջ 269:

«Էլ Եկտրոնայ ին առևտուր» տերմինի ներքո): Ընդհակառակը՝ Էլ Եկտրոնայ ին միջոցները պետք է լինեն որպես տարբերակման հիմք միայն ձևի տեսանկյունից ու հետևաբար յուրաքանչյուր գործարքի ու պայմանագրի հետ կապված՝ գրավոր ձևին զուգահեռ պետք է անդրադառնալ նաև Էլ Եկտրոնայ ին միջոցներով կնքված տվյալ պայմանագրի տեսակի առանձնահատկություններին:

Գրավոր և Էլ Եկտրոնայ ին փաստաթղթերի շուրջ կամ մասին կատարված վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ **Էլ Եկտրոնայ ին փաստաթղթերն առնվազն իրականացնում են գրավոր փաստաթղթի գործառույթները: Ինչ վերաբերում է Էլ Եկտրոնայ ին ստորագրություններին, ապա դրանց առաջին հոլսալի տեսակների օգտագործման պարագայում կարող ենք եզրակացնել, որ դրանք ապահովում են հոլսալ իություն բարձր մակարդակ և ապացուցելի են դարձնում փաստաթղթի փոփոխված լինելու, ինչպես նաև դրա կազմման ժամանակի, հեղինակի հայտնաբերման հանգամանքները, ինչը հաճախ անհնար է կամ մոտավոր արդյունքներ է տալիս գրավոր փաստաթղթերի պարագայում: Ընդ որում՝ Էլ Եկտրոնայ ին փաստաթղթերն ունեն մեկ առավելություն ևս. դրանց՝ կոնկրետ անհատից դուրս եկած լինելու, ստորագրվելու, փոփոխության ենթարկված լինելու հանգամանքները որևէ ձեռագրաբանական կամ այլ տեսակի փորձաքննության չեն ենթարկվում:** Ավելին՝ թվային ստորագրությունները սերտիֆիկատները հաճախ օգտագործվում են սերվերներն ու կայքերը, համակարգչային ծրագրերը (օր.՝ երաշխավորելու կայքից ներբեռնված ծրագիրը) նույնականացնելու համար¹⁰⁹: Համոզված ենք, որ պետական քաղաքականության կազմակերպման տեսանկյունից Էլ Եկտրոնայ ին առևտրի տարածման սկզբնական շրջանում արդարացված է եղել պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից որդեգրված այն մոտեցումը, որ Էլ Եկտրոնայ ին փաստաթղթերը չպետք է զրկվեն իրավական ուժից զուտ Էլ Եկտրոնայ ին լինելու հանգամանքի պատճառով, և որ դրանք պետք է ընդունվեն որպես գրավոր ձևին հավասար: Հարկ է ընդգծել, որ շատ դեպքերում

¹⁰⁹ Տե՛ս UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of electronic authentication and signature methods, նշված աշխատությունը, 19-20 էջեր:

այսպիսի մոտեցումը թույլ է տվել խուսափել բազմաթիվ օրենսդրական փոփոխություններից, քանի որ միայն մեկ կոդիֆիկացված կամ որևէ այլ իրավական ակտում ամրագրելով, որ գրավոր ձևի պահանջը պահպանված կլինի նաև այն դեպքում, երբ փաստաթուղթը ստացվել է էլեկտրոնային եղանակով, արդեն իսկ բավարար է եղել մնացած ակտերում նման կարգավորումն ապահովելու համար: Ավելին՝ այս մոտեցումը նաև արդարացված է եղել այն հանգամանքով, որ տեխնոլոգիական տեսանկյունից և էլեկտրոնային շուկայի անկանխատեսելի զարգացումների պարագայում էլեկտրոնային առևտուրն ու պայմանագրերը գտնվել են զարգացման ցածր աստիճանի վրա, և այդ պահին ամբողջական պատկերացում չունենալու պայմաններում հստակ կարգավորիչ լուծումներ տալը կարող էր հանգեցնել հակառակ արդյունքների, այն է՝ դրանց զարգացմանը խոչընդոտելուն:

Թեև կարծում ենք, որ պետությունների որդեգրած քաղաքականությունը մինչ այժմ արդարացրել է իրեն, այդուհանդերձ, համարում ենք, որ էլեկտրոնային հաղորդագրությունների յուրահատկությունն արդեն իսկ թույլ է տալիս խոսել տեղեկության ներկայացման նոր՝ **էլեկտրոնային ձևի** մասին: Էլեկտրոնային հաղորդագրությունները, անկասկած, տեղեկատվության ներկայացման յուրահատուկ ֆիզիկական ձևեր են: Թեև կողմերի միջև հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը չի փոխվում էլեկտրոնային ձևով կնքվելու դեպքում, բայց և պայմանագրերի կնքման այս նոր ձևը պահանջում է նաև նոր կանոնների նախատեսում, որոնք պետք է վերաբերեն դրանց ապացուցողական ուժին, կողմերի միջև պայմանագրային պարտավորությունների առկայությանը, պայմանագրերի կնքման մասին կանոններին¹¹⁰: Չարկ է ընդգծել, որ էլեկտրոնային ձևով կնքված պայմանագրերն ունեն իրենց առանձնահատկությունները օֆերտայի և ակցեպտի, պայմանագիրը կնքված համարելու պահի, վճարումների կատարման, վեճերի պարագայում միջազգային մասնավոր իրավունքի նորմերի կիրառման ոլորտներում և հենց

¹¹⁰ St'u Актуальные проблемы гражданского права, выпуск 4-ый, Исследовательский центр частного права, Сборник статей под редакцией профессора М. И. Брагинского, Москва, 2002, էջ 308:

այդ առանձնահատկություններն են, որ թույլ են տալիս խոսել պայմանագրերի ձևակերպման մեկ այլ՝ էլեկտրոնային ձևի մասին: Էլեկտրոնային ձևը պարտավորությունների ձևակերպման առավել կատարելագործված միջոց է, ընդ որում՝ եթե գրավոր ձևը բանավոր ձևի համեմատ առավել հուսալի է, ապա էլեկտրոնային ձևը (առայժմ թվային ստորագրության առկայության պարագայում միայն) գերազանցում է գրավորին մի շարք չափանիշներով: **Կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական իրավունքի տեսության մեջ աֆսք է տարբերակել ու քննարկման առարկա դարձնել բանավոր և գրավոր ձևերի հետ միասին նաև գործարքների կնքման էլեկտրոնային ձևը: Այդուհանդերձ, առայժմ ՀՀ օրենսդրությունը, առկա արակտիկան ու զարգացումները պարտապաշտ են ընդունել ու պայմանագրերի կնքման առանձին ձևի՝ էլեկտրոնային ձևի նախատեսումը, որը կապահանջի յուրահատուկ կարգավորումներ ու չի հավասարեցվի գրավոր ձևին: Ուստի կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և հարակից օրենքներում կատարված և հետագայում նախատեսվող փոփոխություններն առայժմ բավարար են և որոշակի առումով կհանգեցնեն էլեկտրոնային ձևի կիրառման իրթանմանը:**

Վերոնշյալի հետ կապված՝ հարկ է անդրադառնալ նաև մեկ այլ կարևոր խնդրի: Ներկայումս թե՛ տեսության մեջ, թե՛ արակտիկայում լայնորեն կիրառվում է «**էլեկտրոնային առևտուր**» տերմինը, ընդ որում **թե՛ միջազգային, թե՛ ներաֆտական կարգավորումներում էլեկտրոնային առևտուր հասկացությունը հիմնականում չի սրվում:** Օրինակ՝ ՄԱԿՄԱԻՅ-ի «էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքը, չսահմանելով էլեկտրոնային առևտրի հասկացությունը, նշում է, որ օրենքը տարածվում է առևտրային գործունեության կոնտեքստում օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթի ձևով ցանկացած ինֆորմացիայի վրա: Առևտրային բնույթի հարաբերություններն ընդգրկում են, միևնույն ժամանակ չսահմանափակելով, հետևյալ գործարքները՝ ապանքների վաճառքի, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման հետ կապված գործարքները, գործակալում, \$ակտորինգը, լիզինգը, խրհրդատվությունը, լիցենզավորումը, ներդրումային գործունեությունը, ֆինանսավորումը,

ապահովագրական գործունեությանը, կոնցեսիոն համաձայնությանը, համատեղ գործունեությանը և գործարարական համագործակցության այլ ձևեր, ինչպես նաև ապրանքների կամ անձանց փոխադրումը օդային, ջրային, երկաթուղային կամ ավտոմոբիլային միջոցներով: Նույնափսի մոտեցում է դրսևորվել նաև ՄԱԿ-ի կոնվենցիայով: Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ կոնվենցիան տարածվում է էլեկտրոնային հաղորդագրությանը օգտագործման նկատմամբ միայն այն դեպքում, երբ կողմերի առևտրային ձեռնարկությանը գտնվում են տարբեր պետությաններում, այսինքն՝ սովորական սպառողների մասնակցությամբ կնքված գործարքների նկատմամբ կոնվենցիան չի կիրառվում: Պետք է ընդգծել, որ ԵՄ որևէ դիրեկտիվ ևս չի տալիս էլեկտրոնային առևտուր հասկացությանը: ՌԴ-ում մշակվել էր «Էլեկտրոնային առևտրի մասին» օրինագիծ, որը, սակայն, 2011 թվականին մերժվեց: *Այս առումով պետք է ընդգծել, որ էլեկտրոնային առևտրի բնագավառում ամենազարգացած երկրում՝ ԱՄՆ-ում անգամ էլեկտրոնային առևտրի հասկացությանը չի տրվում: Պատահական չէ, որ դեռևս 1999 թվականին ընդունված օրենքը վերաբերում է էլեկտրոնային ձևով կնքվող գործարքներին (UETA):*

Կարծում ենք, որ «Էլեկտրոնային առևտուր» տերմինի լայն կիրառությանը, բայց միևնույն ժամանակ դրա իրավական հասկացության բացակայությանը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ, «առևտուր» տերմինն ինքնին իրավաբանության մեջ գրեթե չի կիրառվում, այն տնտեսագիտական տերմին է: Էլեկտրոնային առևտուրը որպես ոլորտ ընդհանրապես և որպես տերմին մասնավորապես առավել լայն ու խորին ուսումնասիրվել է հենց տնտեսագետների կողմից: Դրանով է պայմանավորված տնտեսագետների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների հեղինակած բազմաթիվ գրքերի առկայությանը ու իրավաբանական գրականության սղությանը: Բացի այդ, էլեկտրոնային շուկան աշխատանքով է ապահովում բազմաթիվ տնտեսագետների, ծրագրավորողների, մինչդեռ էլեկտրոնային հարաբերությունները իրավական տեսանկյունից կարգավորվում են առավելապես գործարար շրջանառության

սովորույթներով կամ կայքերի կողմից մշակված և տեղադրված պայմանագրային դրույթներով, մանրամասն օրենսդրական կարգավորումը շատ դեպքերում բացակայում է: *Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության նույն էլեկտրոնային միջոցներով կնքվող պայմանագրերի կարգավորում նախատեսելու համար **անհրաժեշտ է ընդունել «Էլեկտրոնային առևտրի մասին» օրենք, որը, ինչպես այլ երկրների փորձն է ցույց տալիս, պետք է անդրադառնա կրկին էլեկտրոնային փաստաթուղթ և ստորագրություն, օֆերտայի և ակցեպտի ստացման ժամանակ և քաղաքացիաիրավական ընդհանուր բնույթ ունեցող այլ հարաբերությունների: Համոզված ենք, որ նման մոտեցումը կծանրաբեռնի օրենսդրությունը. գործարքի կնքման ձևերը, ձևով պայմանավորված առանձին պայմանագրերի առանձնահատկությունները իրենց կարևորության ու ժով կարգավորվում են հենց քաղաքացիական օրենսգրքով: Որևէ իրավական ակտում չենք կարող գտնել «գրավոր առևտուր» և նմանատիպ այլ հասկացության իրավական բնորոշում, ուստի անհրաժեշտ է նաև տնտեսագիտական բնույթ ունեցող «Էլեկտրոնային առևտուր» տերմինին իրավական բնորոշում տալ: Քաղաքացիական օրենսգրքի կառուցվածքի տրամաբանությունն հենց գործարքի ձևերի, իսկ այնուհետև յուրաքանչյուր պայմանագրի հետ կապված ձևին անդրադարձ կատարելն է: Նմանատիպ մոտեցում պետք է դրսևորվի նաև էլեկտրոնային ձևով կնքվող գործարքների հանդեպ: Ավելի ին, «Էլեկտրոնային առևտուր» տնտեսագիտական տերմինի ներքո պետք է հասկանալ առևտրային բնույթի ցանկացած պայմանագիր կամ պայմանագրերի համախումբ, որը կնքվում է էլեկտրոնային ձևով, իսկ ցանկացած հստակ հասկացության առկայությունը կարող է անհարկի սահմանափակել հետագայում առաջացող կամ անգամ ներկայումս առկա մի շարք էլեկտրոնային պայմանագրային հարաբերություններ:***

Հարկ է ընդգծել, որ մեր տարածաշրջանում իրանն ու Ադրբեջանը միակն են, որ ընդունել են էլեկտրոնային առևտրի մասին առանձին օրենքներ, որտեղ էլ հենց կարգավորում են ստացել գործարքի կնքման մասին մի շարք առանձնահատկություններ՝ պայմանավորված էլեկտրոնային ձևով: Ինչ վերաբերում է

Եվրոպական երկրներին, ապա դրանց մեծ մասում առանձնահատուկ կարգավորումը բացակայում է: Բացառություներ են կազմում Գերմանիան և Ֆրանսիան: Այսպես՝ Ֆրանսիայի Քաղաքացիական օրենսգրքը պայմանագրերի և պարտավորությունների վերաբերյալ ընդհանուր դրույթներում առանձին գլուխ է հատկացրել էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերին, որում անդրադարձ էլ է օՖերտայի և ակցեպտի առանձնահատուկություններին և միջարքայլ հարցերի¹¹¹: Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա վերջինիս քաղաքացիական օրենսգրքի 126-րդ սեկցիան անդրադառնում է պայմանագրերի կնքման էլեկտրոնային ձևին, ըստ որի՝ *Ելեկտրոնային ձևը պետք է փոխարինի գրավոր ձևին, ապա նման հայտարարությունն անողը պետք է նշի իր անունը հաղորդագրության վերջում և ապահովի էլեկտրոնային փաստաթղթին կից համապատասխան էլեկտրոնային ստորագրություն, որը կհամապատասխանի «Էլեկտրոնային ստորագրությունների մասին» ակտին: Պայմանագրի դեպքում կողմերից յուրաքանչյուրը պետք է տրամադրի մյուս կողմին իր էլեկտրոնային ստորագրությունը*¹¹²:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և առայժմ զերծ մնալով էլեկտրոնային ձևը որպես գործարքի կնքման առանձին ձև օրենսդրորեն ամրագրելու դիրքորոշումից՝ առաջարկում ենք քննարկել ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը հետևյալ փոփոխությունների և լրացումների կատարման հնարավորությունը: Այսպես, առաջարկվում է օրենսգրքի 296-րդ հոդվածի (Գործարքի ձևերը) 3-րդ մասում կատարել փոփոխություն և «Էլեկտրոնային թվային ստորագրության» արտահայտությունը փոխարինել «Էլեկտրոնային ստորագրության» արտահայտությամբ:

Ի զարգացումն նախորդ առաջարկությունների՝ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի (Պայմանագրի ձևը) 3-րդ

¹¹¹ Տե՛ս Civil Code of France, Ֆրանսիայի Հանրապետության իրավական ակտերի պաշտոնական կայք (<http://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070721&dateTexte=20130120>):

¹¹² Տե՛ս German Civil Code, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Արդարադատության նախարարության պաշտոնական կայք (http://www.gesetze-im-internet.de/englisch_bgb/englisch_bgb.html#p0369):

մասում ավելացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունը.

«Պայ մանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել նաև պայ մանագրի էական պայ մանները ներառող օֆերտային համաձայնելու նպատակով էլեկտրոնային համապատասխան կոճակը սեղմելով կամ էլեկտրոնային ցանկացած այլ կերպ որով կոդավորվի պայ մանագրի մեկ կողմի համաձայնությունը մյուս կողմի առաջարկած պայ մաներին»:

Կարծում ենք, որ նման կարգավորման պարագայում նոտարական վավերացման կամ իրավունքների պետական գրանցման մասին ընդհանուր դրույթները պետք է պահպանեն իրենց ուժը և հավասարապես տարածվեն էլեկտրոնային ձևով կնքվող գործարքների վրա: Պարզապես դրանցում պետք է դրույթ ավելացնել, որով հնարավորություն կընձեռվի նոտարական վավերացումն ու իրավունքների պետական գրանցումն իրականացնել նաև էլեկտրոնային ձևով, եթե նման մեխանիզմներ ներդրվեն:

ԳԼՈՒԽ 2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ

§2.1. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ԱՅՅ ՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Քաղաքացիական իրավունքի տեսության մեջ տարբերում են պարտավորությունների մի շարք տեսակներ, այդ թվում՝ ըստ պարտավորությունների ծագման հիմքերի՝ պայմանագրային և արտապայմանագրային պարտավորություններ: Պայմանագրային են համարվում այն պարտավորությունները, որոնք ծագում են կողմերի կամքով և նրանց համաձայնության հիման վրա: Սովորաբար պայմանագրային են համարվում նաև այն պարտավորությունները, որոնք ծագում են այլ իրավաչափ գործողություններից՝ վարչական ակտերից, միակողմանի գործարքներից: Արտապայմանագրային են համարվում այն պարտավորությունները, որոնք առաջանում են ուրիշի անձին կամ գույքին վնաս պատճառելու, առանց բավարար հիմքերի գույքը տնտեսելու կամ ձեռք բերելու հետևանքով¹¹³:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարել իր պարտականությունը: Պարտավորությունները բխում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Ակնհայտ է, որ տեսության մեջ առանձնացվող պայմանագրային և արտապայմանագրային պարտավորությունները նախատեսված են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ նորմով: Այս տեսանկյունից պարտավորությունների մեծ մասը կազմում են պայմանագրային պարտավորությունները, քանի որ

¹¹³ Տե՛ս *Բարսեղյան Տ. Կ.*, նշված աշխատությունը, էջ 416:

քաղաքացիաիրավական շրջանառության մեջ քաղաքացիները բազմիցս մտնում են երկարաժամկետ և կարճաժամկետ պայմանագրային հարաբերությունների մեջ, որոնք էլ ավելի մեծ խթանում են ստացել էլ եկտրոնային միջոցների զարգացման արդյունքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի յոթերորդ բաժինը նվիրված է պայմանագրերից ծագող պարտավորություններին, որը բաղկացած է յոթ ենթաբաժիններից, ընդ որում՝ *առաջին ենթաբաժինը նվիրված է պայմանագրի մասին ընդհանուր դրույթներին, որում, սակայն, մինչև 2016թ. հունիսին տեղի ունեցած օրենսդրական քարեխոխումները, բացառությամբ մեկ դրույթի, որևէ այլ կարգավորում առկաչէր էլ եկտրոնային ձևով կատարվող օֆերտայի և ակցեպտի առանձնահատկությունների վերաբերյալ:*

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ մասի նախկին խմբագրության համաձայն, *պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով փաստաթղթեր փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը էլնում է պայմանագրի կողմից:* ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրահսկությունը և ճշգրիտորոշելու, որ այն էլնում է պայմանագրի կողմից:

Հանրահայտ է, որ պայմանագիրը համաձայնություն է, որը կազմվում է երկու կամ ավելի կողմերի կամահայտնության արդյունքում, որոնք որոշում են կատարել որոշակի գործողություն կամ զերծ մնալ գործողություն կատարումից¹¹⁴:

¹¹⁴ Տե՛ս **Roger LeRoy Miller, Gaylord A. Jentz**, Business Law Today, second edition, West Publishing Company, 1991, էջ 154: Տե՛ս նաև Elliot I. Klayman, John W. Bagby, Nan S. Ellis, Irwin's Business Law, concepts, analysis, perspectives, USA, 1994, էջ 220:

Էլ Եկտրոնայ ին միջավայրում տարածված են Էլ Եկտրոնայ ին պայմանագրեր կնքելու չորս հիմնական եղանակներ: Այսպես՝

1. Ամենատարածված եղանակը **համացանցով պայմանագիր կնքելն է**, որը նման է թղթային փաստաթղթերի փոխանակմամբ պայմանագիր կնքելուն, այն անցնում է բանակցային արոցեսսև հայտնի է նաև «պայմանագիր Էլ Եկտրոնայ ին փոստի միջոցով» անվամբ: Այս կերպ կնքվող պայմանագրերի դեպքում կողմերը փոխանակում են Էլ Եկտրոնայ ին նամակներ, որոնց կարող են կցել նաև առանձին փաստաթուղթներ առող պայմանագրի պայմանները:

2. Երկրորդ եղանակը **Էլ Եկտրոնայ ին պայմանագիրն է, որը կնքվում է կոնկրետ կայքում**: Այս դեպքում պայմանագիր կողմերից մեկն ունի կայք, որտեղ գովազդում է իր ապրանքներն ու ծառայությունները: Ապագա գնորդը մտնում է կայք և լրացնելով Էլ Եկտրոնայ ին ձևաթուղթը՝ կնքում է պայմանագիր ու պատվիրում իրեն անհրաժեշտ ապրանքը կամ ծառայությունը:

3. Երրորդ եղանակով կնքվող **պայմանագրերի դեպքում կողմերը բանակցում են Էլ Եկտրոնայ ին տվյալների փոխանակման համաձայնագրի շուրջ (Electronic Data Interchange Agreement (EDI))**: Էլ Եկտրոնայ ին տվյալների փոխանակումը համակարգիչ-համակարգիչ տվյալների փոխանցումն է ստանդարտացված ձևով: Այն թույլ է տալիս ընկերություններին փոխանակել փաստաթղթեր կամ համացանցով կամ իրենց մասնավոր ցանցերով: Ընդ որում, Էլ Եկտրոնայ ին տվյալների փոխանակման համաձայնագիրը կիրառելի է միայն այն դեպքում, երբ կողմերը համաձայնել են դրա բովանդակությանը¹¹⁵:

Առաջին հայացքից թվում է, թե Էլ Եկտրոնայ ին փոստով կամ Էլ Եկտրոնայ ին տվյալների փոխանակմամբ պայմանագիր կնքելը նույնանում են, քանի որ, ըստ էության, երկու դեպքում էլ տեղի է ունենում օֆերտայի և ակցեպտի փոխանակում: Սակայն առկա են տարբերություններ, մասնավորապես՝ Էլ Եկտրոնայ ին փոստը գործում է միայն այն դեպքում, երբ առկա է համացանց, և Էլ Եկտրոնայ ին փոստով պայմանագրերի կնքման կամ տվյալների

¹¹⁵ Տե՛ս **Sizwe Snail**, Electronic contracts in South Africa - a comparative analysis: Lex Informatica Conference, 21st-23rd May 2008 Pretoria, South Africa, Journal of Information, Law and Technology, 2008-2009, էջ 2:

փոխանակման համար որևէ լրացուցիչ սարք անհրաժեշտ չէ, պարտադիր չէ նաև մյուս կողմի համաձայնությունը էլեկտրոնային նամակ ուղարկելու համար:

Ի տարբերություն էլեկտրոնային փոստի՝ էլեկտրոնային տվյալների փոխանակումը տեղի է ունենում միայն գործարար պրակտիկայում և հիմնականում ընկերությունների միջև: Դրա կիրառության համար պարտադիր է, որ կողմերը համաձայնեն էլեկտրոնային տվյալների փոխանակման համաձայնագրին: Բացի այդ՝ այս ծրագրի գործածության համար անհրաժեշտ են համապատասխան սարքեր, և միայն այն համակարգիչներն են գործում այս ծրագրով, որոնց վրայ այդ սարքը տեղադրվել է¹¹⁶: Չարկե նկատել, որ քանի որ էլեկտրոնային փոխանակման փաստաթղթերը առանց մարդկային միջամտության ուղարկվում են հենց համակարգիչների կողմից, այդ իսկ պատճառով օգտագործվում է ստանդարտ ձևաչափ, որպեսզի բոլոր համակարգիչները կարողանան կարդալ և հասկանալ փաստաթղթերը¹¹⁷:

4. **Էլեկտրոնային պայմանագրերի կնքման չորրորդ եղանակը առցանց չափ-սենյակներում** պայմանագրերի կնքումն է¹¹⁸:

Էլեկտրոնային պայմանագրերի կնքման կարևոր հարցերից է ավտոմատացված համակարգչային համակարգերի օգտագործումը պայմանագրեր կնքելիս: Վերջիններս նախատեսում են պայմանագրի ավտոմատ կնքում այն ժամանակ, երբ մյուս կողմը դիմում է իրենց: Չաճախ դրանք անվանվում են էլեկտրոնային գործակալներ: Ներկայումս գործող միջազգային ակտերը չեն խոչընդոտում ավտոմատացված համակարգերի օգտագործումը: Ավտոմատացված համակարգերի դեպքում պայմանագրերի կնքման պահին մի կողմում հանդես է գալիս մարդը, մյուս կողմում՝ ծրագրավորված համակարգիչը, որի գործողությունները տվյալ պահին մարդու կողմից չեն վերահսկվում¹¹⁹: Էլեկտրոնային խանութ-կայքերն այնպես են ծրագրավորված, որ կարող են աշխատել առանց մարդկային

¹¹⁶ Տե՛ս What is the difference between EMAIL and EDI?, <http://www.preservearticles.com/2011121918599/what-is-the-difference-between-email-and-edi.html>

¹¹⁷ Տե՛ս Electronic Data Interchange, <http://www.edibasics.co.uk/what-is-edi/>

¹¹⁸ Տե՛ս **Sizwe Snail**, Electronic contracts in South Africa - a comparative analysis: Lex Informatica Conference, նշված աշխատությունը, էջ 2:

¹¹⁹ Տե՛ս Principles of European Union Law by Ralph H. Folsom, 2005, էջ 245:

միջամտության: Ապրանքի կամ ծառայության մասին տեղեկատվություն տրամադրելուց հետո դրանց ակցեպտ տրվելու դեպքում ծրագիրը մեխանիկորեն պատասխանում է ն թույլ է տալիս հետևել հետագա քայլերին վերջնական վճարում կատարելու և պայմանագիրը կնքված համարելու նպատակով: Գործարքի իրականացման համար ցանցում գտնվող յուրաքանչյուր օգտագործող (user) կարող է մտցնել իր մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները ցանցում տեղադրված ֆորմուլյարում, իսկ այնուհետև հաստատել գործարքը՝ իր բանկային քարտի համարը հավաքելով:

«Էլեկտրոնային գործարքների մասին» ԱՄՆ միասնական օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետում ասվում է, որ Էլեկտրոնային գործակալը համակարգչային ծրագիր է կամ այլ ավտոմատացված համակարգ, որը կարող է գործել առանց մարդկային միջամտության, իսկ կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ հաղորդագրությունների ավտոմատացված համակարգը ասելիս հասկանում են համակարգչային ծրագիր կամ Էլեկտրոնային կամ այլ ավտոմատացված միջոցներ, որոնք օգտագործվում են առանց որևէ ֆիզիկական անձի միջամտության կամ հսկողության այս կամ այն գործարքը նախածեռնելու կամ հաղորդագրություններին, գործողություններին պատասխանելու համար:

Այս դեպքում առաջանում է մի յուրահատուկ իրադրություն, երբ պայմանագիր կնքելիս առնվազն մի կողմից հանդես է գալիս ոչ թե կոնկրետ անձ, այլ գործող անշունչ ավտոմատացված համակարգ, որը գործում է որևէ անձի կամ առևտրային կազմակերպության անունից:

ՄԱԿ-ի Կոնվենցիայի 12-րդ հոդվածում ասվում է, որ ավտոմատացված համակարգի օգտագործմամբ կնքված գործարքները չեն կարող զրկվել վավերությունից կամ հայցային ուժից միայն այն հիմքով, որ որևէ ֆիզիկական անձ չի իրականացրել վերահսկողություն կամ միջամտություն կոնկրետ գործարքի նկատմամբ, որն իրականացվել է հաղորդագրությունների ավտոմատացված համակարգերի միջոցով: Յետևում է, որ կոնվենցիայով սահմանվում է այդպիսի գործարքների վավերության կանխավարկածը: ԱՄՆ վերոնշյալ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետը

տալ իս է ավտոմատացված գործարքի հասկացությունը. գործարք, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել է համակարգչային ծրագրի կամ էլեկտրոնային կամ այլ ավտոմատացված միջոցների օգնությամբ, երբ առանց որևէ կողմի կողմից որևէ ֆիզիկական անձի միջամտության համակարգի միջոցով սկսվում է որևէ գործարք կամ պատրաստվում է պատասխան: Ըստ օրենքի 14-րդ հոդվածի՝ ավտոմատացված գործարքում գործում են հետևյալ կանոնները.

Ա. Պայմանագիրը կարող է ձևավորվել կողմերի էլեկտրոնային գործակալների միջոցով, եթե անգամ որևէ անհատտեղյակ չի եղել կամ չի հետևել գործակալների գործողություններին կամ պայմանագրի պայմաններին:

Բ. Պայմանագիրը կարող է կնքվել էլեկտրոնային գործակալի և անհատի միջև, որը կարող է գործել ինչպես իր, այնպես էլ մեկ այլ անձի անունից:

Գ. Պայմանագրի պայմանները որոշվում են այն նյութական օրենքով, որը կիրառելի է դրանկատմամբ:

Ավտոմատացված համակարգերի օգտագործման դեպքում հարց է առաջանում ավտոմատացված համակարգի և այն ծրագրավորած անձի միջև իրավական կապի վերաբերյալ: Երբեմն այս հարաբերությունները առաջարկվում է դիտել որպես պրինցիպալի և գործակալի միջև հարաբերություններ, ավտոմատացված համակարգիչներին առաջարկվում է տալ իրավաբանական անձի կարգավիճակ, իսկ համակարգչի և անձի միջև հարաբերությունները կանոնակարգել գործակալման ծառայությունների շրջանակներում: Տեսություն մեջ նույնիսկ ենթադրություն կա, որ ապագայում կարող են ստեղծվել ավտոմատացված համակարգերի նոր սերունդներ, որոնք կկարողանան գործառնություններ իրականացնել ոչ միայն ավտոմատ, այլև ավտոնոմ, այսինքն՝ արհեստական ուղեղի զարգացման արդյունքում համակարգիչը կարող է իր փորձի հիման վրա փոփոխել տարբեր ծրագրերում տրված, եղած հրահանգները և նույնիսկ կազմել նոր հրահանգներ¹²⁰: Կարծում ենք՝ ավելորդ է համակարգչի կամ ծրագրի և այն ծրագրավորող անհատի միջև փորձել իրավական կապ

¹²⁰ Տե՛ս *Allen T. and Widdison R.* Can computers make contracts? Harvard Journal of Law and Technology. Vol. 9. Winter 1996, էջեր 25-52:

գտնել, քանի որ տվյալ դեպքում առկա չէ հասարակական հարաբերություն, քանի որ մյուս կողմում հանդես չի գալիս հասարակական հարաբերության սուբյեկտը:

Համաձայն էնք այն իրավագետների հետ, որոնք կարծում են, որ ավտոմատացված համակարգերի սուբյեկտներ են համարվում այն անձինք, ում պատկանում է համակարգը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք կոնկրետ գործառնության ժամանակ տվյալ անձը վերահսկել է համակարգիչը, թե ոչ, ուստի նույնպես կարծում ենք, որ այս անձինք էլ պետք է կրեն պատասխանատվություն ավտոմատացված համակարգերի օգտագործման ընթացքում երրորդ անձանց իրավունքների ցանկացած խախտման համար¹²¹: Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, նրանց պատասխանատվությունը չպետք է անվերապահ բնույթ կրի, քանի որ ապարատային միջոցները հաճախ շարքից դուրս են գալիս: Ստեղծել ծրագրեր, որոնք թույլ չեն տասխալ ներ, անհնար է: Բացի այդ՝ համակարգի նորմալ աշխատանքի վրա ազդում են նաև այլ բացասական գործոններ (վիրուսների հարձակումներ, վնասակար ծրագրեր, սպամը (ոչ թույլատրված գովազդ), ծրագրերի անհամատեղելիությունը և այլն): Այդ իսկ պատճառով առավել նպատակահարմար է սահմանել նրանց պատասխանատվության կանխավարկածը, սակայն, կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով, նաև սահմանափակել այն կամ բացառել:

Էլեկտրոնային պայմանագրերի կնքման պարագայում արդիական է դառնում նաև սխալների խնդիրը: Պայմանագրային հարաբերություններում թույլ տրվող սխալների հետ կապված ավանդական մոտեցումն այն է, որ սխալ գործած կողմն է կրում պայմանագրային հարաբերությունում գործադրված սխալից բխող հնարավոր ռիսկերը: Այս ընդհանուր մոտեցումն էական բարդությունների է հանդիպում էլեկտրոնային պայմանագրերի դեպքում՝ հաշվի առնելով այն, որ էլեկտրոնային պայմանագրերի կնքման և հետագա կատարման ընթացքում փոխանակվող էլեկտրոնային հաղորդագրությունները կարող են հաճախ սխալ ներ պարունակել՝ կապված տեխնիկական անճշտությունների կամ կողմերի վրիպումների հետ:

¹²¹ Տե՛ս **Nicol C.C.** Can computers make contracts? The Journal of Business Law. January 1999. Էջ 42:

Սխալ ներքը կարող են լինել մարդու գործողությունների արդյունք (օր.՝ հաղորդագրության տեքստում թերությունների կամ համակարգչով աշխատելիս մկնիկի անզգույշ սեղմում) կամ տեղեկատվական համակարգի խափանումների հետևանք: Ավանդաբար սխալի ռիսկը դրվում է այն կողմի վրա, որը կատարում է սխալը: Տրամաբանությունն այն է, որ դա խթան է հանդիսանում, որպեսզի կողմը լինի ավելի ուշադիր և կանխի սխալները: Մյուս բացատրությունն այն է, որ կողմը, որը չի իմանում սխալի մասին, պետք է պաշտպանված լինի հնարավոր չարաչափումներից: Պրակտիկայում դժվար է իմանալ, թե արդյոք կողմը, որը հայտարարում է, թե սխալ վել է, իսկապես սխալ վել է, թե՛ փոխել է իր միտքը: Այդ կապակցությամբ գոյություն ունեն երկու հիմնական խնդիրներ. առաջինն այն է, թե ինչպես պետք է որոշել՝ արդյոք դա սխալ էր, թե՛ կողմը փոխել է իր մտադրությունը, երկրորդն այն է, թե ինչ չափով մյուս կողմը հիմք և ժամանակ ունեն գործելու սխալի հիման վրա:

Գործնականում որոշ գործարքների համար ներելի է, եթե կողմը փոխել է իր միտքը և ցանկանում է հետաձգել պայմանագիրը կամ հրաժարվել դրանից: *Pacta sunt servanda* սկզբունքը ճակատագրական չէ բոլոր գործարքների համար: Եթե կողմը սխալ վել և անհասարակ տեղեկացրել է մյուս կողմին, ապա հնարավոր է, որ մյուս կողմը դեռևս որևէ կորուստ չի կրել սխալի պատճառով: Գործարքների այլ տեսակների համար կենսական կարևորություն ունի մյուս կողմի կամահայտնությունը, օրինակ՝ աճուրդները կամ այնպիսի ապրանքների առուծափը, որոնց գինը ենթակա է անընդհատ փոփոխման: Եթե հնարավորություն չի այստեղ վկայակոչել սխալը, ապա կողմը կփորձի այդպես անել, եթե իրականում նա ոչ շահութաբեր գործարք է կնքել. օրինակ՝ գնորդը կարող է հայտարարել, որ ինքը սխալ վել է, երբ, օրինակ, գնումից հետո ապրանքի գինն իջել է: Այս դեպքում մյուս կողմը կորուստներ կկրի:

Ներկայումս սխալված կողմի վրա հնարավորինս նվազ պատասխանատվություն դնելու միտում է նկատվում: Այդպիսի մոտեցում է առկա «Էլեկտրոնային առևտրի մասին» 2000/31 ԵՄ դիրեկտիվում, որի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝

ծառայություններն մատուցողը պետք է ձեռնարկի արդյունավետ և հասանելի տեխնիկական այնպիսի միջոցներ, որոնք թույլ կտան անձին հայտնաբերել սխալը և ուղղել այն մինչև հրահանգ տալը: Սույն կետի կանոնները կարող են չպահպանվել էլեկտրոնային փոստով կամ հավասարազոր միջոցներով պայմանագրեր կնքելիս:

ՄԱԿ-ի կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝

1. Երբ ֆիզիկական անձը սխալ տվյալներ է ներմուծում ավտոմատացված էլեկտրոնային համակարգ էլեկտրոնային հաղորդակցության ժամանակ, և ավտոմատացված էլեկտրոնային համակարգը հնարավորություն չի ընձեռում անձին ուղղելու սխալը, այդ անձը կամ այն անձը, որի անունից վերջինս գործել է, իրավունք ունի հրաժարվելու էլեկտրոնային հաղորդակցության այն հատվածից, որտեղ սխալը տեղի է ունեցել, եթե.

ա. անձը կամ այն կողմը, որի անունից վերջինս գործել է, տեղեկացնում է մյուս կողմին տեղի ունեցած սխալի մասին որքան հնարավոր է շուտ՝ այն պահից սկսած, երբ իմացել է սխալի մասին, և

բ. անձը կամ այն կողմը, որի անունից վերջինս գործել է, չի օգտագործել կամ ստացել որևէ նյութական օգուտն կամ արժեք ապրանքներից կամ այն ծառայություններից, որոնք ստացվել են մյուս կողմից:

2. Այս դրույթը որևէ կերպ չի խոչընդոտում ներպետական օրենսդրությամբ նախատեսված սխալի հետևանքների կիրառումը:

Հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ այն տարածվում է միայն խիստ յուրահատուկ իրավիճակների վրա: Հոդվածը վերաբերում է միայն այն սխալներին, երբ սխալը տեղի է ունեցել ֆիզիկական անձի կողմից, սակայն ավտոմատացված համակարգի հետ աշխատելու ընթացքում: Ընդ որում, էլեկտրոնային հաղորդակցությունը կարող է հետկանչվել միայն այն դեպքում, երբ ավտոմատացված համակարգը հնարավորություն չի ընձեռել սխալը ուղղելու համար, և նման իրավիճակներում հենց ավտոմատացված համակարգ գործարկողն էլ կրում է սխալից բխող ռիսկերը: Հոդվածով, փաստորեն, պարտադրվում է ավտոմատացված էլեկտրոնային համակարգի գործարկողներին նախատեսել ընթացակարգեր՝ պայմանագրային բանակցություններ վարելիս կամ

պայմանագիր կնքելիս սխալները հայտնաբերելու և ուղղելու համար: Դա կարող է դրսևորվել՝ «Դուք վստահեք» կամ լրացուցիչ «Հաստատում եմ» կոճակները սեղմելու հնարավորությունն ընձեռելով:

Հոդվածով կարգավորվում են միայն ներմուծվող սխալները, այսինքն՝ այն սխալները, որոնք տեղի են ունենում սխալ կոճակ սեղմելու կամ տառասխալի արդյունքում, քանի որ դրանք ամենատարածվածն են էլեկտրոնային միջավայրում: Այլ տեսակի խնդիրների կարգավորումը թողնված է ներպետական օրենսդրությանը:

Ըստ վերոնշյալ հոդվածի՝ գործարքն անվավեր չի դառնում սխալի դեպքում, այն միայն հնարավորություն է ընձեռում սխալված կողմին հրաժարվելու գործարքից: Ավելին՝ հոդվածով նաև սխալն ուղղելու հնարավորությունն չի տրվում: ՄԱԿ-ի կոնվենցիայի մշակման ընթացքում մի շարք իրավագետներ պնդում էին, որ պետք է սխալն ուղղելու հնարավորությունն ընձեռել, մյուսները կողմ էին այն տեսակետին, որ պետք է ընձեռել թե՛ սխալից հրաժարվելու, թե՛ այն ուղղելու հնարավորությունն: Այդուհանդերձ, կոնվենցիայի մշակողները համաձայնեցին, որ եթե գործարքից հրաժարվելը իրավիճակը հավասարեցնում է զրոյի, սխալն ուղղելու հնարավորությունն ընձեռելը լրացուցիչ ծախսեր կառաջացնի ծառայությունն ապահովողների (provider) համար: Բացի այդ՝ դա պարտականությունն կդնի նաև օֆերենտի վրավերաթողարկելու իր օֆերտան, ինչը հնարավոր է չբխի վերջինիս շահերից:

Ի վերջո, պետք է նկատել, որ կոնվենցիան հնարավորություն է ընձեռում հրաժարվելու պայմանագրի միայն այն մասից, որտեղ սխալ է թույլ տրվել: Տրամաբանական է, որ եթե սխալը վերաբերի պայմանագրի էական պայմաններին, պայմանագիրն ինքնին չեղյալ կհամարվի, սակայն եթե սխալը վերաբերի պայմանագրի ոչ էական պայմաններին, այն կշարունակի համարվել կնքված:

Մեր կարծիքով՝ համակարգչային համակարգերի օգտագործումն էականորեն բարձրացնում է սխալների ռիսկը և կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների: Պետք է մշակել նորմեր, որոնք

կնախատեսեն մարդկանց կողմից թույլ տրված սխալների հետևանքները: Դրանք պետք է պարտավորեցնեն կողմերին՝ սահմանելու լրացուցիչ ծրագրային միջոցներ ավտոմատացված համակարգերի միջոցով պայմանագրեր կնքելիս սխալներ թույլ չտալու կամ դրանք ուղղելու համար: Ամեն դեպքում սպառողների հետ պայմանագրերում սխալների հայտնաբերման կամ ուղղման ընթացակարգ չնախատեսելը պետք է հանգեցնի սպառողի իրավունքին պահանջել պայմանագրի լուծում:

Այս կապակցությամբ 2016թ. հունիսից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 452-րդ հոդվածով նախատեսվեց երկրորդ մաս, ըստ որի՝ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս օֆերենտն ու ակցեպտանտն ունեն օֆերտայում կամ ակցեպտում իրենց վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ճշտման իրավունք, պայմանով, որ այն իրականացվի վրիպակի, գրասխալի կամ թվաբանական սխալի հայտնաբերման պահից անհապաղ, և մյուս կողմը չի ձեռնարկել պայմանագրի կատարմանն ուղղված գործողություն (ապրանքներ բեռնել, աշխատանքներ կատարել, ծառայություններ մատուցել, վճարում կատարել և այլն), որը հանգեցրել է ծախսերի: Այս իրավակարգավորումը համահունչ է ՄԱԿ-ի վերոնշյալ կոնվենցիայի կարգավորման հետ:

§2.2. ՕՖերտայի և ակցեպտի առանձնահատկությունները Էլեկտրոնային ձևով պայմանագրեր կնքելիս

Անկախ էլեկտրոնային պայմանագրի կնքման կոնկրետ ձևից՝ ցանկացած պարագայում կողմերը փոխանակում են պայմանագրի պայմանները, այսինքն՝ տեղի է ունենում օֆերտայի և ակցեպտի ուղարկում և ստացում: Օֆերտային և ակցեպտին վերաբերող հարցերն ունեն առաջնային նշանակություն էլեկտրոնային միջավայրում, քանի որ դրանց մեկնաբանությունից է կախված պայմանագրի կնքման տեղի և ժամանակի որոշումը, որն էլ իր հերթին ունի սկզբունքային նշանակություն ծագած իրավահարաբերության կողմերի իրավունքների և պարտականությունների իրացման գործում, ինչպես նաև կիրառման ենթակա իրավունքի ընտրության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի՝ դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

Հարկ է ընդգծել, որ էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերի պարագայում օֆերտայի և ակցեպտի հետ կապված առաջանում են մի շարք հարցեր, որոնց մի մասի հնարավոր լուծումներն արդեն իսկ առկա են, սակայն կան նաև չլուծված հարցեր: Այս կապակցությամբ առավել պարզ և հետևողական վերլուծություն կատարելու նպատակով հարկ ենք համարում հաջորդաբար անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի օֆերտայի և ակցեպտի հետ կապված հարցերը կարգավորող դրույթներին և քննարկել դրանք պայմանագրերի կնքման էլեկտրոնային ձևի տեսանկյունից: Մեր կողմից հետազոտության նման ուղղությունը պայմանավորված է նրանով, որ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքից բացի, որևէ այլ իրավական ակտով չի նախատեսվում մասնավոր-իրավական պայմանագրերի կնքման (օֆերտայի և ակցեպտի) կարգի վերաբերյալ կանոնակարգում ընդհանրապես, իսկ էլեկտրոնային ձևով կատարվող գործարքների (պայմանագրերի) վերաբերյալ մասնավորապես:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, օՖերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը հստակ արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարելու առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ: ՕՖերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները:

Ուստի օՖերտային ներկայացվում է երկու պահանջ՝ պայմանագրի էական պայմանների առկայություն, ակցեպտանտի հետ պայմանագիրը կնքված համարելու հստակ մտադրություն:

Պետք է ընդգծել, որ էլեկտրոնային նամակներով կամ էլեկտրոնային տվյալների փոխանակմամբ պայմանագիր կնքելու պարագայում այս հոդվածով նախատեսված կարգավորումը որևէ խնդիր չի ստեղծում, քանի որ կողմերը կարող են նույն բովանդակությամբ փաստաթուղթ կազմել ինչպես գրավոր, այնպես էլ էլեկտրոնային ձևի դեպքում: Սակայն խնդիրն այլ է, երբ պայմանագրի օՖերտան ներկայացված է կայքում, և ակցեպտը պետք է իրականացվի նշված կայքում: Որպես կանոն՝ կայքերում արդեն իսկ տեղադրված են լինում մշակված պայմաններ, և պայմանագրի մյուս կողմը դրա մշակմանը չի մասնակցում, այլ պետք է կամ համաձայնի դրա պայմաններին կամ ոչ: Նշված առանձնահատկությունը կայքերի միջոցով կնքվող գործարքները դարձնում է հրապարակային պայմանագիր: Ուստի կարելի է պնդել, որ հրապարակային պայմանագրին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները կիրառելի են նաև այս դեպքում: Հաշվի առնելով էլեկտրոնային միջավայրում հնարավոր խաբեությունների շրջանակը, ինչպես նաև նման միջոցներով կնքվող պայմանագրի կողմ հանդիսացող սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված լրացուցիչ դժվարությունները (պայմանագրի մյուս կողմին հայտնաբերել, նրա գտնվելու վայրը պարզել, որոշել կիրառելի օրենսդրությունը և այլն)՝ ԵՄ մի շարք դիրեկտիվներով, ինչպես նաև ներպետական երկրների օրենսդրությամբ տրվում է պայմանների այն նվազագույն շրջանակը, որը պետք է պարտադիր ներառված լինի օՖերտայում: Խոսքը վերաբերում է հատկապես կայքում տեղադրված օՖերտայի պայմաններին:

Այսպես, ԵՄ 1997թ. 97/7/EC դիրեկտիվի 4-րդ հոդվածով նախատեսվում էր գնորդին տրամադրման ենթակա պարտադիր տեղեկությունների ցանկը, որը, սակայն, լրացվել և ընդլայնվել է ԵՄ «Սպառողների իրավունքների մասին» 2011/83/EU դիրեկտիվով, որի համաձայն՝ մինչև սպառողի համար հեռավորության վրա կնքվող պայմանագրով պարտավորության ծագելը մյուս կողմը պետք է նրան տրամադրի:

ա. վաճառողի մասին տեղեկություններ (վաճառողի հիմնական ձեռնարկությունն ու գործունեության տեսակը, նրաներկայացուցչի վերաբերյալ տվյալներ, ընկերության գրանցման համարն ու վայրը),

բ. \$ինանսական ծառայության մասին տեղեկություններ (\$ինանսական ծառայության հիմնական բնութագրիչները, վճարման ենթակա վերջնական գումարը՝ ներառյալ հարկերը, տուրքերը և այլ ծախսեր, վճարման կարգը),

գ. հեռավորության վրա կնքվող պայմանագրի վերաբերյալ տեղեկություններ (հետևանքի իրավունքը և դրա ժամկետը, պայմանագրի ժամկետը, պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, պայմանագրի լեզուն, կիրառելի իրավունքը):

Նույն հոդվածի հաջորդ կետով սահմանվում է, որ այս բոլոր տեղեկությունները պետք է լինեն հստակ և բարեխղճորեն փոխանցված լինեն պայմանագրի մյուս կողմին:

«Էլեկտրոնային առևտրի մասին» ԵՄ 2000/31/EC դիրեկտիվի 5-րդ հոդվածի համաձայն՝ ծառայությունն ապահովողը պետք է ծառայությունն ստացողին և իրավասու պետական մարմիններին հասանելի դարձնի հետևյալ տեղեկությունները՝ իր անունը, աշխարհագրական հասցեն, Էլեկտրոնային փոստի և կապվելու այս միջոցների վերաբերյալ տվյալները, գրանցման համարը:

Առևտրի միջազգային պալատի կողմից տրված Էլեկտրոնային պայմանագրեր կնքելու ուղեցույցի «Բ» կետում նշվել են այն պայմանները, որոնք սովորական պայմաններում պետք է ներառվեն Էլեկտրոնային պայմանագրերում՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք տեղադրված են կայքում, թե ուղարկվել են Էլեկտրոնային հաղորդագրությունների տեսքով Էլեկտրոնային փոստով՝

1. կողմերի անուսը կամ անվանումը, նրանց ընկերության կամ գործունեության վայրը, գրանցման տվյալները, լիազորված անձի կոնտակտային տվյալները,

2. պայմանագրի, ինչպես նաև հաղորդակցվելու լեզուն կամ լեզուները, հաղորդակցության ծախսերի բախումը, այն ժամանակը, որի ընթացքում օժերտան կամ պայմանագրի գինը մնում են վավեր,

3. պայմանագրի առարկա հանդիսացող գույքի հիմնական բնորոշիչների նկարագրությունը, ապրանքների և ծառայությունների գինը՝ ներառյալ հարկերը,

4. առաքման պայմաններն ու արժեքը, ինկոտերմսի համապատասխան պայմանը կիրառելի լինելու պարագայում՝ վճարման պայմանները, երաշխիքներն ու երաշխավորությունները, ապրանքը վերադարձնելը և գումարը փոխհատուցելը, պայմանագրից հրաժարվելը, այն լուծելը, վնասները և այլն,

5. սահմանափակումների վերաբերյալ պայմաններ՝ ներառյալ աշխարհագրական, ժամային սահմանափակումները, ծառայություններից օգտվելու հրահանգները, կողմերի միջև փոխանակված տեղեկատվության գաղտնիությունը և դրա խախտման համար պատասխանատվությունը,

6. հաղորդակցության տեխնիկական պարամետրերը, կիրառելի օրենքը կամ օրենսդրությունը, վեճերի այլընտրանքային լուծման եղանակները ¹²²:

Չաշվի առնելով Էլեկտրոնային առևտրի ոլորտում առկա խնդիրները, ինչպես նաև վերը ներկայացված իրավական կարգավորումները՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է Էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերի համար ապահովել այն նվազագույն տեղեկությունների տրամադրումը, ինչը հետագայում վեճերի առկայության դեպքում հնարավորինս կպաշտպանի հատկապես սպառողի իրավունքները: **Այս տեսանկյունից հարկ ենք համարում առաջարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի օժերտան կարգավորող 451-րդ հոդվածում կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կոնկրետ պայմանագրի տեսակները կարգավորող դրույթներում կատարել**

¹²² Տե՛ս ICC Guide for eContracting, <http://www.iccwbo.org/products-and-services/trade-facilitation/tools-for-e-business/>

փոփոխություն և ավելացնել դրույթ առ այն, որ Էլեկտրոնային պայմանագրերի կնքման դեպքում վաճառողը պարտավոր է գնորդին տրամադրել տեղեկություններ առնվազն իր ձեռնարկության գտնվելու վայրի, իր կոնտակտային տվյալների և գրանցման առկայության դեպքում՝ նաև պետական ռեգիստրում գրանցման համարի վերաբերյալ: Նման դրույթ պետք է նախատեսել նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի¹²³ 9-րդ հոդվածում:

Էլեկտրոնային պայմանագրերի կնքման գործընթացում առաջ եկող հարցերին իրավական լուծումների առաջադրման նպատակով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ օֆերտայի և ակցեպտի հետ կապված դրույթները վերանայելիս պետք է անդրադառնալ օֆերտայի և ակցեպտի ուղարկման և ստացման պահին, նրանց հետևանքին, հրապարակային օֆերտային և օֆերտա անելու հրավերին, ինչպես նաև պայմանագրի կնքման պահին ու վայրին:

1. Օֆերտայի և ակցեպտի ուղարկման և ստացման պահը, դրանց հետևանքը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից:

Ի տարբերություն փոստով փոխանցվող գրավոր ձևակերպված օֆերտային և ակցեպտին, երբ հստակ հնարավոր է փոստային կնիքով որոշել, թե երբ է օֆերտան կամ ակցեպտը ստացվել, Էլեկտրոնային միջոցներով նամակների փոխանցման դեպքում առաջանում է խնդիր, քանի որ համակարգը ցույց է տալիս միայն փաստաթղթի ուղարկված լինելու հանգամանքը, մինչդեռ դրանով չի հիմնավորվում, թե արդյոք այն ստացվել է, թե ոչ: Թեև ներկայումս մշակվել են միջարք ծրագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում ապացուցել, թե արդյոք հաղորդագրությունը ստացվել և անգամ ընթերցվել է, թե ոչ¹²⁴, սակայն այդպիսի ծրագրերն առայժմ չեն տրամադրում հուսալիության բարձր մակարդակ: Օֆերտայի ստացման պահն ունի կարևոր նշանակություն, քանի որ օֆերտայում կարող է նշված

¹²³ Տե՛ս ՀՕ-197, ընդունվել է 26.06.2001թ.-ին, ուժի մեջ է 01.01.2002թ.-ից:
¹²⁴ Տե՛ս առավել մանրամասն այդ ծրագրերի մասին, <http://www.didtheyreadit.com>, <http://www.guidingtech.com/10886/track-if-your-email-was-opened-clicked-gmail-rightinbox/>

լինել որոշակի ժամկետ, որի հաշվարկի սկիզբը կարող է պայմանավորված լինել դրաստացմամբ: Այս կապակցությամբ թե՛ ՄԱԿ-ի կոնվենցիայով, թե՛, ինչպես նշվեց, ՄԱԿՄԱԻՅ-ի «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքով անդրադարձ է կատարվել ընդհանուր առմամբ Էլեկտրոնային հաղորդագրության ուղարկման և ստացման խնդրին, ինչպիսի կարգավորումը ընդգրկում է նաև Էլեկտրոնային ձևով օֆերտայի և ակցեպտի ուղարկումը:

ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն՝ 10-րդ հոդվածի առաջին կետում նշվում է, որ Էլեկտրոնային հաղորդագրության ուղարկման ժամանակ է համարվում այն պահը, երբ *այն դուրս է գալիս այն կազմողի կամ այն կողմի տեղեկատվական համակարգից, ով այն ուղարկել է կազմողի անունից, կամ եթե Էլեկտրոնային հաղորդագրությունը դուրս չի եկել վերոհիշյալ անձանց տեղեկատվական համակարգից, ապա՝ Էլեկտրոնային հաղորդագրության ստացման պահը*: ՄԱԿՄԱԻՅ-ի «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ եթե այլ համաձայնություն չի կայացվել ուղարկողի և ստացողի միջև, ապա *հաղորդագրությունը համարվում է ուղարկված, երբ այն մտնում է տեղեկատվական համակարգ, որը դուրս է ուղարկողի վերահսկողությունից կամ այն անձի վերահսկողությունից, որը հաղորդագրությունը ուղարկել է ուղարկողի անունից*: ՄԱԿ-ի կոնվենցիայում տրված ձևակերպումից հետևում է, որ պարտադիր չէ, որ հաղորդագրությունը դուրս գա տեղեկատվական համակարգից, ընդ որում կոնվենցիայի մեկնաբանությունն ենթադրում այս նորմի առկայությունը բացատրվում է նրանով, որ հնարավոր է՝ կողմերն օգտվեն նույն ցանցային համակարգից, ուստի հաղորդագրությունն ուղարկողը հնարավոր է, որ պահպանի վերահսկողությունը տվյալ համակարգի նկատմամբ¹²⁵:

Առևտրի միջազգային պալատի սահմանած Էլեկտրոնային պայմանների 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *Էլեկտրոնային հաղորդագրությունը ենթադրվում է ուղարկված, երբ այն մտնում է*

¹²⁵ Տե՛ս United Nations Convention on the Use of Electronic Communications in International Contracts, էջ 60:

նուղարկողի վերահսկողությունն իր գտնվող տեղեկատվական համակարգ¹²⁶: ԱՄՆ «Էլեկտրոնային գործարքների վերաբերյալ» միասնական օրենքը նախատեսում է այլ կարգավորում: Այսպես, օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, *Էլեկտրոնային գրառումը համարվում է ուղարկված, եթե այն մուտք է գործել ուղարկողի վերահսկողությունն իր գտնվող տեղեկատվական համակարգ, որն օգտագործվում է գրառման հասցեատիրոջ կողմից և ներկայացված է այն ձևով, որն ընթերցելի է հասցեատիրոջ Էլեկտրոնային համակարգի համար*: Տեղեկատվական համակարգը վերը նշված բոլոր իրավական փաստաթղթերում մեկնաբանվում է որպես ցանկացած տեխնիկական միջոց, որն օգտագործվում է տեղեկատվության փոխանցման, ստացման, հավաքման և ուղարկման համար¹²⁷: Օրինակ՝ տեղեկատվական համակարգը կարող է լինել թե՛ հաղորդակցության ամբողջ ցանցը, թե՛ որոշ դեպքերում՝ Էլեկտրոնային փոստը¹²⁸:

Կարծում ենք, որ թե՛ ՄԱԿ-ի կոնվենցիան, թե՛ ՄԱԿՄԱԻՅ-ի նմուշային օրենքը հատուկ շեշտադրել են Էլեկտրոնային փաստաթղթերի ուղարկման պահը, քանի որ անդամ մի շարք երկրներում գործում է ընդհանուր իրավունքի համակարգը, որտեղ իրավական հետևանքների առաջացման համար կարևորվում է փաստաթղթի ուղարկման պահը: Թեև օֆերտայի և ակցեպտի տեսանկյունից հաղորդագրությունների ուղարկման պահը ՅՅ օրենսդրության տեսանկյունից չի առանձնացվում, քանի որ ՅՅ օրենսդրությունը շեշտադրում է դրանց ստացման պահը, որի հետևել կարում է իրավական հետևանքները, բայց քանի որ Էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկման պահը կարող է կարևորվել արդեն իսկ ծագած պայմանագրային պարտականությունների կատարման տեսանկյունից, ուստի այս առնչությամբ, կարծում ենք, պետք է նախատեսել առանձին կարգավորում¹²⁹:

¹²⁶ Տե՛ս ICC e Terms, 2004, <http://www.iccwbo.org/products-and-services/trade-facilitation/tools-for-e-business/>

¹²⁷ Տե՛ս United Nations Convention on the Use of Electronic Communications in International Contracts, Էջ 40:

¹²⁸ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, Էջ 29:

¹²⁹ Առաջարկը տե՛ս ստորև:

ՄԱԿ-ի կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *Էլեկտրոնային հաղորդագրության ստացման ժամանակ է համարվում այն պահը, երբ էլեկտրոնային հասցեի հասցեատիրոջ համար հնարավորություն է ստեղծվում դուրս բերել ու հաղորդագրությունը: Այն դեպքում, երբ հաղորդագրությունն ուղարկվել է հասցեատիրոջ այն հասցեին, որի մասին պայմանավորվածություն չի եղել, ապա ստացման ժամանակ է համարվում այն պահը, երբ հաղորդագրությունը դուրս բերելու հնարավորություն է ստեղծվել, և հասցեատերը տեղյակ է դարձել, որ իրեն հաղորդագրություն է ուղարկվել հենց այդ հասցեով: Հասցեատիրոջ կողմից էլեկտրոնային հաղորդագրության դուրս բերման հնարավորություն ստեղծվում է այն պահին, երբ հաղորդագրությունը հասնում է վերջինիս էլեկտրոնային հասցեին: Ենթադրվում է, որ էլեկտրոնային հաղորդագրությունը դուրս բերելու հնարավորություն կստեղծվի այն պահին, երբ հաղորդագրությունը կմտնի ստացողի տեղեկատվական համակարգ¹³⁰:*

ՄԱԿ-ի «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *եթե այլ համաձայնություն չի կայացվել ուղարկողի և ստացողի միջև, հաղորդագրության ստացման ժամանակը որոշվում է.*

1. Եթե ստացողը նշել է տեղեկատվական համակարգ՝ էլեկտրոնային հաղորդագրություններ ստանալու համար, ապա հաղորդագրությունը ստացվում է՝

ա. այն պահին, երբ հաղորդագրությունը մտնում է սվյալ տեղեկատվական համակարգ կամ

բ. այն պահին, երբ հաղորդագրությունը դուրս է բերվում ստացողի կողմից, եթե հաղորդագրությունն ուղարկվել է ստացողի այլ տեղեկատվական համակարգի:

2. Եթե ստացողը չի նշել որևէ տեղեկատվական համակարգ՝ հաղորդագրություններ ստանալու համար, ապա հաղորդագրությունը ստացվում է, երբ այն մտնում է ստացողի տեղեկատվական համակարգ:

¹³⁰ Տե՛ս United Nations Convention on the Use of Electronic Communications in International Contracts, էջ 62:

Նմուշային օրենքի մեկնաբանությունների համաձայն՝ հաղորդագրությունը համարվում է չուղարկված, եթե այն հասել է հասցեատիրոջ տեղեկատվական համակարգ, սակայն մուտք չի գործել, օրինակ՝ էլեկտրոնային փոստի հիշողության լցված լինելու պատճառով: Նման պարագայում օրենքն առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ հասցեատերն իր տեղեկատվական համակարգը ֆունկցիոնալ վիճակում պահելու պարտականություն չպետք է ունենա:¹³¹:

Ակնհայտ է, որ թե՛ նմուշային օրենքը, թե՛ ՄԱԿ-ի կոնվենցիան այս հարցը կարգավորելիս անդրադարձել են երկու հնարավոր իրադրությունների. Մասնավորապես՝ հաղորդագրություն ստացողը կարող է ունենալ մի շարք էլեկտրոնային հասցեներ, որոնց մի մասը կարող է օգտագործվել անձնական, մյուսները՝ գործնական նպատակներով: Կախված նպատակից՝ տարբեր է նաև այն հաճախականությունը, որով հաղորդագրություն ստացողն ստուգում է իր էլեկտրոնային փոստը: Ուստի հաղորդագրությունն ստացողի իրավունքները պաշտպանելու նպատակով երկու իրավական փաստաթղթերով որդեգրվել է նմանատիպ մոտեցում, այն է՝ ստացողի կողմից էլեկտրոնային կոնկրետ տեսակի հաղորդագրություններ ստանալու համար տեղեկատվական համակարգ նշած կամ չնշած լինելու հանգամանքը: *Ավելի ն՝ երկու փաստաթղթերն էլ հաղորդագրության ստացումը պայմանավորել են միայն հաղորդագրության՝ ստացողի համակարգ մուտք գործելու հանգամանքով և ոչ դրա դուրս բերմամբ¹³², ինչը, կարծում ենք, արդարացված է, քանի որ փաստաթուղթը դուրս բերելու պահը դժվար է արձանագրել, և բացի այդ՝ նման կերպ գերծ ենք մնում հասցեատիրոջ հնարավոր չարաչափ ահուկ մտերից:*

Պետք է նկատել, որ թե՛ կոնվենցիան, թե՛ նմուշային օրենքը հաղորդագրության ստացման հարցը կարգավորելիս որևէ կերպ չեն անդրադառնում այն խնդրին, որ հաղորդագրությունը կարող է ներկայացված լինել ստացողի համար անընթեռնելի տարբերակով, և

¹³¹ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 55:

¹³² Տե՛ս *Кавес Я. А.*, նշված աշխատությունը, էջ 104:

որ այն ընթեռնելի դարձնելու համար ստացողից կարող են պահանջվել երկարատև և ծախսատար ջանքեր¹³³:

Ի տարբերություն կոնվենցիոն կարգավորման՝ ԱՄՆ «Էլեկտրոնային գործարքների մասին» միասնական օրենքի համաձայն՝ *Էլեկտրոնային հաղորդագրությունը համարվում է ստացված, երբ այն մուտք է գործում հասցեատիրոջ կողմից նշված տեղեկատվական համակարգ, ընթեռնելի է և կարող է դուրս բերվել հասցեատիրոջ կողմից*¹³⁴: Նմանատիպ կարգավորում է նախատեսում նաև ԱՄՆ Համակարգչային գործարքների վերաբերյալ միասնական օրենքը (Uniform Computer Information Transactions Act)¹³⁵:

Կարծում ենք, որ Էլեկտրոնային հաղորդագրությունների ստացման պահը չափեք է պայմանավորել դրանց ընթեռնելիությամբ, քանի որ դա ոչ թե ձևական պահանջի պահպանում է, այլ բովանդակային: Թղթային փաստաթղթա-շրջանառության պարագայում ևս հնարավոր են դեպքեր, երբ նամակը ստացվել է, սակայն անընթեռնելի է ձեռագրի, լեզվի չիմացության, թղթի վնասվածության և այլ պատճառներով, սակայն դրանից որևէ կերպ չի հետևում, որ նամակը չի ստացվել, ուստի կարծում ենք, որ ընթեռնելիության հարցն առանձին կարգավորում է պահանջում, սակայն որևէ կերպ չի ներառվում Էլեկտրոնային հաղորդագրության ստացման հասկացության ներքո: Ինչ վերաբերում է ակցեպտի ստացման ձևին, ապա կարծում ենք, որ այս կապակցությամբ մեր օրենսդրության պարագայում խնդիր չի ծագի, քանի որ ակցեպտը պարզապես չի բավարարի օֆերտայի պայմաններին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի (Այլ պայմաններով ակցեպտ) ուժով չի համարվի ակցեպտ:

Թեև «Էլեկտրոնային փաստաթղթի և Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը տալիս է տեղեկատվական համակարգի հասկացությունը¹³⁶, սակայն որևէ կերպ չի

¹³³ Տե՛ս *Ewan McKendrick*, նշված աշխատությունը, էջ 103:

¹³⁴ Տե՛ս *Kapee Я. А.*, նշված աշխատությունը, էջ 104:

¹³⁵ Տե՛ս *Gerald Spindler, Fritjof Borner*, E-commerce Law in Europe and the USA, Heidelberg, 2010, 690-691 էջեր:

¹³⁶ Ընդ որում՝ ձևակերպումն ամբողջովին համընկնում է կոնվենցիոն ձևակերպման հետ: Տե՛ս «Էլեկտրոնային փաստաթղթի և Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված:

անդրադառնում էլ եկտրոնային հաղորդագրությունների ուղարկմանն ու ստացմանը: Կարծում ենք, որ ներկայումս էլ եկտրոնային փաստաթղթաշրջանառության լայնածավալ իրականության լայնորեն օգտագործման պարագայում հարկ է կարգավորել այս բացը, քանի որ նմանատիպ խնդիրների որևէ նորմատիվ կարգավորում դեռևս չկա: Այս առնչությամբ առաջարկում ենք «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն և լրացում, այն է՝ նախատեսել դրույթ էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկման և ստացման պահի և վայրի հետկապված: Մասնավորապես՝ օրենքում ավելացնել 7¹-րդ հոդվածը՝ հետևյալ վերտառությամբ և բովանդակությամբ.

«Հոդված 7¹. Էլեկտրոնային փաստաթղթերի ուղարկման և ստացման պահն ու վայրը¹³⁷

1. Էլեկտրոնային փաստաթուղթը համարվում է ուղարկված այն պահից, երբ այն դուրս է եկել ուղարկողի վերահսկողության ներքո գտնվող տեղեկատվական համակարգից:

2. Էլեկտրոնային փաստաթուղթը համարվում է ստացված այն պահից, երբ

ա) այն մուտք է գործում կողմի մատնանշած տեղեկատվական համակարգ կամ

բ) այն հայտնաբերվել է հասցեատիրոջ կողմից, եթե ուղարկվել է նրակողմից չմատնանշված տեղեկատվական համակարգին»:

Պետք է նշել, որ հայտնաբերումը ընդհանուր տերմին է ու հայտնաբերման ապացուցման պարտականությունը կրելու է փաստաթուղթն ուղարկող կողմը: Հարկ է նշել, որ ՄԱԿՄԱԻՀ-ի 1996թ. նմուշային օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, եթե կողմերը չեն պայմանավորվել որևէ հատուկ ընթացակարգի և ձևաչափի մասին, ապա նամակը ստանալու փաստը հաստատելու համար հասցեատերը պետք է ուղարկողին ուղարկի որևէ հետադարձ նամակ կամ կատարի այնպիսի գործողություններ, որոնք կվկայեն, որ ինքն ստացել է էլեկտրոնային փաստաթուղթը: Այն դեպքում, երբ ուղարկողը չի

¹³⁷ Էլեկտրոնային փաստաթղթերի ուղարկման և ստացման վայրի մասին կխոսվի և առաջարկություններ կարվեն ստորև:

նախատեսել ստացման հավաստիացման մասին հստակ կարգ, այդ ստացականը կարող է տրվել .

ա. հասցեատիրոջ հետցանկացած հաղորդակցման միջոցով,

բ. ստացողի ցանկացած գործողությամբ,

եթե հնարավոր է հստակ իդենտիֆիկացնել ստացականն ուղարկող անձին:

Նմուշային օրենքի մեկնաբանություններից հետևում է, որ հաղորդագրության ստացականը պետք է տրվի՝ անկախ այն հանգամանքից, թե հաղորդագրությամբ օֆերտա է կատարվել, թե վերաբերել է այլ տեղեկատվության: Թղթային շրջանառության մեջ նման ստացականը նույնանում է նամակի ստացումը հավաստող անդորրագրի հետ: Բացի այդ՝ հստակ ընդգծվում է, որ ստացականը պետք է խառնել ակցեպտի հետ, քանի որ այն միայն հավաստում է հաղորդագրությունն ստանալու հանգամանքը, ոչ ավելին¹³⁸:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ևս պետք է կատարել փոփոխություն և ամրագրել, որ էլեկտրոնային փաստաթղթերի ուղարկման և ստացման կապակցությամբ գործում է այլ կարգավորում: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասում «այլ մանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից» նախադասությունից հետո կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ.

«Էլեկտրոնային միջոցներով ուղարկված օֆերտայի և ակցեպտի ստացման առանձնահատկությունները կարգավորվում են օրենքով»: Ընդ որում՝ տվյալ դեպքում «օրենք» ասելով՝ ի նկատի ունենք հենց վերոնշյալ «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը:

Պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում 2016թ. հունիսին կատարված փոփոխություններով 451-րդ և 454-րդ հոդվածներում նախատեսվել է հասցեատիրոջ կողմից նշված և չնշված տեղեկատվական համակարգերի օֆերտայի և ակցեպտի ստացման պահը որոշելու իրավակարգավորում, սակայն կարծում ենք այս

¹³⁸ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, 52-54 էջեր:

կարգավորումը պետք է տեղ գտներ հենց «Էլ եկտրոնային փաստաթղթի և Էլ եկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում: Պետք է կարևորել ոչ միայն օֆերտայի և ակցեպտի, այլ ընդհանրապես Էլ եկտրոնային հաղորդագրությունների ուղարկման և ստացման պահի որոշումը, ուստի պետք էր ընդհանրական կարգավորում նախատեսել վերոնշյալ օրենքում, որն օֆերտայի և ակցեպտի հետ կապված կստանար իր մասնավոր դրսևորումը:

Օֆերտայի և ակցեպտի հետ կապված հաջորդ խնդրահարույց հարցը դրանց հետկանչն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից: Եթե օֆերտայի հետկանչի մասին ծանուցումն ստացվել է օֆերտան ստանալուց առաջ կամ դրա հետմիաժամանակ, ապա օֆերտան համարվում է չուղարկված: Նույն օրենսգրքի 452-րդ հոդվածի համաձայն՝ հասցեատիրոջ ստացած օֆերտան չի կարող հետկանչվել դրա ակցեպտի համար օֆերտայում սահմանված ժամկետում, եթե այլ վերապահում չկա օֆերտայում, կամ չի բխում առաջարկի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է:

Նման իրավակարգավորումը ցույց է տալիս, որ օֆերտան ուժի մեջ է ակցեպտանտի կողմից ստանալու պահից, եթե դրա հետկանչը չի ստացվել մինչև օֆերտան ստանալը կամ դրանից առաջ: Ընդ որում՝ օֆերտան ստացվելուց հետո այն հետկանչվել կարող է միայն այն պարագայում, երբ այդ մասին վերապահում է կատարվել հենց օֆերտայում: Էլ եկտրոնային միջոցներով հաղորդագրությունների փոխանակելիս դժվար է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ օֆերտայի հետկանչը ստացվի մինչև օֆերտայի ստացումը կամ դրա հետմիաժամանակ, քանի որ Էլ եկտրոնային հաղորդագրությունների փոխանցումը կատարվում է վայրկյանների ընթացքում, ուստի օբյեկտիվորեն անհնար է դառնում օֆերտայի ու ակցեպտի հետկանչ ուղարկելը քաղաքացիաիրավական նման կարգավորման պարագայում: Ավելի ինչ, հաշվի առնելով, որ Էլ եկտրոնային պայմանագրերի գերակշիռ մեծամասնությունը կնքվում է Էլ եկտրոնային կայքերում տեղադրված հայտարարությունների հիման վրա

կոնկրետ կոճակներ սեղմել ու արդյունքում, կողմերը օժերտայի և ակցեպտի վերաբերյալ հայտարարություններ չեն փոխանակում, հետևաբար և դրանց հետկանչի վերապահում էլ չեն կատարում:

Չարկ է ընդգծել, որ եվրոպական մի շարք երկրներում արդեն իսկ անդրադարձ է կատարվել այս խնդրին և համապատասխան կարգավորում է նախատեսվել: Այսպես, ընդհանուր իրավունքի երկրների համար հիմնական կանոնը օժերտան ցանկացած ժամանակ հետ կանչելն է մինչև ակցեպտի ստացումը¹³⁹, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ, մեր օրենսդրության համաձայն, ակցեպտը կարող է արտահայտվել նաև որոշակի գործողությունների կատարմամբ, կարծում ենք, որ նման կանոնը մեզ մոտ կիրառելի չէ, քանի որ կարող է հանգեցնել ակցեպտանտի իրավունքների խախտմանը: Ըստ իտալական օրենսդրության՝ էլեկտրոնային միջոցներով հաղորդակցվելու պարագայում սպառողների հետ կատարվող գործարքների համար նախատեսվել է տարբեր կարգավորում, այն է՝ սպառողը կարող է հետ կանչել իր օժերտան կամ ակցեպտն այն ուղարկելու պահից տասն օրվա ընթացքում¹⁴⁰, այսինքն՝ նախատեսվել է որոշակի ժամկետ, որի ընթացքում երկու կողմերն էլ պետք է գիտակցեն, որ առկա է հավանականություն թե՛ օժերտայի, թե՛ ակցեպտի հետկանչի: Նմանատիպ կարգավորում է նախատեսվել նաև ԵՄ 2011/83/ EU դիրեկտիվով, որի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ սպառողն իրավունք ունենա 14 օրերի ընթացքում հրաժարվել գործարքից առանց որևէ տուգանքի կամ պատճառի նշման:

Չաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա կարգավորման պարագայում էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերի համար օբյեկտիվորեն հնարավոր չէ ապահովել օժերտայի և ակցեպտի հետկանչ, կարծում ենք, որ սույն հոդվածները պետք է ենթարկվեն որոշակի փոփոխության և հարմարեցվեն ներկայիս իրականությանը, առավել ևս, որ նման գործարքներում մի կողմում հաճախ հանդես է

¹³⁹ Տե՛ս *Roger LeRoy Miller, Gaylord A. Jentz*, նշված աշխատությունը, էջ 174: Տե՛ս նաև *Elliot I. Klayman, John W. Bagby, Nan S. Ellis*, նշված աշխատությունը, էջ 238: Տե՛ս նաև *Davidson, Knowles and Forsythe*, նշված աշխատությունը, էջ 217: Տե՛ս նաև *Henry R. Cheeseman*, Contemporary Business Law, Second Edition, USA, 1994, էջ 194: Տե՛ս նաև *David Reitzel, Donald P. Lyden, Nathan J. Roberts, Gordon B. Severance*, Contemporary Business Law, Principles and Cases, Fourth Edition, USA, 1990, էջ 162:

¹⁴⁰ Տե՛ս *Gerald Spindler, Fritjof Borner*, նշված աշխատությունը, էջ 320:

գալիս հասարակ սպառողը, որի իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ՅՅ քաղաքացիական օրենսգրքով ներկայումս չի ապահովվում:

Ուստի առաջարկում ենք ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացնել պարբերություն, որով կնախատեսվի «մտածելու որոշակի ժամկետ» էլեկտրոնային միջոցով կատարվող օֆերտայի հետևանքի համար: Այդ ժամկետը պետք է լինի ողջամիտ որպեսզի մյուս կողմի իրավունքների խախտումն լինի չսրվի: Ավելին՝ նույն օրենսգրքի 452-րդ հոդվածում ևս պետք է ավելացնել դրույթ հետևյալ ձևակերպմամբ. «էլեկտրոնային միջոցներով ուղարկված օֆերտան կարող է հետ կանչվել սույն օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետում, եթե այլ վերապահում չկա օֆերտայում կամ չի բխում առաջարկի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է»:

Ընդ որում՝ հետևանքի նույնական ժամկետ պետք է նախատեսել նաև ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 455-րդ հոդվածում ակցեարի համար: Թե՛ օֆերտայի, թե՛ ակցեարի դեպքում «մտածելու ժամկետը» չի գործի, եթե կողմերը հստակ կամահայտնությամբ հրաժարվել են իրենց այդ իրավունքից:

Կարծում ենք, որ հետևանքի իրավունքի իրացվելի լինելը կհեշտացնի նաև համակարգչային ծրագրերով և համացանցով հաճախ կատարվող սխալների ուղղումը:

2. Օֆերտանելու հրավեր և հրապարակային օֆերտա

ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի համաձայն՝ գովազդը և անձանց անորոշ շրջանակին հասցեագրված այլ առաջարկները համարվում են օֆերտա անելու հրավեր, եթե ուղղակիորեն այլ բան նշված չէ առաջարկում: Պայմանագրի բոլոր էական պայմանները պարունակող առաջարկը, որից հետևում է առաջարկում նշված պայմաններով յուրաքանչյուր արձագանքողի հետ պայմանագիր կնքելու առաջարկ անողի կամքը, համարվում է հրապարակային օֆերտա:

ՄԱԿ-ի կոնվենցիայի 11-րդ հոդվածի (օֆերտա ներկայացնելու հրավեր) համաձայն՝ պայմանագիր կնքելու առաջարկությունը, որն արված է մեկ կամ մի քանի էլեկտրոնային հաղորդագրությունների

միջոցով, որոնք հասցեագրված են ոչ թե մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց, այլ ընդհանուր հասանելի են տեղեկատվական համակարգեր օգտագործող անձանց համար, պետք է համարել օֆերտա անելու հրավեր, եթե միայն դրանում հստակ նշված չէ օֆերտա անող կողմի մտադրությունը պայմանագիրը կնքված համարել ակցեպտի դեպքում¹⁴¹:

Համակարգչային ցանցերում գովազդային առաջարկությունները բավական տարածված են՝ հաշվի առնելով այն փաստը, որ հնարավոր է անսահմանափակ քանակով օգտվողների մուտք, և հենց այդ մոդելի վրա են կազմակերպված բոլոր էլեկտրոնային խանութները, որոնք թույլ են տալիս ձեռք բերել ապրանքներ՝ կնքելով համապատասխան պայմանագրեր հատուկ կայքերում¹⁴²: Ավելին՝ օնլայն ծառայություններ տրամադրող կայքերի կամ անհատների համար օբյեկտիվորեն հնարավոր չէ բանակցել պայմանագրի պայմանների շուրջ յուրաքանչյուր այցելուի հետ, հետևաբար մշակվում և տեղադրվում են պայմաններ, որոնց միանակուց հետո միայն հնարավոր է լինում ներբեռնել ծրագիր, պատվիրել ապրանք կամ ծառայություն¹⁴³:

Անգլոամերիկյան իրավունքի համաձայն՝ կայքում տեղադրված բովանդակությունը ընդունվում է ոչ թե որպես օֆերտա, այլ որպես օֆերտա անելու հրավեր, ինչպես, օրինակ, ապրանքի վաճառքի կետերում պատահանների վրա ապրանքի արտաքին տեսքը ներկայացնող արստերների ցուցադրումը կամ գովազդը: Սակայն, եթե գովազդը կամ կայքի բովանդակությունը հստակ է և դրանից կարելի է հետևություն անել պայմանագրի պայմանների վերաբերյալ, այն պետք է համարվի օֆերտա, որի կապակցությամբ կատարված ակցեպտը կհամարվի վերջնական, իսկ պայմանագիրն էլ՝ կնքված¹⁴⁴: Գերմանիայում համացանցով կնքված գործարքը համարվում է կնքված ակցեպտի ստացման պահից, սակայն տեղադրված

¹⁴¹ Տե՛ս էլեկտրոնային առևտրի աշխատանքային խմբի հաշվետվությունները 39-րդ սեսիայի աշխատանքների վերաբերյալ:

¹⁴² Տե՛ս **Sizwe Snail**, Electronic contracts in South Africa - a comparative analysis: Lex Informatica Conference, նշված աշխատությունը, էջ 2:

¹⁴³ Տե՛ս **David P. Twomey, Mariann Moody Jennings, Ivan Fox**, Anderson's Business Law and the legal environment, 18th edition, USA, 2002, էջ 239:

¹⁴⁴ Տե՛ս **Youseph Farah**, Electronic contracts and information society services under the e-commerce directive, Journal of Internet Law, 2009, էջ 3:

հայ տարարությունը սպառողի կողմից համաձայնելը համարվում է օֆերտա, իսկ ակցեպտը օֆերտայի հիման վրա ծառայություն մատուցողի կողմից հաղորդագրություն ուղարկելն է¹⁴⁵: Ներկայումս էլեկտրոնային կայքերը հաճախ են նախատեսում կարգավորում, որով հստակեցնում են, որ իրենց կողմից տեղադրված հայ տարարությունները միայն օֆերտա անելու հրավեր են, որպեսզի խուսափեն ապրանքի բացակայության դեպքում պայմանագիրը կնքված համարվելու հնարավոր բացասական հետևանքներից:

Կարծում ենք, որ օֆերտա անելու հրավերի և հրապարակային օֆերտայի տարբերակման չափանիշը թե՛ էլեկտրոնային, թե՛ այլ ձևերով կնքվող պայմանագրերի համար նույնն է, հետևաբար այս կապակցությամբ առկա իրավական կարգավորումը որևէ խնդիր չի առաջացնում: Հարկ է ընդգծել, որ էլեկտրոնային միջավայրում մեծ տարածում են ստացել թե՛ մեկը, թե՛ մյուսը: Այսպես, առավանգաբար զբաղվող մասնագիտացված կայքերում (amazon.com, ebay.com) տեղադրված հայ տարարությունները հենց հրապարակային օֆերտա են, մինչդեռ բազմաթիվ են կայքերը, որտեղ կարող ենք տեսնել տարբեր կայքերի հղումներ, որոնց միջոցով կատարվում է միայն գովազդ:

3. Պայմանագրի կնքման պահն ու վայրը

Օֆերտայի և ակցեպտի ուղարկման և ստացման պահին, դրանց հետևանքին անդրադառնալը նպատակ էր հետապնդում նաև որոշակիացնել պայմանագրի կնքման պահը էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերի համար:

Էլեկտրոնային պայմանագրերի կնքման պահը որոշելը մի շարք դեպքերում բավականին հեշտ է, սակայն երբեմն հանգեցնում է որոշակի խնդիրների: Պայմանագիրը կնքված համարելու պահը դժվար է որոշել այն դեպքերում, երբ կողմերը վարել են երկարատև բանակցություններ և համաձայնությունն ձեռք բերելով պայմանագրի մի շարք կետերի շուրջ՝ այդպես էլ վերջնական համաձայնություն չեն կնքել¹⁴⁶: Կարծում ենք՝ տվյալ դեպքում

¹⁴⁵ Տե՛ս *Gerald Spindler, Fritjof Borner*, նշված աշխատությունը, էջ 166:

¹⁴⁶ Տե՛ս *Ewan McKendrick*, նշված աշխատությունը, 44-45 էջեր:

որոշիչ կարող է լինել այն հանգամանքը, եթե կազմվի միասնական փաստաթուղթ, որն էլ էլեկտրոնային ձևով կստորագրվի: Մեկ այլ լուծում կարող է լինել կողմերի փոխանակած պայմանագրի էական կետերը նախատեսող հաղորդագրության նկատմամբ: Եթե արդյունքում հիմնավորվի, որ կողմերը թեկուզ առանձին հաղորդագրության նկատմամբ, սակայն էական պայմանների շուրջ համաձայնության են ձեռք բերել, այդ դեպքում՝ վերջին պայմանի համաձայնեցման պահից սկսած, պայմանագիրը կհամարվի կնքված:

Գիտությանը հայտնի են պայմանագրի կնքման մի շարք տեսություններ, որոնցից կախված էլ տարբեր է պայմանագրի կնքման պահը՝

1. **Չայտարարության տեսության համաձայն**՝ պայմանագիրը համարվում է կնքված, երբ ակցեպտանտն արտահայտում է օֆերտան ընդունելու մտադրությանը՝ անկախ այն բանից, թե օֆերենտն այդ մասին տեղյակ է, թե ոչ: Նման պարագայում ակցեպտը կարող է արտահայտվել նաև օֆերտայում նշված գործողությունների կատարմամբ:

2. **Փոստարկղի կանոնի համաձայն**, որն առավել ապես տարածված է ընդհանուր իրավունքի երկրներում՝ ակցեպտն ուժի մեջ է մտնում օֆերենտին ուղարկելու պահից՝ անկախ այն բանից՝ այն օֆերենտին հասել է, թե ոչ: Փոստարկղի կանոնը թույլ է տալիս ունենալ կնքված պայմանագիր անգամ մինչև օֆերենտի կողմից ակցեպտի մասին տեղեկանալը¹⁴⁷:

3. **Ստացման տեսության համաձայն**, որը կիրառելի է մի շարք մայրցամաքային իրավունքի երկրներում, ակցեպտն ուժի մեջ է մտնում, երբ այն հասնում է օֆերենտին: Օրինակ, գերմանական օրենսդրության համաձայն, ակցեպտը համարվում է ընդունված, եթե դրա վերաբերյալ հայտարարությանն ուղարկվել է և գտնվում է ստացողի տրամադրության տակ: Չաղորդագրության նկատմամբ է ստացողի տրամադրության տակ գտնվող, եթե մուտք է գործել նրա փոստարկղ, որտեղից էլ ստացողը կարող է կամ այն արտատպել կամ ընթերցել համակարգչով¹⁴⁸: Եվրոպական պայմանագրային իրավունքի

¹⁴⁷ Տե՛ս *Davidson, Knowles and Forsythe*, նշված աշխատությունը, էջ 223:

¹⁴⁸ Տե՛ս *Gerald Spindler, Fritjof Borner*, նշված աշխատությունը, էջ 164:

սկզբունքների 2.205 հոդվածից հետևում է, որ դրանում ըստ էության ամրագրված են ստացման տեսությանը հարիր դրույթներ¹⁴⁹: Նմանատիպ ձևակերպում է նախատեսված նաև Ունիդրուայի Միջազգային պայմանագրային իրավունքի սկզբունքների 2.1.6 կետում¹⁵⁰:

4. **Տեղեկատվական տեսության համաձայն**՝ ակցեպտն ուժի մեջ է մտնում, երբ ակցեպտի տրման մասին հայտնի է դառնում¹⁵¹: Օրինակ, անգլիական օրենսդրության համաձայն, պայմանագրի կնքվածության համար անհրաժեշտ է, որ օֆերենտը տեղեկացվի ակցեպտի մասին, և միայն այդ պահից է պայմանագիրը կողմերի համար դառնում պարտադիր: Անգլիական օրենքը ճանաչում է ակցեպտի երկու տեսակ: Փոստով ուղարկվող ակցեպտների դեպքում ակցեպտը համարվում է պարտադիր ուղարկելու պահից, մինչդեռ հեռախոսով և ֆաքսով կատարվող ակցեպտները համարվում են պարտադիր միայն ստացման պահից: Այդուհանդերձ, օրենսդրությունն առայժմ չի անդրադարձել, թե ինչպես պետք է հարցը լուծվի համացանցով գործարքների կատարելիս¹⁵²:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով: Նույն օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

Առաջին հայացքից ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի քննարկում ամրագրվել է մայրցամաքային իրավունքի երկրներում տարածված ակցեպտի ստացման տեսությունը, սակայն ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են նաև հայտարարության տեսությանը բնորոշ հատկանիշներ: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, օֆերտա ստացած

¹⁴⁹ Տե՛ս **Larry A. DiMatteo**, The Law of International business Transactions, USA, 2003, էջ 195:

¹⁵⁰ Տե՛ս Unidroit principles of international commercial contracts, <http://www.unidroit.org/english/principles/contracts/principles2010/integralversionprinciples2010-e.pdf>

¹⁵¹ Տե՛ս United Nations Convention on the Use of Electronic Communications in International Contracts, էջ 59:

¹⁵² Տե՛ս **Gerald Spindler, Fritjof Borner**, նշված աշխատությունը, 2010, էջ 252:

անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկելը (ապրանքներ բեռնելը, աշխատանքներ կատարելը, ծառայություններ մատուցելը, համապատասխան գումար վճարելը և այլն) համարվում է ակցեպտ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նշված չէ օֆերտայում:

Էլեկտրոնային միջավայրում ակցեպտի տրման պահը կարող է տարբեր լինել: Էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակմամբ կնքվող պայմանագրերի դեպքում ակցեպտն ըստ էության տրվում է նույն այն ձևով, ինչպես թղթային փոստային հաղորդակցության պարագայում, այսինքն՝ կազմվում է տեքստը և ուղարկվում հասցեատիրոջը: Նույն կերպ է աշխատում մեխանիզմը նաև ակնթարթային հաղորդագրություններ ուղարկելիս¹⁵³: Սակայն էլեկտրոնային միջավայրում տարածում են ստացել նաև այլ կերպ կնքվող պայմանագրերը: Առավել տարածված ու հայտնի են այսպես կոչված *browse-wrap*, *shrink-wrap* և *click-wrap* կոչվող պայմանագրերը: **Browse-wrap** են կոչվում այն պայմանագրերը, որոնց պայմանները տեղադրված են կայքում որպես հղում, և կայքից ցանկացած ծրագիր ներբեռնելիս բացվում է հղումը, ու առաջարկվում է համաձայնել պայմաններին¹⁵⁴: **Shrink-wrap** են կոչվում այն պայմանագրերը, երբ ներբեռնելուց հետո փորձ է արվում ծրագիրը տեղադրել համակարգչում և բացված պատուհանում առաջարկվում է ծանոթանալ և համաձայնել պայմանագրի պայմաններին¹⁵⁵: **Click-wrap** են կոչվում այն պայմանագրերը, երբ մինչև ծրագիրը ներբեռնելը կամ կայքում որևէ այլ գործողություն կատարելը պահանջվում է սեղմել «ընդունում եմ» կամ «համաձայն եմ» կոճակը՝ պայմաններին համաձայնելու համար¹⁵⁶:

¹⁵³ Տե՛ս **John Dickie** "Internet and Electronic Commerce Law in the European Union, նշված աշխատությունը, էջ 28:

¹⁵⁴ Տե՛ս Website agreements, <http://www.dashfarrow.com/website-agreements-browse-wrap-vs-clickwrap-agreements/>

¹⁵⁵ Տե՛ս Shrink-wrap contracts, an overview, <http://www.internationallawoffice.com/newsletters/Detail.aspx?g=5ad7e558-f84b-466c-ab24-111aec0d8eb6>

¹⁵⁶ Տե՛ս Click-wrap Agreement Held Enforceable, http://www.internetlibrary.com/publications/cwahe_art.cfm

Յաջվի առնելով, որ նման պայմանագրերը լայն տարածում ունեն, իսկ հաճախ գնորդները չունեն համապատասխան գիտելիքներ՝ հասկանալու, թե ո՞ր պահից պայմանագիրը համարվեց կնքված և հետևաբար ո՞ր պահից սկսած՝ իրենք պարտավոր են կատարել վճարում, կարծում ենք, որ նման պայմանագրերի դեպքում կայքերը պարտավոր են նախատեսել «կրկնակի հարցման» մեխանիզմը: Այդ մեխանիզմի դեպքում մինչև պայմանագիրը կնքված համարվելը կայքը պետք է մեկ պատուհանով կրկին հարցնի, թե արդյոք գնորդը համաձայն է պայմանագրի պայմաններին և գիտակցում է, որ «այո» կոճակը սեղմելուց հետո պայմանագիրը կհամարվի կնքված իր համապատասխան իրավական հետևանքներով հանդերձ: Յնարավոր է նախատեսել նաև կարգավորում, որ պայմանագիրը կնքված է համարվում ոչ թե կոճակը սեղմելու պահից, այլ կոճակը սեղմելու արդյունքում, որպես համապատասխան պայմանագրի կնքման հետևանք, էլեկտրոնային փոստին նամակ ստանալու պահից: Բացի այդ, եթե լինեն իրավիճակներ, երբ «հղում» կոճակը սեղմելիս առաջանան տեխնիկական թերուղյուններ, և ակցեպտանտի համար որոշակի չլինի այն հարցը, թե ի վերջո կնքվեց պայմանագիր, թե ոչ, ապա, մեր կարծիքով, նման պայմաններում պետք է դիտարկել, որ պայմանագիր չի կնքվել, քանի դեռ չկա հակառակը հիմնավորող ապացույց:

Ինչպես վերևում նշել ենք, քանի որ ակցեպտները հաճախ կարող են տրված լինել սխալ մամբ, պետք է նախատեսել ակցեպտանտի՝ որոշակի ողջամիտ ժամկետում պայմանագրից հրաժարվելու իրավունքը: Նման պարագայում հարց է ծագում, թե արդյոք էլեկտրոնային ձևով կնքված պայմանագիրը պետք է համարել կնքված ակցեպտի ստացման, թե՛ ակցեպտից հրաժարման ժամկետի ավարտի պահից: Եթե ակցեպտի ստացման պահը համարվի պայմանագրի կնքման պահը, ապա դա կարող է հանգեցնել օֆերենտի կողմից իր պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Վերջինս կարող է ձեռնարկել մի շարք գործողություններ, որոնք կբխեն պայմանագրի բնույթից, հնարավոր է կրի ծախսեր, մինչդեռ ակցեպտանտը կարող է փոխել իր մտադրությունը և հրաժարվել իր ակցեպտից: Ուստի գտնում ենք, որ պետք է որպես ընդհանուր կանոն

ներառել այն կարգավորումը, որ էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերի դեպքում պայմանագիրը կհամարվի կնքված ոչ թե ակցեպտի ստացման օրը, այլ ակցեպտից հրաժարվելու ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը: Մյուս կողմից էլ կողմերը հնարավոր է՝ չցանկանան սպասել ակցեպտից հրաժարվելու ժամկետի ավարտին և անմիջապես անցնեն պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Ուստի պետք է նախատեսել հնարավորություն, որ ակցեպտանտի կողմից հստակ կամահայտնությամբ «մտածելու ժամկետից» հրաժարվելու դեպքում պայմանագիրը համարվի կնքված ակցեպտի ստացման օրը, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ:

Այս կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել նախադասությունն հետևյալ բովանդակությամբ.

«Էլեկտրոնային միջոցներով պայմանագիր կնքելու դեպքում պայմանագիրը կնքված է համարվում ակցեպտից հրաժարվելու ժամկետի ավարտին հաջորդող օրը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

ա) ակցեպտանտը հրաժարվել է ակցեպտից հրաժարվելու իր իրավունքից կամ

բ) ակցեպտանտը ձեռնարկել է սույն օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ մասում նշված գործողություններից որևէ մեկը»:

Էլեկտրոնային հաղորդակցության միջոցների կիրառումը դժվարացնում է տեղեկատվության ուղարկման և ստացման վայրի հստակեցումը, մինչդեռ նման հանգամանքը որոշիչ է պայմանագրի կնքման վայրի որոշման, հետևաբար և կիրառելի է օրենսդրության որոշման համար: Կողմերի գտնվելու վայրի և դրանով հաճախ պայմանավորված կնքման վայրի որոշումը կարևոր է նաև կոլիզիոն նորմերի կիրառման տեսանկյունից: Համացանցի միջոցով կողմերի միջև հարաբերությունների առաջացման դեպքում դատարանները հաճախ կանգնում են խնդրի առաջ, քանի որ դա կարող է հանգեցնել տարբեր իրավական համակարգերի բախման: Հիմնական բարդությունն այն է, որ համացանցում իրավահարաբերությունների սուբյեկտները սովորաբար չեն ունենում ֆիզիկական տարածքների հետ որևէ կապ:

Գտնվելու վայրի որոշումը, սակայն, կարևոր նշանակություն ունի: Այն թույլ է տալիս որոշելու այն իրավունքը, որը կիրառելի է գործարքների նկատմամբ այն պետությունների դատարանների համար, որոնք պետք է քննեն կողմերի միջև առաջացած վեճերը:

Սպառողների հետ կնքվող պայմանագրերում կողմի գտնվելու վայրը որոշելու համար հիմք է ընդունվում նրա բնակության վայրը¹⁵⁷: Գործարարների պարագայում կողմերի գտնվելու վայրի որոշման առավել արդյունավետ միջոցներից է առևտրային ձեռնարկության գտնվելու վայրի հղման օգտագործումը: Սակայն կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ վաճառողը գործարք է կնքում մի որևէ երկրում գտնվող սերվերի վրա տեղադրված կայքերից որևէ մեկով, մինչդեռ նրա առևտրային ձեռնարկությունը գտնվում է այլ երկրում: Հարց է առաջանում, թե որտեղ է գտնվում անձը. այնտեղ, որտեղ նրա ձեռնարկությունն է գտնվում, թե՛ այնտեղ, որտեղ սերվերն է տեղադրված: Որպեսզի այս կոլիզիայից խուսափենք, պետք է տարբերակում անցկացնել համակարգչային սարքավորումների և ծրագրային ապահովման միջև, որոնք պահպանվում են այդ սարքավորումների վրա կամ օգտագործվում են նրա շահագործման դեպքում: Կայքը չպետք է համարել առևտրային ձեռնարկություն, քանի որ այն ծրագրային ապահովման և էլեկտրոնային տվյալների համակցություն է և չունի ֆիզիկական տեղադրվածություն: Սերվերը, որի վրա տեղադրված է կայքը, սարքավորում է, որն ունի ֆիզիկական տեղադրվածություն, սակայն սերվերի գտնվելու վայրը նույնպես չի կարող ինքնաբերաբար համարվել առևտրային ձեռնարկության գտնվելու վայր, քանի որ սերվերի սեփականատերը և այն անձը, որն համացանցում իրականացնում է առևտրային գործարքեր, հաճախ չեն համընկնում: ՄԱԿ-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տեխնիկական միջոցների և սարքավորումների գտնվելու վայրը, դրանց հասանելիությունը կողմերի համար դեռևս չի նշանակում, որ առևտրային ձեռնարկությունը գտնվում է այդ վայրում:

¹⁵⁷ Տե՛ս «Միջազգային պայմանագրերում էլեկտրոնային հաղորդակցության միջոցների կիրառման մասին» ՄԱԿ-ի 2005թ. կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը:

Կոնտրագենտների գտնվելու վայրի չափորոշիչ կարող է լինել կայքի դոմենային անվանումը կամ էլ եկտրոնային փոստի հասցեն: Կարծիք կար, որ եթե օգտագործվում են հասցեներ, որոնցում օգտագործվում են որևէ պետության կողմից սեփականաշնորհված դոմենային անվանումներ (օր.՝ .am, .ru, .de), ապա կարելի է պնդել, որ կողմերի առևտրային ձեռնարկությունները գտնվում են այդ պետություններում: Սակայն, ինչպես և վերևում նշվեց, այս տեսակետը չի դիմանում քննադատությանը: Էլեկտրոնային փոստի հասցեն կամ դոմենային անվանումը չեն կարող մեխանիկորեն դիտվել որպես կողմերի առևտրային ձեռնարկությունների գտնվելու վայրի ապացույց, քանի որ սովորաբար կազմակերպություններն առաջարկում են ապրանքներ և ծառայություններ կայքերի միջոցով, որոնք գրանցված են այն պետություններում, որտեղ նրանք չունեն առևտրային ձեռնարկություն: Բացի այդ՝ ոչ միշտ է, որ դոմենային անվանումները նախատեսում են ցուցում, թե որ պետությանն է այն պատկանում (օր.՝ .com, .edu, .net, .org): Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ այս չափանիշը կարող է օգտագործվել միայն այլ չափանիշների հետ համակցության մեջ: Չարկ է նշել, որ նմանատիպ մոտեցում է դրսևորվում նաև ՄԱԿ-ի կոնվենցիայում, որի 6-րդ հոդվածի համաձայն՝ այն հանգամանքը, որ կողմն օգտագործում է որոշակի դոմենային անվանում կամ էլեկտրոնային փոստ՝ որևէ կոնկրետ երկրի հետ կապված, դեռևս չի նշանակում, որ նրա առևտրային ձեռնարկությունը գտնվում է այդ երկրում:

Կողմերի գտնվելու վայրի որոշման միջոց կարող է լինել նաև պայմանագրով նախատեսված կողմերի՝ իրենց առևտրային ձեռնարկության մասին տեղեկություն տալու պարտականությունը: Ընդ որում՝ ՄԱԿ-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ կողմի առևտրային ձեռնարկության գտնվելու վայրը ենթադրվում է այն վայրը, որը նշվել է կողմի կողմից, եթե մյուս կողմը չի ապացուցում, որ կողմը տվյալ հասցեում չունի առևտրային ձեռնարկություն: Եթե կողմը առևտրային ձեռնարկության գտնվելու վայր չի մատնանշել և ունի ձեռնարկության մեկից ավելի վայրեր, ապա որպես ձեռնարկության գտնվելու վայր պետք է ընդունել այն

վայրը, որն առավել ապես է կապված տվյալ պայմանագրի հետ՝ ի նկատի ունենալով այն պայմանները, որոնց տեղյակ են եղել կողմերը պայմանագիրը կնքելուց առաջ և այն կնքելիս: Ընդ որում՝ կոնվենցիայի 4-րդ հոդվածում ասվում է, որ ձեռնարկության գտնվելու վայրը այն վայրն է, որտեղ կողմն ունի մշտական հաստատություն և հետապնդում է տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակ, այլ ոչ թե որոշակի վայրում ապրանքների կամ ծառայությունների ժամանակավոր պահպանում: Այսպիսի մոտեցումն արդարացված ենք համարում, միևնույն ժամանակ կարծում ենք, որ կոնվենցիայով պետք է նախատեսվեր նման պարտականության չկատարման դեպքում վրա հասնող հետևանքը, օրինակ՝ վեճի քննվելը հայցվորի գտնվելու վայրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 460-րդ հոդվածի համաձայն, եթե պայմանագրում նշված չէ դրա կնքելու վայրը, պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած քաղաքացու բնակության կամ իրավաբանական անձի գտնվելու վայրում:

Ինչպես նշվեց, կողմերի բնակության կամ գործունեության վայրը հիմք ընդունելու սկզբունքը պահպանվել է նաև էլեկտրոնային միջոցներով հաղորդագրություններ փոխանակելու դեպքում: Այսպես, թե՛ ՄԱԿ-ի կոնվենցիայի և թե՛ ՄԱԿՄԱԻՀ-ի նմուշային օրենքի¹⁵⁸ վերլուծությունից հետևում է, որ երկու ակտերում էլ առաջարկվում է հաղորդագրությունների ուղարկման և ստացման վայրի որոշման միևնույն մոտեցումը, ըստ որի, եթե հասցեատերն ու ուղարկողն այլ պայմանավորվածություն չունեն, ապա էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկման և ստացման վայր է համարվում նրանց առևտրային ձեռնարկությունների գտնվելու վայրը: Այն դեպքում, երբ կողմերն ունեն մեկից ավելի ձեռնարկություններ, ապա նրանց ձեռնարկության գտնվելու վայր է համարվում այն վայրը, որն առավել սերտ է կապված կողմերի միջև կնքվող գործարքի հետ, իսկ գործարքի բացակայության դեպքում՝ նրանց հիմնական ձեռնարկության գտնվելու վայրը: Եթե կողմերը չունեն առևտրային ընկերություններ, ապա հիմք է ընդունվում նրանց բնակության վայրը: Արժե նշել, որ կարգավորումը նմանատիպ

¹⁵⁸ Տե՛ս համապատասխանաբար 10-րդ և 15-րդ հոդվածները:

Ե նաև Առևտրի միջազգային պալատի կողմից մշակված Էլեկտրոնային պայմաններում¹⁵⁹: Միևնույն ժամանակ կոնվենցիան ամրագրում է մի դրույթ, որ եթե կողմը նշել է իր առևտրային ձեռնարկության գտնվելու կոնկրետ վայրը, ապա այն հիմք է ընդունվում, եթե, իհարկե, մյուս կողմը չի ապացուցել, որ իր կոնտրագենտն այդ վայրում ձեռնարկությունն չունի: Սրանից կարելի է հանգել այն եզրակացությանը, որ առաջնային և կարևոր են համարվում կողմերի հայտարարությունները: Հարկ է ընդգծել, որ ի տարբերություն նմուշային օրենքի՝ կոնվենցիայում տրվում է առևտրային ընկերության վայրի հասկացությունը, մասնավորապես՝ կոնվենցիայի 4-րդ հոդվածի «հ» կետի համաձայն՝ առևտրային ընկերության վայրն այն վայրն է, որտեղ կողմը իրականացնում է մշտական տնտեսական գործունեություն և տարբերակվում է ապրանքների և ծառայությունների ժամանակավոր մատուցումից կոնկրետվայրերում:

Նմուշային օրենքի մեկնաբանությունների համաձայն՝ վայրի մասին կանոն նախատեսելու հիմնական պատճառն այն է, որ հաճախ հասցեատիրոջ տեղեկատվական համակարգը չի գտնվում այն վայրում, որտեղ հասցեատերն է գտնվում: Հետևաբար հոդվածի իրավակարգավորման հիմնական նպատակն է հստակեցնել, որ տեղեկատվական համակարգի վայրը որոշիչ չափանիշ չդիտվի կողմերի վայրը որոշելիս¹⁶⁰:

Հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ կարգավորումը որևէ խնդիր չի առաջացնի, եթե միայն հստակեցվի, թե որն է համարվում անձի գտնվելու վայրը Էլեկտրոնային հաղորդագրություններ փոխանակելիս: Այդ առնչությամբ կարծում ենք, որ «Էլեկտրոնային փաստաթղթի և Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է կատարել փոփոխություն և ավելացնել դրույթ վայրի մասին:

Այսպես, վերևում արդեն իսկ արծարծված և առաջարկված «Էլեկտրոնային փաստաթղթի և Էլեկտրոնային թվային

¹⁵⁹ Տե՛ս ICC e Terms, 2004, <http://www.iccwbo.org/products-and-services/trade-facilitation/tools-for-e-business/>

¹⁶⁰ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 54:

ստորագրության մասին» ՀՀ օրենքի 7¹-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսել .

«3. Էլ Եկտրոնայ ին հաղորդագրությունների ուղարկման և ստացման վայրը որոշելիս հիմք է ընդունվում իրավաբանական անձանց դեպքում՝ նրանց գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ նրանց բնակության վայրը»:

ԳԼՈՒԽ 3. ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ՃԼՈՎ ԿՆՔՎՈՂ ԱՅԱՅ ՄԱՆԱԳՐԵՐՆ ԱՌԱՆՃ ԻՆ ՈՂ ՈՐՄՆԵՐՈՒՄ¹⁶¹

§3.1. ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ՃԼՈՎ ԿՆՔՎՈՂ ԱՅԱՅ ՄԱՆԱԳՐԵՐՆ ՍԱԿՄՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԿՋ ՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՈՂ ՈՐՄՈՒՄ

1990-ականների վերջին սպառողները համացանցը դիտարկում էին պարզապես որպես Էլեկտրոնային ձևով նամակների փոխանցման հարթակ: Սպառողներն ընդհուպ նախընտրում էին ապրանքի ուսումնասիրությունը համացանցով, սակայն դրա ձեռքբերումը խանութում: Վերջին համաշխարհային ֆինանսական ճգնաժամը մեծ խթան հանդիսացավ Էլեկտրոնային առևտրի համար, քանի որ սպառողները նույնատիպ ապրանքն ավելի մատչելի ձեռք բերելու այլ ընտրանքային ճանապարհ էին փնտրում: Ըստ ուսումնասիրությունների՝ Անգլիայում, Գերմանիայում ու Ֆրանսիայում գնորդները կարող էին ընդհանուր առմամբ 17% խնայել՝ առցանց գնումներ կատարելով: Գործարարները նույնպես շահագրգռված էին առցանց առևտրով, քանի որ այդ կերպը նդլայնում էին իրենց ապրանքի սպառման շուկան, ինչպես նաև նվազեցնում էին իրենց հնարավոր ծախսերը: Բացի այդ, այդ տարիներին իրենց

¹⁶¹ Սույն գլխում անդրադարձ է կատարվում Էլեկտրոնային ձևով կնքվող այս մանագրերին սպառողների իրավունքների պաշտպանության և փոխադրումների ոլորտներում: Ոլորտների ընտրությունը պայմանավորված է Էլեկտրոնային ձևով շրջանառվող փաստաթղթերի հետ կապված հենց այս ոլորտներում ծագող գործնական խնդիրների ու հարցերի բազմաթիվությամբ, ինչպես նաև հենց այդ խնդիրներին հնարավոր լուծումներ առաջարկելու առաջնահերթությամբ: Եվրոպական և ամերիկյան իրավական ակտերն առաջնահերթ կարևորում և մանրամասն կարգավորում են նախատեսում՝ ուղղված Էլեկտրոնային միջավայրում սպառողների իրավունքների պաշտպանությանը՝ հաշվի առնելով վերջիններիս իրավական պաշտպանության խոցելիությունը Էլեկտրոնային հարթակներում: Մյուս կողմից Էլ պատահական չէ, որ «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքում որպես օրենքի առանձին հատուկ գլուխ հատկապես անդրադարձ է կատարվել Էլեկտրոնային կոնսամենտներին, իսկ Էլեկտրոնային առևտուրն ուսումնասիրած իրավագետների աշխատություններն Էլ մեծամասամբ նվիրված են հենց փոխադրումներին՝ պրոյեկտելով Էլեկտրոնային միջավայրի ընձեռած հնարավորություններն ու հատկապես այս ոլորտում ծագած մարտահրավերները: Յաշվի առնելով, որ ՀՀ-ում արժեթղթերի Էլեկտրոնային առուվաճառքի հարցերը մանրամասն կարգավորվում են ՀՀ կենտրոնական բանկի՝ որպես Կարգավորողի ընդունած մի շարք իրավական ակտերով, ինչպես նաև առկա է Կարգավորողի խիստ վերահսկողությունը, այդ ոլորտում առկա հարցերի ուսումնասիրությանը անդրադարձ չի կատարվել: Կորպորատիվ իրավաբանությունների հետ կապված տե՛ս Аветисян В., Актуальные проблемы корпоративных правоотношений в Республике Армения (на примере хозяйственных обществ): Дисс. ... доктор юрид. наук., Ереван, 2014:

աշխատանքը կորցրած բազմաթիվ անհատներ, այլ ելք չունենալով, փորձում էին աշխատանք գտնել համացանցով կամ նոր բիզնեսներ հիմնադրել¹⁶²: Եթե նախկինում հիմնական շեշտադրումը կատարվում էր գործարար-սպառող հարաբերությունների վրա, ապա 2010թ.-ից սկսած՝ հատուկ ուշադրություն է դարձվում հենց սպառող-սպառող հարաբերություններին¹⁶³:

Էլեկտրոնային միջավայրում սպառողների իրավունքների պաշտպանությունը ներկայումս գրավում է միջազգային հանրության և պետությունների ուշադրությունը: Ընդունվել են բազմաթիվ իրավական ակտեր, որոնք ուղղված են երաշխավորելու սպառողների պաշտպանվածությունը և մեխանիզմներ նախատեսելու սպառողների խախտված իրավունքների վերականգնման համար: Սպառողներն առավել խոցելի են դառնում էլեկտրոնային միջավայրում, որտեղ ապրանք վաճառողը կամ ծառայություն մատուցողը հնարավոր է թաքցնի իր մասին տեղեկատվություն կամ մոլորության մեջ գցի սպառողներին: Սպառողների մեջ անցկացրած միջառք հարցումներ ցույց են տալիս, որ էլեկտրոնային եղանակով պատվիրված ապրանքների ինքնուրույն ստուգումը չի առաքվում, իսկ առաքված ապրանքների առնվազն ութ տոկոսն ունենում է որակական ու փաթեթավորման խնդիրներ: Նման դեպքերում սպառողն իր իրավունքների պաշտպանության նկատառումներից ելնելով՝ ցանկանում է հաղորդակցվել վաճառողի հետ, ինչը լեզվի խոչընդոտի և հեռավորության խնդիրներից բացի, բարդանում է նաև, քանի որ վաճառողը պարզապես կարող է փակել իր՝ որպես օգտատիրոջ հաշիվը (account): Ավելին, ապրանքների վերադարձը հաճախ ենթադրում է սպառողի համար ծախսեր, իսկ էլեկտրոնային եղանակով առաքվող ապրանքների հետ վերադարձն անգամ տեխնիկապես դժվար է¹⁶⁴:

Եվրոպական միությունը մշակել է սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղված տարբեր ինստրումենտներ, այդ թվում՝

¹⁶² Տե՛ս OECD conference on Empowering E-consumers, Strengthening Consumer Protection in the Internet Economy, Background report, Washington D.C., 2009, 10-11 էջեր:

¹⁶³ Տե՛ս OECD conference on Empowering E-consumers, Strengthening Consumer Protection in the Internet Economy, նշված աշխատությունը, էջ 23:

¹⁶⁴ Տե՛ս **John Dickie**, Producers and Consumers in EU E-commerce law, նշված աշխատությունը, էջ 28:

դիրեկտիվներ, որոնցից են «Էլեկտրոնային առևտրի մասին» 2000/31/EC և «Սպառողների իրավունքների մասին» 2011/83/EU դիրեկտիվները: Պետք է նշել, որ երկու դիրեկտիվների ուսումնասիրությունն ևս հետևում է, որ դրանք չեն կարգավորում ֆինանսական ծառայությունները, այլ առավելապես առտևա-ապրանքային բնույթի են: ԵԱՀԿ համանախագահները նույնպես հաստատակամություն են հայտնել համոզվելու, որ Էլեկտրոնային առևտրի մասնակից սպառողները թափանցիկ ու արդյունավետ պաշտպանության հնարավորություն ունենան Էլեկտրոնային գործարքների դեպքում, խթանել շուկայական ինքնակարգավորող մեխանիզմներ, որոնք սպառողների ներկայացուցիչների մասնակցությամբ կլուծեն վեճերը և կնախատեսեն սպառողների շահերին ուղղված իրավանորմեր, կխթանեն տեխնոլոգիաների մշակումը որպես սպառողների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ, ինչպես նաև կկրթեն սպառողներին Էլեկտրոնային առևտրում մասնակցության, ռիսկերի, ինչպես նաև իրենց իրավունքների պաշտպանության մեխանիզմների մասին¹⁶⁵: Սպառողների իրավունքների պաշտպանության նպատակով տարբեր երկրներ օրենսդրական փոփոխություններ են կատարել և հանդես եկել տարբեր լուծումներով: Օրինակ՝ Նորվեգիայում սպառողների իրավունքների պաշտպանը մշակել է օրինակելի պայմանագիր, որը պետք է կիրառվի օնլայն առևտրում, քանի որ պարզվել է, որ Էլեկտրոնային կայքերի մեծ մասը չի տեղադրում ապրանքի գնի, առաքմամբ պայմանավորված և ընթացքում ծագող այլ ծախսերի վերաբերյալ բավարար տեղեկատվություն¹⁶⁶:

Կայքերը կամ Էլեկտրոնային փոստերը հաճախ կարող են ընդգրկել շփոթեցնող ինֆորմացիա, ապրանքների, ծառայությունների ոչ ճիշտ նկարագրություն, ինչի հետևանքով հաճախ սպառողները չեն իմանում, թե ում դիմեն տեղեկատվության հստակեցման համար¹⁶⁷: Իսկ երբ խնդիր է առաջանում, սպառողը

¹⁶⁵ Տե՛ս Declaration on Consumer protection in the context of electronic commerce, made by OECD ministers at the Conference “A borderless world: Realising the Potential of global Electronic commerce”, 1998, Ottawa, Canada, էջ 17:

¹⁶⁶ Տե՛ս OECD conference on Empowering E-consumers, Strengthening Consumer Protection in the Internet Economy, նշված աշխատությունը, էջ 18:

¹⁶⁷ Տե՛ս Հայկյանց Ա., Դանիելյան Վ., «Օֆերտայի և պայմանագրի կնքման վայրի

հայ տնտեսագետները, որ համապատասխան ինտերնետային կայքն արդեն փոխել է հրապարակված տեղեկատվությանը կամ հայտարարությանն առանց սպառողի իմացության՝ վերջինիս գրկելով ապացուցման հնարավորությունից¹⁶⁸: Նման իրավիճակներից խուսափելու համար ԵՄ «Էլեկտրոնային առևտրի մասին» և «Սպառողների իրավունքների մասին» վերոնշյալ դիրեկտիվները վաճառողներին, ծառայություն մատուցողներին պարտադրում է սպառողներին պարզ ու մառչելի ձևով տրամադրել տեղեկատվություն իրենց ապրանքի, ծառայության, ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, իր աշխարհագրական հասցեի, հեռախոսի, էլեկտրոնային փոստի վերաբերյալ: Բացի այդ, վերջիններս պարտավոր են սպառողներին տրամադրել իրենց ապրանքի կամ ծառայության ընդհանուր արժեքը, հարկերը և բոլոր առաքման ծախսերը ներառյալ, տեղեկացնեն ընդունելի վճարել աճների մասին: Վաճառողները նախապես պետք է հասանելի դարձնեն, թե գործարք կնքելու համար ինչ տեխնիկական քայլեր պետք է կատարի սպառողը հրապարակային օֆերտան ակցեպտավորելու (ապրանքը ձեռք բերելու) համար, ինչպես նաև հստակեցնել այն պահը, երբ օֆերտան կհամարվի ակցեպտավորված, ինչպես և թե ինչ քայլեր անհրաժեշտ կլինեն կատարված սխալներն ուղղելու համար: Վաճառողը պարտավոր են տեղեկացնել սպառողին գործարքից հրաժարվելու իրավունքի, դրանից օգտվելու պայմանների մասին, տեղեկացնեն, թե ով է կրելու ապրանքը վերադարձնելու ծախսերը: Վաճառողն ընդհուպ պարտավոր է տեղեկացնել սպառողներին կայքի շահագործման հասանելիության սահմանափակումների մասին՝ դրանց առկայության դեպքում, ինչպես նաև կայքի շահագործման՝ սարքավորումների և (կամ) ծրագրային ապահովման հետ համատեղելիության և (կամ) փոխգործակցության սահմանափակումների մասին, որի մասին տեղյակ է կամ ողջամտորեն պետք է տեղյակ լինի ինքը¹⁶⁹: Վաճառողը պարտավոր է նաև սպառողին

որոշման առանձնահատկությունները էլեկտրոնային ձևով կնքվող պայմանագրերի դեպքում», Էջ 59:

¹⁶⁸ Տե՛ս **John Dickie**, Producers and Consumers in EU E-commerce law, նշված աշխատությունը, Էջ 27:

¹⁶⁹ Տե՛ս «Էլեկտրոնային առևտրի մասին» 2000/31/EC դիրեկտիվի 5-րդ հոդվածը «Սպառողների իրավունքների մասին» 2011/83/EU դիրեկտիվի 6-րդ հոդվածը:

տրամադրել պայմանագրի օրինակը պայմանագրի կնքումից հետո ողջ ամիս ժամանակում¹⁷⁰:

ՀՀ օրենսդրության ուսումնասիրությանը ցույց է տալիս, որ այն չի նախատեսում առանձնահատուկ կարգավորումներ էլեկտրոնային առևտրաշրջանառության հետ կապված սպառողների իրավունքների խախտման կապակցությամբ, իսկ նախատեսված կարգավորումներն էլ ամբողջությամբ կիրառելի չեն էլեկտրոնային եղանակով ծագող վեճերի նկատմամբ: Մասնավորապես, էլեկտրոնային առևտրի ամենաառաջին խթաններից ու սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղված մեթոդներից է ապրանքը վերադարձնելու սպառողի իրավունքը: «Սպառողների իրավունքների մասին» 2011/83/EU դիրեկտիվի համաձայն՝ սպառողը պետք է ունենա 14 օր ժամանակ գործարքից հրաժարվելու համար առանց որևէ պատճառի նշման և առանց լրացուցիչ ծախսերի, բացառությամբ ապրանքը վերադարձնելու ծախսերի, եթե վաճառողը նախապես չի համաձայնվել անձամբ կրել այդ ծախսերը: Ընդ որում՝ գործարքից հրաժարվելու դեպքում վաճառողը պետք է գնորդին վերադարձնի գնորդի կողմից կատարված ցանկացած վճարում: Սպառողը պետք է տեղեկացնի վաճառողին պայմանագրից հրաժարվելու իր որոշման մասին: Պայմանագրից հրաժարվելը ազատում է կողմերին պայմանագիրը կատարելու պարտականությունից¹⁷¹: Նման կերպ դիրեկտիվը հնարավորություն է ստեղծում սպառողի համար առաքված ապրանքը համեմատել էլեկտրոնային կայքով մինչև գնումը տրամադրված ապրանքի նկարագրության հետ և ըստ այդմ՝ որոշել, թե արդյոք ցանկանում է այդ ապրանքը պահել, թե ոչ: Էլեկտրոնային եղանակով գործարք կնքելիս ապրանք ձեռքբերողը չի կարողանում շոշափել և տեսնել ապրանքը, գնահատել ապրանքի իրավական որակը, այդ իսկ պատճառով մեծ է հավանականությունը, որ անձը կարող է սխալ վել իր ընտրության մեջ: Իհարկե, դիրեկտիվով նախատեսված են սահմանափակումներ որոշակի ապրանքատեսակներ վերադարձնելու համար, մասնավորապես՝ գործարքից հրաժարվելու իրավունքը

¹⁷⁰ Տե՛ս «Սպառողների իրավունքների մասին» 2011/83/EU դիրեկտիվի 8-րդ հոդվածը:

¹⁷¹ Տե՛ս «Սպառողների իրավունքների մասին» 2011/83/EU դիրեկտիվի 11-րդ «13-րդ և 14-րդ հոդվածները:

կիրառելի չէ այն ծառայությունների համար, որոնց մատուցումն ավարտվել է; այն ապրանքների համար, որոնց գինը ֆինանսական շուկայում տատանվում է և չի կարող կախված լինել վաճառողից; այն ապրանքների համար, որոնք շուտ են փչանում կամ ունեն կարճ պիտանիության ժամկետ, ինչպես նաև հիգիենայի պարագաների, ալկոհոլային խմիչքների, աուդիո և վիդեո ձայնագրությունների, համակարգչային ծրագրերի, թերթերի, հրապարակային աճուրդում գնված ապրանքների, թվային բովանդակությամբ ապրանքների համար¹⁷²:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 517-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ գնորդն իրավունք ունի ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել, գնված ապրանքն այն գնելու կամ վաճառողի հայտարարած այլ վայրերում փոխարինել այլ չափի, ձևի, գույնի կամ համանման կոմպլեկտայնության ապրանքով՝ գնի տարբերության դեպքում անհրաժեշտ վերահաշվարկ կատարելով վաճառողի հետ: Վաճառողի մոտ փոխարինելու համար անհրաժեշտ ապրանքի բացակայության դեպքում գնորդն իրավունք ունի վաճառողին վերադարձնել ձեռք բերած ապրանքը և ստանալ դրա համար վճարած գումարը: Նմանատիպ կարգավորում է նախատեսված նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով: Այսինքն՝ պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը սպառողի կողմից կարող է վերադարձվել միայն, եթե այդ ապրանքը չի կարող փոխարինվել: Ստացվում է, որ էլեկտրոնային կայքերի միջոցով ձեռք բերված ապրանքը ևս սպառողը կարող է վերադարձնել միայն, եթե այն հնարավոր չէ փոխարինել, ինչը ԵՄ դիրեկտիվների համեմատ անհամաչափ նվազ պաշտպանություն է ընձեռում սպառողին: Այս կապակցությամբ, կարծում ենք, որ փոփոխություններ պետք է կատարվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 517-րդ հոդվածում, ինչպես նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում և այդպիսիք շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ:

¹⁷² Տե՛ս «Սպառողների իրավունքների մասին» 2011/83/EU դիրեկտիվի 16-րդ հոդվածը: 117

«Յոդված 517. Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինելու և (կամ) վերադարձնելու գնորդի իրավունքը

1. Գնորդն իրավունք ունի պատշաճ որակի ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել, գնված ապրանքն այն գնելու կամ վաճառողի հայտարարած այլ վայրերում վերադարձնել և (կամ) փոխարինել այլ չափի, ձևի, գույնի կամ համանման կոմպլեկտայնության ապրանքով՝ գնի տարբերության դեպքում անհրաժեշտ վերահաշվարկ կատարելով վաճառողի հետ:

2. Ապրանքը փոխարինելու կամ վերադարձնելու մասին գնորդի պահանջը բավարարվում է, եթե ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրասպառողական հատկանիշները և առկա են ապրանքը հենց այդ վաճառողից ձեռք բերելու մասին ապացույցներ:

3. Այն ապրանքների ցանկը, որոնք սույն հոդվածով սահմանված հիմքերով չեն կարող փոխարինվել կամ վերադարձվել, որոշվում է օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

4. Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը վաճառողի գտնվելու վայր վերադարձնելու հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի հաշվին, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ»:

Նմանապես պետք է նոր կարգավորում նախատեսել նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում և այն շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Յոդված 23. Պատշաճ որակի ապրանքը փոխարինելու և (կամ) վերադարձնելու սպառողի իրավունքը

1. Սպառողն իրավունք ունի վերադարձնել և (կամ) փոխարինել պատշաճ որակի ապրանքը նմանօրինակ ապրանքով այն վաճառողի մոտ, ումից ձեռք է բերել ապրանքը կամ վաճառողի կողմից հայտարարված այլ վայրում, եթե նշված ապրանքը հարմար չէ ձևով, եզրաչափերով, գույնով, չափով կամ այլ պատճառներով չի կարող օգտագործվել սպառողի կողմից իր նշանակությամբ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի և կառավարության սահմանած անվանացանկով ապրանքների:

Սպառողն իրավունք ունի փոխարինել և (կամ) վերադարձնել պատշաճ որակի ապրանքն իրեն հանձնելու պահից 14 օրվա

ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել : Պատշաճ որակի ապրանքը վերադարձնելու ժամկետը համարվում է նաև պահպանված, եթե սպառողն ապրանքն ստանալու օրվանից տասնչորսօրյա ժամկետում այն հանձնել է փոստային, սուրհանդակային, տրանսպորտային կամ առաքման այլ ծառայությունը :

Պատշաճ որակի ապրանքը փոխարինվում և (կամ) վերադարձվում է, եթե նշված ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը, սպառողական հատկությունները, կապարակնիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաև սպառողին տրված վճարման փաստը հավաստող փաստաթուղթը կամ օրենքով սահմանված այլ հաշվարկային փաստաթուղթ :

2. Պատշաճ որակի ապրանքը չի կարող վերադարձվել այն դեպքերում, երբ .

ա) ապրանքների պատրաստումը և մատակարարումը իրականացվել է գնորդի հատուկ պահանջներին համապատասխան կամ ապրանքները անհատականացված են, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջև կնքված պայմանագրով .

բ) մատակարարվում են ապրանքներ, որոնք ունեն արագ փչացման, քայքայման կամ որակի փոփոխության հատկություն, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջև կնքված պայմանագրով .

գ) կապարակնքված ապրանքների վաճառքի դեպքում, որոնք վերադարձման ենթակա չեն առողջապահական կամ հիգիենիկ նկատառումներից ելնելով և որոնք մատակարարվելուց հետո ապակապարակնքվել են գնորդի կողմից .

դ) ապրանքների վաճառքի դեպքում, որոնց մատակարարումից հետո, իրենց բնույթից ելնելով, անքակտելիորեն միախառնվում են միմյանց հետ, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջև կնքված պայմանագրով .

ե) կապարակնքված ձայնային կամ տեսաձայնային ձայնագրության կամ կապարակնքված ծրագրային ապահովման մատակարարման դեպքում, որոնք մատակարարելուց հետո ապակապարակնքվել են գնորդի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջև կնքված պայմանագրով .

զ) թերթերի, ամսագրերի, գրքերի կամ այլ տպագիր նյութերի մատակարարման դեպքում, բացառությամբ բաժանորդագրման դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջև կնքված պայմանագրով:

է) աճուրդում կամ բորսայում կնքված պայմանագրերի դեպքում:

ը) թվային կրիչի վրա չմատակարարվող թվային բովանդակության մատակարարման դեպքում, երբ դրա կատարումն սկսվել է սպառողի անվերապահ նախնական համաձայնությամբ, համաձայնորի՝ սպառողն այդպիսով կորցնում է իր վերադարձման իրավունքը, եթե այլ բան նախատեսված չէ վաճառողի ու գնորդի միջև կնքված պայմանագրով:

3. Կրեդիտի միջոցով, այդ թվում՝ վարկային քարտի օգնությամբ ձեռք բերված ապրանքը վերադարձնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Նման բովանդակությամբ իրավակարգավորման դեպքում սպառողները պաշտպանված կլինեն էլեկտրոնային կայքով ապրանքներ ձեռք բերելու հետ կապված ռիսկերից, իսկ վաճառողների համար կմտնի հստակություն, որ եթե վերադարձվում է պատշաճ որակի ոչ պարենային ապրանք, ապա սպառողը չի կարող վաճառողից պահանջել ապրանքի հետ վերադարձման հետ կապված ծախսերի հատուցում, եթե իհարկե կողմերն այլ պայմանավորվածություն չունեն: Հոդվածի առաջարկվող խմբագրությունից հետևում է, որ այն տարբերակում չի դնում էլեկտրոնային եղանակով, թե խանութից առձեռն է ձեռք բերվել ապրանքը, ինչը պատահական չէ, քանի որ եթե էլեկտրոնային առևտրաշրջանառության մասնակից սպառողին պաշտպանելու համար նրան իրավունք ընձեռենք ապրանքը վերադարձնել, բայց այդ նույն սպառողին զրկենք նման իրավունքից այն դեպքերի համար, երբ նույն ապրանքը նա ձեռք է բերել խանութից, ապա կստեղծվի ոչ հավասարակշիռ շուկայական իրավիճակ: Այդ իսկ պատճառով հոդվածը նախատեսված է կարգավորելու սպառողի կողմից ցանկացած եղանակով ապրանքի ձեռքբերումը, ինչը, մեր կարծիքով, իրավացի է ու համապատասխանում է միջազգային պրակտիկային: Ավելին, eBay

International AG (2004) VIIIZR 375/03¹⁷³ գործով Գերմանիայի քաղաքացիական գործերով դատարանը հաստատել է, որ eBay կայքով ապրանքներ ձեռք բերելիս ու վերադարձնելիս գնորդը պարտավոր չէ պատճառաբանությամբ կամ հիմնավորումներ ներկայացնել, նաև ունի աներկբա իրավունք ապրանք վերադարձնելու և գումարը հետ ստանալու:

Դիրեկտիվները պարտադիր պահանջ են առաջարկում կայքերին տեղեկատվության հրապարակման և տեխնիկական չափանիշների բավարարման տեսանկյունից¹⁷⁴: Ըստ այդմ՝ առաջարկում ենք նաև փոփոխության կատարել «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում առաջարկում ենք ավելացնել է 10.1 հոդված հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 10.1 Ինտերնետային կայքում և (կամ) էլեկտրոնային հավելվածում հրապարակման ենթակա տեղեկատվությունը

1. Ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը, որը հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային պայմանագիր կնքել, պետք է պարունակի՝

ա) վաճառողի էլեկտրոնային, փոստային հասցեները և հեռախոսահամարը,

բ) պայմանագրի ընդհանուր դրույթները և պայմանները,

գ) ապրանքի կամ ծառայության գինը, բոլոր հարկերը, իսկ առկայության դեպքում՝ առաքման և (կամ) այլ ծախսերը ներառյալ (վճարման ենթակա ընդհանուր գումարը).

դ) տեղեկություն ընդունելի վճարման ձևի մասին՝ մինչև սպառողի կողմից գնելու գործողությանն սկսելը.

ե) էլեկտրոնային ձևով լրացվող հաղորդագրության հետ կապակցված տվյալների օգտագործման կարգը, որոնց ամբողջությունը համարվում է ձեռագիր ստորագրությանը համարժեք և հնարավորություն է ընձեռում նույնականացնել

¹⁷³ St' u eBay International AG (2004) VIIIZR 375/03, http://www.beckmannundnorda.de/bgh_ebay_widerruf.html

¹⁷⁴ St' u **John Dickie**, Producers and Consumers in EU E-commerce law, նշված աշխատությունը, էջ 40

Էլեկտրոնային ձևով ստորագրող անձին ու արտահայտում է վերջինիս կամքը.

զ) առաջարկվող պայմանագրի պայմանները համաձայնեցնելիս դրանում փոփոխություններ կատարելու հնարավորությունը և կարգը, ինչպես նաև մինչև օֆերտա կամ ակցեպտ կատարելը անճշտությունները շտկելու եղանակները.

է) նշում ապրանքը վերադարձնելու սպառողի իրավունքի մասին.

ը) բողոքների քննման և վեճերի լուծման արտադատական կարգը (հաշտարարություն, պարտադիր և ոչ պարտադիր արբիտրաժ, մասնագիտական եզրակացություն, անկողմնակալ գնահատում և այլն), որով պարտավոր է ղեկավարվել վաճառողը (աշխատանքներ կատարողը, ծառայությունների մատուցողը):

2. Պայմանագրի պայմանների մասին տեղեկատվությունը ինտերնետային կայքում կամ Էլեկտրոնային հավելվածում պետք է ներկայացվի սպառողին մինչև պայմանագիրը կնքելը:

3. Ինտերնետային կայքը կամ Էլեկտրոնային հավելվածը պետք է սպառողին տրամադրի վճարումը կատարելու վերաբերյալ տեղեկություն:

4. Վաճառողը (աշխատանքներ կատարողը, ծառայությունների մատուցողը) պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկությունները հասանելի դարձնել սպառողին առավելագույն դյուրին որևէ եղանակով»:

Ամբողջական իրավական կարգավորում ապահովելու նպատակով օրենսգրքը պետք է լրացնել 780.1 հոդվածով, որտեղ անհրաժեշտ է անդրադառնալ Էլեկտրոնային առևտրային հարթակ շահագործողի պարտականություններին ու արտացոլել, որ նա պարտավոր է ցուցադրել վաճառողի (աշխատանքներ կատարողի, ծառայությունների մատուցողի) վերաբերյալ օրենքով սահմանված պարտադիր տեղեկատվությունը (պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ գործողությունների հաշորդականությունը, առաքման սահմանափակումները, կայքի շահագործման հասանելիության սահմանափակումները, բողոքների քննության և վեճերի լուծման արտադատական կարգը) և պահպանել վաճառողի (աշխատանքներ կատարողի, ծառայությունների մատուցողի)՝ հարթակում գրանցված

լինելու ամբողջ ժամանակահատվածում և դրա ավարտից հետո առնվազն 3 ամիս, եթե ավելի երկար ժամկետ նախատեսված չէ օրենքով կամ Էլեկտրոնային առևտրային հարթակը շահագործողի հետ կնքված պայմանագրով:

Սպառողների իրավունքների պաշտպանության օգտակար և արդյունավետ միջոցներից է վեճերի այլընտրանքային լուծումը: Ներկայումս տարածում է ստացել Էլեկտրոնային առևտրի պարագայում առցանց վեճերի լուծման տարբերակը արբիտրաժների միջոցով: «Սպառողների իրավունքների մասին» դիրեկտիվի 17-րդ հոդվածի համաձայն՝ անդամ-պետությունները պետք է համոզվեն, որ ծառայություն մատուցողի օրենսդրությունը չի խոչընդոտում վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների կիրառմանը: Վեճերի լուծման նման տարբերակի դեպքում, նախ, սպառողը ստիպված չի լինում պարզել վաճառողի գտնվելու վայրը, դատական հայց հարուցել կամ վարձել փաստաբան, ինչպես նաև կախված չէ տարբերակների կողմից կիրառելի օրենսդրությունից և տարբեր իրավակարգավորումներից: Վեճերի այլընտրանքային ձևով լուծումը ենթադրում է առևտրային հարթակի անդիսացող կայքի կողմից կայքի կիրառելի պայմաններում վեճերի նկատմամբ կիրառելի օրենսդրության մատնանշում, ինչպես նաև սեղմ ժամկետներում ու առանց սպառողի կողմից որևէ ծախսի կատարման տվյալ հարցի/վեճի քննում: Ներկայումս բոլոր հզոր առևտրային հարթակներն ունեն նման կերպ վեճերը լուծելու հնարավորություն և մինչև հետագա փուլերին անցնելը պարտադիր են համարում արբիտրաժային այդ լուծումնային տարբերակն անցնելը:

Այսպիսով, Էլեկտրոնային առևտրի բնագավառում սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակը բարձրացնելու նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է կատարել մի շարք օրենսդրական փոփոխություններ: Պետք է նաև ինկատի ունենալ, որ նման իրավակարգավորումները խախտվելու դեպքում անհրաժեշտ կլինեն նաև համապատասխան վարչաիրավական հանրային նորմեր պարունակող լուծումներ իրավախախտներին պատասխանատվության

Ենթարկելու, ինչպես նաև ոլորտը հնարավորինս կարգավորված պահելու համար:

§3.2. ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ԿՈՆՈՍԱՄԵՆՆՈՂ ՄՐԱՆՍՊՐՏԱՅ ԻՆ ՎՈՒՃԱՊՐՈՒՄՆԵՐԻ ՈՂ ՈՐՄՈՒՄ

Միջազգային առևտրի և բանկային իրավունքի տեսանկյունից բեռնագրի թվայնացումը կարևորագույն քայլ է: Էլեկտրոնային տրանսպորտային փաստաթուղթն ուժեղ խթան է փոխադրումների ընդլայնման համար: Համակարգչային ցանցերի միջոցով միջազգային գործարքների կնքումը տեղի է ունենում անհամեմատ արագ ու դյուրին: Գործարար միջավայրում կողմերն օգտագործում են տվյալների փոխանակման էլեկտրոնային տարբերակը: Այդուհանդերձ, միջազգային առևտրային ու բանկային իրավունքը հաշվի չեն առնում էլեկտրոնային նորարարությունները:

Թղթային և էլեկտրոնային փաստաթղթերը, այդ թվում՝ բեռնագրերն ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Թղթային կոնոսամենտի հիմնական թերությունը դրագինն է: Հատկապես բեռնարկղերով կատարվող առևտրում հարյուրավոր կոնոսամենտներ են թողարկվում յուրաքանչյուր փոխադրման համար: Թղթերի արտադրության և փոխադրման ծախսերը միայն մեկ նավի համար կատարված հաշվարկներով կազմում են հաշիվ-ապրանքագրի արժեքի առնվազն տասը տոկոսը¹⁷⁵: Ավելին՝ միջազգային առևտրի արժեքի յոթ տոկոսը կազմում է թղթային ադմինիստրացիան:

Թղթային կոնոսամենտների հետ կապված հաջորդ խնդիրը դրանց դանդաղ փոխանցումն է, որի ամենաապարզ մեխանիզմի դեպքում ուղարկողն այն փոխանցում է բանկին, իսկ բանկը՝ գնորդին: Որոշակի ապրանքների վաճառքի դեպքում դրանք կարող են գնորդին հասնել շատ ավելի վաղ, քան փաստաթղթերը: Պատճառն այն է, որ շղթայական վաճառքների դեպքում փաստաթղթերը փոխանցագրի միջոցով մի քանի անգամ փոխանցվում են մեկ գնորդից մյուսին, մինչև ապրանքը հասնի վերջնական գնորդին, և անհրաժեշտ է լինում այդ փաստաթղթերը ֆիզիկապես փոխանցել յուրաքանչյուր հաջորդ գնորդին: Բացի այդ՝ նավերն այժմ տեխնիկապես այնքան հզոր են, որ

¹⁷⁵ Տե՛ս *Willem H. van Boom*, 'Certain legal aspects of electronic bills of lading', European Transport, 1997, էջ 9:

շատ ավելի արագ են տեղաշարժվում, ուստի ապրանքը տեղ է հասնում ավելի շուտ, քան համապատասխան փաստաթղթերը: Ապրանքի՝ բեռնաթափման վայր ավելի շուտ հասնելը հանգեցնում է մեծ դժվարությունների, քանի որ ապրանքը չի հանձնվում գնորդին, մինչև վերջինս չստանա կոնոսամենտը: Արդյունքում առաջանում են ծախսեր, քանի որ նավերը կամ այլ փոխադրամիջոցներ ստիպված են լինում լրացուցիչ սպասել նավահանգիստներում, կատարել համապատասխան վճարումներ, որոնց փոխատուցումն էլ արդյունքում ընկնում է հենց գնորդների վրա:

Թղթային կոնոսամենտների հետ կապված ձևականությունները հանգեցրել են ժամանակի, ջանքերի կորուստների և մեծ ծախսերի: Թղթային կոնոսամենտների թերություններն ստիպել են, որպեսզի ընկերությունները փորձեն գտնել այլ ընտրանքային լուծումներ, որոնք կարող են փոխարինել թղթային կոնոսամենտներին՝ ծախսերը նվազեցնելու և կոնոսամենտների փոխանցումը արդյունավետ դարձնելու համար: Մինչ այժմ առավելապես կիրառված երկու այլ ընտրանքային միջոցները ծովային բեռնագրերն ու էլեկտրոնային կոնոսամենտներն էին: Ծովային բեռնագրերը լայնորեն տարածվում են միջազգային առևտրում, սակայն կիրառելի չեն շղթայական առուվաճառքների դեպքում: Ինչպես և կոնոսամենտները, դրանք նույնպես ծառայում են որպես ապրանքի ստացման հավաստագիր և վաճառողի ու փոխադրողի միջև կնքված փոխադրման պայմանագրի ապացույց: Այնուամենայնիվ, ծովային բեռնագրերը չեն կատարում տիտղոսային փաստաթղթի ֆունկցիաներ և հետևաբար փոխանցելի չեն: Ավելի, քանի որ դրանք տիտղոսային փաստաթղթեր չեն, բանկերը մերժում են դրանց դիմաց վճարումների կատարումը և չեն ընդունում այդպիսիք որպես պարտավորությունների ապահովման միջոց¹⁷⁶:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային կոնոսամենտներին, դրանք թույլատրում են գնորդներին ու վաճառողներին հսկել ապրանքները և կատարել քայլեր, եթե կան ուշացումներ կամ ծագել են այլ խնդիրներ: Յենց այդ հսկելու գործառույթը թույլ է տալիս

¹⁷⁶ Տե՛ս **Rouhshi Low**, "Replacing the Paper bill of lading with an Electronic Bill of Lading: Problems and Possible Solutions", *International Business and Trade Law*, 2000, էջ 166:

գործարարներին խուսափել լրացուցիչ ծախսերից և որոշակի իրադրությունների դեպքում ավելի արագ արձագանքել: Էլեկտրոնային կոնոսամենտները փոխանցվում են ակնթարթորեն և վաճառողին թույլ են տալիս ավելի արագ ստանալ վճարումը: Միևնույն ժամանակ նույն փաստաթղթի կրկնօրինակները ձեռքով պատրաստելու անհրաժեշտությունը վերանում է¹⁷⁷: Էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգերը նաև թույլ են տալիս վայրկենական հաղորդակցություն կազմակերպել, ինչպես նաև հաստատել փաստաթղթերի ուղարկումն ու ստացումը¹⁷⁸:

Էլեկտրոնային կոնոսամենտները հնարավոր են դարձրել՝ բարձրացնելու ակրեդիտիվներով աշխատելու արդյունավետությունը և նվազեցնելու ծախսերը՝ բացառելով մի քանի միջնորդ բանկերի մասնակցությունը: Փաստաթղթային ակրեդիտիվի ունիֆիկացիոն և սովորութային կանոնների՝ 2006 թվականին խմբագրությամբ հաստատված տեքստը (The Uniform Customs and Practice for Documentary Credits (UCP) 600) չի ներառում կանոններ Էլեկտրոնային փաստաթղթերի վերաբերյալ: Սակայն վերոնշյալ խմբագրությունը ներառում է հավելված, որը հայտնի է Էլեկտրոնային կանոններ (eUCP) վերտառությամբ և ունի կից ուղեցույց: Այդ հավելվածը հնարավոր է դարձնում, որ թղթային փաստաթղթերի Էլեկտրոնային համարժեքները ներկայացվեն բանկին, եթե կողմերը համաձայնվել են, որ փոխադարձ հաշվարկները կատարվելու են ակրեդիտիվի միջոցով: Վերջիններիս միջև համաձայնեցված ակրեդիտիվի վրանման պարագայում կտարածվեն ինչպես Էլեկտրոնային կանոնները, այնպես էլ Փաստաթղթային ակրեդիտիվի ունիֆիկացիոն և սովորութային կանոնները առանց որևէ ինկորպորացիայի անհրաժեշտության¹⁷⁹: Հավելվածը կողմերին թույլատրում է ներկայացնել Էլեկտրոնային փաստաթղթեր, ինչպես նաև Էլեկտրոնային և թղթային փաստաթղթեր: Ընդհանուր առմամբ Էլեկտրոնային կանոններն այնպես են մշակված, որ չհակասեն

¹⁷⁷ Տե՛ս **Torsten Schmitz**, 'The bill of lading as a document of title', Journal of International Trade Law and Policy, 2011, էջ 255:

¹⁷⁸ Տե՛ս **Miriam Goldby**, Electronic documents in maritime trade, OUP, 2013, պարագրաֆ 11.01:

¹⁷⁹ Տե՛ս **Miriam Goldby**, Electronic documents in maritime trade, նշված աշխատությունը, պարագրաֆ 4.05:

Փաստաթղթային ակրեդիտիվի ունիֆիկացիոն և սովորույթային կանոններին¹⁸⁰:

Չնայած էլեկտրոնային կանոնների մշակմանն ու ներկայացմանը՝ էլեկտրոնային փաստաթղթերի նկատմամբ հետաքրքրությունն այդպես էլ չի ավելացել, և մինչև վերջերս պրակտիկայում բացակայում էին էլեկտրոնային կանոնների կիրառման դեպքերը Փաստաթղթային ակրեդիտիվի ունիֆիկացիոն և սովորույթային կանոնների փոխարեն: ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման վերաբերյալ կոնֆերանսի ժամանակ առաջադրված հարցմանը մասնակիցները պատասխանել են, որ էլեկտրոնային փաստաթղթերի կապակցությամբ հիմնական դժվարությունը բանկերի կողմից դրանք չընդունելու կարծրացած պրակտիկան է¹⁸¹: էլեկտրոնային կոնոսամենտներն առաջացրել են անվտանգության խնդիր, քանի որ ենթադրվում է, որ աճում է զեղծարարությունների հավանականությունը, մինչդեռ բացակայում են այդ մասին վկայող ֆիզիկական ապացույցներ¹⁸²: էլեկտրոնային փաստաթղթերը կարող են ունենալ նույնաման օրինակներ, և ոչ ոք չի կարող պարզել, թե դրանցից որ մեկն է բնօրինակը: Այդուհանդերձ, թվային ստորագրությունները նույնականացման ուժեղ մեխանիզմների միջոցով կարող են այնպես կոդավորել հաղորդագրությունները, որ դրանց չթույլատրված պատճենահանումը դառնա անհնարին¹⁸³: Առկա են որոշակի ծրագրեր և միջոցներ (ստորագրություններ, կնիքներ, շտամպեր), որոնք հեշտությամբ գտնում են փաստաթղթերում կատարված փոփոխությունները և հայտնաբերում, թե արդյոք փաստաթղթերը պատճեն են, թե բնօրինակ: Սակայն էլեկտրոնային փաստաթղթերի անթույլատրելի կրկնօրինակման խնդիրը շարունակում է պահպանվել այն առումով, որ ընկերության աշխատակիցները, որոնք կարող են շահագրգռված լինել և ունեն համապատասխան համակարգիչներից օգտվելու իրավունք,

¹⁸⁰ Տե՛ս **Alan Davidson**, 'Electronic records in letters of credit'

http://www.uncitral.org/pdf/english/colloquia/EC/UNCITRAL-paper_Feb2011-Alan-Davidson.pdf

¹⁸¹ Տե՛ս The Use of Transport Documents in International Trade (United Nations Conference on Trade and Development, 26 November 2003), էջ 29:

¹⁸² Տե՛ս **Georgios I. Zekos**, 'Electronic bills of lading and negotiability', The Journal of World Intellectual Property, 2001, էջ 977:

¹⁸³ Տե՛ս **Anastasia Pagnoni and Andrea Visconti**, 'Secure Electronic bills of lading: blind counts and digital signatures', Electronic Commerce Research, 2010, էջ 363:

չթույլատրված կրկնօրինակներ կամ անթույլատրելի այլ գործողություններ կատարելու հնարավորություն են ունենում կամ ստանում: Էլեկտրոնային փաստաթղթի փոխանցումը չի ջնջում համապատասխան բնօրինակն ուղարկողի համակարգչից, և հետևաբար անբարեխիղճ ուղարկողը կարող է այդ նույն փաստաթուղթն ուղարկել մի քանի այլ անձանց ևս¹⁸⁴: Ինչպես նշում է Կ. Կետերինգը, ամենահայտնի զեղծարարությունները, որոնք ներառում են արժեթղթերի կեղծում, կատարվել են հենց կազմակերպության անձնակազմի կողմից¹⁸⁵:

Բացի էլեկտրոնային առևտրի և էլեկտրոնային ստորագրությունների կապակցությամբ մշակված ՄԱԿՄԱԻՅ-ի նմուշային օրենքներից ու ընդունված ԵՄ դիրեկտիվներից՝ առկա են նաև բեռնափոխադրումները կարգավորող միջազգային ակտեր, որոնց կիրառությունը կարող է տարածվել նաև էլեկտրոնային կոնոսամենտների վրա: Այս հարցը կարգավորող միջազգային ակտերից են՝ «Կոնոսամենտի որոշակի կանոնների ունիֆիկացման մասին» 1924 թ. կոնվենցիան (Յապոնիայի կանոններ), այդ կոնվենցիան փոփոխող 1968 թվականին ընդունված Վիսբիի կանոնները¹⁸⁶, ՄԱԿ-ի «Ծովային բեռնափոխադրումների մասին» 1978 թ. կոնվենցիան (Յամբուրգի կանոններ), ՄԱԿ-ի «Ամբողջությամբ կամ մասնակի ծովով միջազգային բեռնափոխադրումների մասին» 2008 թ. կոնվենցիան (Ռոտերդամի կանոններ)¹⁸⁷:

Թե՛ Յապոնիայի, թե՛ Վիսբիի կանոնները կոնոսամենտներին հղում կատարելիս չեն պահանջում, որ փոխադրողը թողարկի պարտադիր գրավոր կոնոսամենտ, սակայն կոնոսամենտում պարտադիր թվարկման ենթակատեղեկատվության հետ միաժամանակ հիշատակում են դրա գրավոր ձևի մասին¹⁸⁸: Հաշվի առնելով դրանց ստեղծման ժամանակահատվածը՝ կարծում ենք, որ սույն կանոնները մշակված

¹⁸⁴ Տե՛ս **Ronald M. Lee and others**, 'Securing Uniqueness of Rights e-Documents: A Deontic Process Perspective', *Journal of Theoretical and Applied Electronic Commerce Research*, 2008, էջ 83:

¹⁸⁵ Տե՛ս **Kenneth C. Kettering**, 'Securitization and Its discontents: The dynamics of financial product development', *Cardozo Law Review*, 2008, էջ 1553:

¹⁸⁶ Տե՛ս The Hague-Visby Rules - The Hague Rules as Amended by the Brussels Protocol 1968:

¹⁸⁷ Տե՛ս United Nations Convention on Contracts for the International Carriage of Goods Wholly or Partly by Sea (Rotterdam Rules)

¹⁸⁸ Տե՛ս **Diana Faber**, 'Shipping documents and electronic data interchange', 2(1) *Information and Communications Technology Law*, 1993, էջ 21

չեն եղել էլեկտրոնային կոնոսամենսների վրա տարածվելու համար: Յամբուրգի կանոնները նշում են, որ կոնոսամենսը փաստաթուղթ է, և այն պետք է լինի գրավոր: Կանոնների 14.3 հոդվածը նշում է, որ, բացի ավանդական ձեռագրից, ստորագրություները կարող է լինել նաև ֆաքսիմիլ կամ էլեկտրոնային միջոցներով արված, միայն եթե այդպիսի ստորագրություները կոնկրետ երկրի ներպետական իրավունքին չի հակասում: *Յաջվի առնելով էՄ դիրեկտիվներով նախատեսված և արդեն իսկ քննարկված իրավակարգավորումները՝ կարծում ենք, որ Յամբուրգի կանոնները կարող են տարածվել էլեկտրոնային ստորագրություների վրա: Ավելին՝ փորձագետների խումբը ևս նշել է, որ Յամբուրգի կանոնները տարածվում են տրանսպորտային փաստաթղթերի ավելի և այն շրջանակի վրա, քան Յաագայի կանոնները*¹⁸⁹:

Ինչ վերաբերում է Ռոտերդամի կանոններին, ապա դրանք ուժի մեջ չեն մտել, սակայն կողմերը կարող են դրանք ներառել իրենց պայմանագրերում, որպիսի դեպքերում դրանք կիրառելի կլինեն¹⁹⁰: Այդ կանոններն առաջադեմ են և ներառում են թե՛ ԷՓՄ, թե՛ էլեկտրոնային տրանսպորտային փաստաթղթեր¹⁹¹: Կանոններում նշվում է, որ դրանք տարածվում են տրանսպորտային փաստաթղթերի վրա, իսկ էլեկտրոնային փաստաթղթերի դեպքում՝ էլեկտրոնային հաղորդագրություների վրա: Կանոնների 1.19 և 1.20 հոդվածները կարգավորում են փոխանցելի և ոչ փոխանցելի էլեկտրոնային հաղորդագրություները¹⁹²: Կանոնների երրորդ գլուխը կարգավորում է էլեկտրոնային տրանսպորտային հաղորդագրություները, իսկ ութերորդ հոդվածը հատկապես շեշտում է էլեկտրոնային էկվիվալենտության (համարժեքության) սկզբունքի անհրաժեշտությունը¹⁹³: Ըստ կանոնների 38.2 հոդվածի՝ էլեկտրոնային տրանսպորտային հաղորդագրություները պետք է ներառի էլեկտրոնային ստորագրություներ: Ռոտերդամի կանոնները

¹⁸⁹ Տե՛ս **Rouhshi Low**, նշված աշխատությունը, 193-194 էջեր

¹⁹⁰ Տե՛ս **Liang Zhao**, 'The right of control in carriage of goods by sea', 2014, էջ 394

¹⁹¹ Տե՛ս **Melis Ozdel and Johanna Hjalmarsson**, 'The Rotterdam Rules in a nutshell', Britannia News, 2010, էջ 4

¹⁹² Տե՛ս **Miriam Goldby**, Electronic documents in maritime trade, նշված աշխատությունը, պարագրաֆ 6.88

¹⁹³ Տե՛ս **Alexander Goulandris**, 'Electronic bills of lading have come of age' Maritime Risk International, <http://www.i-law.com/ilaw/doc/view.htm?id=266010>

ներմուծել են հսկողության իրավունքի կոնցեպտը, որն իրավունք է տալիս կարգադրության ներքին փոխադրողին բեռի փոխադրման ընթացքում¹⁹⁴: Այսպիսով՝ Ռոտերդամի կանոնները մտցրել են նոր համակարգ, որով ճանաչում են էլեկտրոնային հաղորդակցության կիրառումը միջազգային առևտրում որպես առանձին, բայց հավասար փաստաթուղթ¹⁹⁵: Սակայն կարող են առաջանալ հակասություններ էլեկտրոնային հաղորդակցություն և էլեկտրոնային տրանսպորտային հաղորդագրություն հասկացությունների միջև¹⁹⁶, քանի որ առաջին դեպքում կանոնները պահանջում են կողմի համաձայնությունը, որը պետք է կիրառի էլեկտրոնային հաղորդակցությունը, մինչդեռ երկրորդ դեպքում հողվածը պահանջում է միայն փոխադրողի և վաճառողի համաձայնությունը¹⁹⁷: Չնայած Ռոտերդամի կանոնները չեն հստակեցնում, թե ինչ ձևով պետք է ներկայացվի էլեկտրոնային հաղորդագրությունը, սակայն անկախ այն բանից, թե այն կունենա թղթային կոնոսամենտի տեսք, թե ոչ, պրակտիկայում ծառայությունն ապահովողներն արդեն իսկ փորձում են այս խնդիրը լուծել: Ռոտերդամի կանոնների կիրառման հիմնական խնդիրը դրանց ուժի մեջ չմտած լինելն ու պրակտիկայի պակասն է: Կողմերը խուսափում են իրենց միջև խնդիրները լուծելուց՝ Ռոտերդամի կանոններին հղում տալով, քանի որ անկանխատեսելի կլինի դատարանի դիրքորոշումը:

Պետք է նշել, որ էլեկտրոնային զարգացումները հաշվի են առնվել նաև ԻՆԿՈՏԵՐՄՍ-ում, որի 2010 թ. խմբագրության մեջ նշվում է, որ վաճառողը կարող է ներկայացնել փաստաթուղթն անգամ էլեկտրոնային հաղորդագրությունների տեսքով, եթե կողմերը համաձայնվել են այդպես հաղորդակցվել¹⁹⁸:

Էլեկտրոնային փոխադրման փաստաթղթերի մասին համեմատաբար մանրամասն կարգավորում նախատեսող առաջին փաստաթուղթը «Էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքն էր: Նմուշային

¹⁹⁴ Տե՛ս **Liang Zhao**, 'The right of control in carriage of goods by sea', 2014, էջ 393
¹⁹⁵ Տե՛ս **Johan de Haan**, 'A test case for the Rotterdam Rules' Maritime Risk International, <http://www.ilaw.com/ilaw/doc/view.htm?id=266010>, մուտք՝ 06.02.2015
¹⁹⁶ Տե՛ս Rotterdam Rules, 2,8(a) հոդված:
¹⁹⁷ Տե՛ս **Ioanna Magklasi**, 'Electronic transport records: Assessing the contribution of the Rotterdam rules to e-commerce', 29(2) Computer Law and Security Review, 2013, էջ 120:
¹⁹⁸ Տե՛ս **Jan Ramberg**, 'ICC guide to Incoterms 2010', 13 European Journal of Law Reform, 2011, էջ 380:

օրենքը բաղկացած է երկու մասից, որոնցից երկրորդը կարգավորում է էլեկտրոնային առևտուրը հատուկ ոլորտներում: Առայժմ Հանձնաժողովը մշակել է ուղեցույց **միայն բեռնափոխադրման ոլորտում**, քանի որ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներն առաջնաերթ կիրառություն են պահանջում հենց բեռնափոխադրման ոլորտում¹⁹⁹: Անդրադառնալով Հաագայի և Վիսբիի կանոններին՝ Հանձնաժողովը գտել է, որ այդ կանոնները չեն կարող տարածվել էլեկտրոնային պայմանագրերի վրա՝ հաշվի առնելով նաև դրանց ընդունման ժամանակահատվածը, երբ դրանք մշակվելիս անգամ խոսք չի եղել էլեկտրոնային միջոցների մասին²⁰⁰: Այդուհանդերձ, օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, այդ կանոնների կիրառումը չպետք է բացառվի միայն այն հիմքով, որ կոնոսամենտներն էլեկտրոնային են: *Նմուշային օրենքը որդեգրել է էլեկտրոնային և թղթային հաղորդագրությունների էկվիվալենտության (համարժեքության) սկզբունքը: Ներկայումս ՄԱԿՄԱԻՅ-ի կողմից մշակվում է «էլեկտրոնային փոխանցելի հաղորդագրությունների վերաբերյալ» նմուշային օրենքը, որի նախագծային հոդվածները կարգավորում են նաև էլեկտրոնային հաղորդագրությունների միասնականության, ինչպես նաև հաղորդագրության բնօրինակի ու ստորագրության հարցերը*²⁰¹:

Պետք է նշել, որ անգամ անգլիական օրենսդրությունն առայժմ չի նախատեսում էլեկտրոնային կոնոսամենտների վերաբերյալ կարգավորում: Այսպես, «Ծովային բեռնափոխադրման մասին» 1992 թ. օրենքի համաձայն՝ պետքարտուղարն իրավասու է որոշումը ընդունելու, որով վերոնշյալ օրենքը կտարածվի նաև հեռահաղորդակցության համակարգերի կամ տեղեկատվական այլ համակարգերի վրա: Առայժմ որևէ կարգավորում չկա այս ուղղությամբ: Չնայած այս հանգամանքին՝ էլեկտրոնային

¹⁹⁹ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 58:

²⁰⁰ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Commerce with Guide to Enactment, նշված աշխատությունը, էջ 62

²⁰¹ Տե՛ս UNCITRAL, 'Draft provisions on electronic transferable records' (Working Group IV (Electronic Commerce) 49th Session, New York, 28 April-2 May 2014) http://www.uncitral.org/uncitral/en/commission/working_groups/4Electronic_Commerce.html

կոնոսամենտներն ընկնում են Մեծ Բրիտանիայի «Քաղաքացիական ապացույցների մասին» օրենքի²⁰² կարգավորման ներքո, որի 13-րդ հոդվածն ապահովում է, որ փաստաթուղթ կարող է լինել ցանկացած հաղորդագրություն, որի վրա որոշակի հաղորդագրություն է արձանագրվել²⁰³:

Ինչ վերաբերում է ԱՄՆ կարգավորումներին, ապա ԱՄՆ առաջ է Մեծ Բրիտանիայից: Այն առաջին երկրներից էր աշխարհում, որը որդեգրել է ՄԱԿՄԱԻՅ-ի նմուշային օրենքի կարգավորումները: Այսպես, «Էլեկտրոնային գործարքների մասին» միասնական ակտը (հոդված 7(c)) ճանաչում է էլեկտրոնային հաղորդագրությունների ֆունկցիոնալ համարժեքությունը: Ավելի ին՝ փոփոխությունների է ենթարկվել Միասնական առևտրային օրենսգիրքը, որպեսզի ընդգրկի էլեկտրոնային տիտղոսային փաստաթղթերը²⁰⁴, իսկ դատարանները կարծում են, որ խոչընդոտներ չկան՝ էլեկտրոնային փաստաթղթերի նկատմամբ թղթային փաստաթղթերի ստանդարտ պայմանների կիրառումը կանխարգելող²⁰⁵:

Չնայած առկա իրավական կարգավորումներին՝ պրակտիկայում էլեկտրոնային կոնոսամենտների կիրառումը տարածված չէր մինչև վերջերս: Պատճառը թե՛ հոգեբանական էր, թե՛ իրավական, թե՛ պրակտիկ: Հոգեբանական տեսանկյունից միջազգային առևտրի մասնակիցները դժվարությամբ են վստահում ու վարժվում նորարարական մոտեցումներին, առավել ևս եթե դրանք իրենց համար անկանխատեսելի ու ռիսկային են թվում: Իրավական տեսանկյունից ակնհայտ է, որ վերոնշյալ կոնվենցիաները, բացառությամբ Ռոտերդամի կոնվենցիայի, ըստ էության չեն կարգավորում էլեկտրոնային կոնոսամենտները, դրանք դատական որոշումներով ամրապնդված չեն և պրակտիկ մեկնաբանություններ չեն ստացել, ուստիև դժվարանում է այդ կոնվենցիաների կիրառությունը: Պրակտիկ տեսանկյունից էլեկտրոնային կոնոսամենտների պասիվ կիրառությունը պայմանավորված է նաև բանկերի կողմից դրանց ընդունելի չլինելու պրակտիկայով:

²⁰² Տե՛ս United Kingdom Civil Evidence Act 1968:

²⁰³ Տե՛ս **Stephen Castell**, 'Evidence and Authorisation: Is EDI "Legally Reliable"?', The Computer Law and Security Report, 1990-1991, էջ 2

²⁰⁴ Տե՛ս հոդվածներ 7-102, 7-105, 7-106:

²⁰⁵ Տե՛ս Sea-Land Service Inc. v. Lozen Internat'l, LLC, [2002] AMC 913:

Վաճառողների, գնորդների, միջազգային առևտրում մասնագիտացած սուբյեկտների, ինչպես նաև բանկերի համար էլեկտրոնային կոնոսամենտները կարժևորվեն և կկարողանան կիրառվել պրակտիկայում, եթե դրանք կատարեն թղթային կոնոսամենտների բոլոր երեք գործառույթները²⁰⁶: Բացի այդ երեք հատուկ ֆունկցիաներից՝ դրանք պետք է համապատասխանեն նաև ընդհանուր պահանջներին, այսինքն՝ գրավոր ձևի և ստորագրության պահանջներին, որոնք քննարկվել են երկրորդ գլխում:

Թղթային կոնոսամենտների կատարած հատուկ գործառույթներն են.

1. Բեռն ստանալը հավաստող փաստաթուղթ ինելը

Որպես բեռի ստացումը հավաստող փաստաթուղթ՝ կոնոսամենտը պետք է մանրամասնի ապրանքի քանակը, կշիռը, նկարագրությունը, դրա վիճակը, արդյոք բեռն արդեն իսկ բեռնվել է, ինչպես նաև ապրանքին վերաբերող այլ տվյալներ: Կոնոսամենտը նաև պետք է նշի ուղարկողին, փոխադրողին, ինչպես նաև ստացողին: Պրակտիկայում կոնոսամենտը թողարկվում է երկու կամ երեք բնօրինակի տեսքով, որոնցից յուրաքանչյուրն ունի նույն վավերությունը²⁰⁷: Կոնոսամենտի՝ բեռն ստանալու հավաստագիր ինելու գործառույթի կարևորությունն այն է, որ կոնոսամենտ ստացողը դրա հիման վրա իրավունք ունի հայց հարուցել փոխադրողի դեմ պակասորդի կամ վնասի դեպքում²⁰⁸: *Քանի որ որպես բեռն ստանալու հավաստագիր՝ կոնոսամենտը պարզապես թվում է որոշակի տեսակի տվյալներ, սկզբունքորեն որևէ խոչընդոտ չենք տեսնում, թե ինչու էլեկտրոնային կոնոսամենտը չի կարողանա կատարել վերոնշյալ գործառույթը: Էլեկտրոնային փաստաթղթում նույնպես կարող է նշվել բեռի քանակը, կշիռը, նկարագրությունը, բեռնման վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև բեռն ուղարկողը, ստացողն ու փոխադրողը*²⁰⁹:

²⁰⁶ Տե՛ս **Marek Dubovec**, 'The problems and possibilities for using electronic bills of lading as collateral', Arizona Journal of International and Comparative Law, 2006, էջ 437:

²⁰⁷ Տե՛ս **Stasia Williams**, 'Something old, Something new: The Bill of Lading in the Days of EDI', Transnational Law and Contemporary Problems, 1991, էջ 555:

²⁰⁸ Տե՛ս **Charles Debattista**, Bills of lading in export trade, 2009, էջ 125:

²⁰⁹ Տե՛ս **Andreia Costa Vieira**, 'Electronic bills of lading',

2. Փոխադրման պայմանագիր և պայմանագրի կնքման ասպեկտը լինելը

Վաճառողի և փոխադրողի միջև կոնոսամենտը կատարում է վերջիններիս միջև կնքված փոխադրման պայմանագրի և դրա պայմանների ասպեկտը՝ չնայած այն հանգամանքին, որ փոխադրողի և վաճառողի միջև կնքված փոխադրման պայմանագիրը կարող է ներառել նաև այլ պայմաններ, որոնք կարող են լինել տարբերվել կոնոսամենտում նշված պայմաններից²¹⁰: Այն դեպքում, երբ կոնոսամենտով նախատեսվեն այլ պայմաններ, քան առկա են փոխադրողի և վաճառողի միջև կնքված փոխադրման պայմանագրով, ապա կոնոսամենտով նախատեսված պայմանները կհամարվեն որպես կնքված փոխադրման պայմանագրի պայմանների փոփոխություն, և հակասությունների դեպքում կգործեն կոնոսամենտի պայմանները: Ի տարբերություն նրա, որ փոխադրողի և վաճառողի միջև հարաբերություններում կոնոսամենտը կատարում է փոխադրման պայմանագրի ասպեկտը՝ դեր, գնորդի և փոխադրողի հարաբերություններում կոնոսամենտը կատարում է հենց փոխադրման պայմանագրի դեր, այսինքն՝ վաճառողի և գնորդի միջև կնքված փոխադրման պայմանագրի պայմանները, որոնք տեղ չեն գտել կոնոսամենտում, որևէ կարևորություն չեն ներկայացնում, և վեճերի դեպքում դրանց անգամ ասպեկտման անհրաժեշտություն չի ծագում: Փոխադրման պայմանագրում տեղ գտած, սակայն կոնոսամենտում չարտացոլված պայմանները պարտադիր ուժ չունեն ու չեն կարող տարածվել գնորդի վրա²¹¹:

Որոշ հեղինակների կարծիքով՝ որպես փոխադրման պայմանագիր գործելու գործառույթը առկա է նաև էլեկտրոնային կոնոսամենտների դեպքում, քանի որ կողմերը, էլեկտրոնային նամակներ փոխանցելով, կկնքեն փոխադրման պայմանագիր, որի հիման վրա էլ կթողարկվի կոնոսամենտը, ինչն էլ կփոխանցվի հենց գնորդին²¹²: *Այստեղ պետք է արձանագրել, որ որպես փոխադրման*

<http://www.buscalegis.ufsc.br/revistas/files/anexos/3791-3785-1-PB.htm>

²¹⁰ Տե՛ս **Charles Debattista**, նշված աշխատությունը, էջ 151:

²¹¹ Տե՛ս *Leduc v Ward* (1888) 20QBD 475:

²¹² Տե՛ս **Russell Harling**, 'eB/Ls – the Legal Perspective: Legal Mechanisms of the ESS Databridge Services and Users Agreement' (Electronic Transport Records-How secure are they in shipping transactions?, Maritime Business Forum, London, 23 February 2011).

պայմանագիր գործելու գործառույթը կոնոսամենտներին տրվել է դատական որոշումների հիման վրա, որն էլ այնուհետև արտացոլվել է տարբեր պետությունների օրենսդրություններում: Հարց է ծագում՝ եթե այդպիսի գործառույթը դեռևս չի ճանաչվել նույն դատական որոշումներով էլ եկտրոնային կոնոսամենտների համար, արդյոք կարելի՞ է պնդել, թե էլ եկտրոնային կոնոսամենտները նույնպես կատարում են փոխադրման պայմանագրի ֆունկցիա: Այս տեսանկյունից պետք է համաձայնել Մ. Գոլդբերգի հետ, ով գտնում է, որ գնորդի և փոխադրողի միջև հարաբերությունները որպես փոխադրման պայմանագրի (կոնոսամենտի) կողմեր կարող էին ծագել միայն, եթե էլ եկտրոնային կոնոսամենտի՝ որպես փոխադրման պայմանագիր գործելու ֆունկցիան ճանաչված լիներ: Մյուս կողմից էլ՝ տեխնիկական տեսանկյունից կարծում ենք, որ չկարող է խոչընդոտ, որ էլ եկտրոնային կոնոսամենտները կատարեն վերոնշյալ ֆունկցիան: Այսինքն՝ էլ եկտրոնային կոնոսամենտների՝ որպես փոխադրման պայմանագիր ճանաչվելու գործառույթը կարող է ապահովվել, եթե առկա լինի համապատասխան գործառույթը ճանաչող դատական որոշում կամ օրենսդրական որևէ կարգավորում:

3. Տիրույթի և փաստաթուղթի ինտելը

Կոնոսամենտի՝ որպես տիտղոսային փաստաթղթի հասկացությունը բացակայում է տարբեր երկրների օրենսդրական ակտերում: Որոշ հեղինակներ նշում են, որ կոնոսամենտը տիտղոսային փաստաթուղթ է, որով տիրապետողը հնարավորություն ունի ստանալ ակրեդիտիվ կամ այն օգտագործել որպես պարտավորությունների ապահովման միջոց: Այլ կերպ ասած՝ կոնոսամենտը ստեղծում է այն տիրապետողի և փոխադրողի միջև գույքային հարաբերություններ, կարծես թե պայմանագիրը կնքվել է նրանց մեջ²¹³:

Որպես տիտղոսային փաստաթուղթ՝ կոնոսամենտը .

http://www.shippinglbc.com/content/uploads/members_documents/Electronic_Transport_Records_230211_-_Part_1.pdf

²¹³ Տե՛ս *Filippo Lorenzon, David Myer Sassoon*, ‘C.I.F. and F.O.B. contracts’, 2012, պարագրաֆ 31:

ա. ներկայացնում է ապրանքները, և հետևաբար գնորդը կարող է վաճառել ապրանքները՝ առանց դրանց ֆիզիկապես տիրապետելու²¹⁴,

բ. փոխանցում է ապրանքների տիրապետումը, ինչով հավաստիացնում է, որ կոնոսամենտի տիրապետողն այն մարդն է, ով ունի տիրապետման իրավագործությունն հենց կոնոսամենտով,

գ. կարող է փոխանցել սեփականության իրավունքը, եթե կողմերն այդպես են պայմանավորվել²¹⁵,

դ. կարող է գործել որպես պարտավորությունների ապահովման միջոց, եթե դրա անհրաժեշտությունը լինի կողմերի կամ բանկի կողմից²¹⁶,

ե. կոնոսամենտի տիրապետողը կարող է ստանալ բեռը, եթե ներկայացնի կոնոսամենտը,

զ. օրինական տիրապետողը կարող է նաև հայց հարուցել ինչպես փոխադրողի, այնպես էլ վաճառողի դեմ²¹⁷, անգամ եթե դեռևս չի փոխանցվել սեփականության իրավունքը:

Կոնոսամենտի առաքումը նույնականացվում է ապրանքների առաքման հետ²¹⁸, և գնորդի համար կոնոսամենտը «պահեստի բանալին է»²¹⁹:

Կոնոսամենտը փոխանցելի բեռնագրի տեսակ է: Բեռնագրերը լինում են երկու տեսակի՝ փոխանցելի և ոչ փոխանցելի: Դրանում նշված չէ կոնկրետ ստացողի անունը, և հնարավորությունն է ընձեռվում, որ նման կոնոսամենտը վաճառքի միջոցով մեկ և ավելի անգամներ փոխանցվի այլ անձանց, որոնք ի վերջո հանդես կգան վերջնական ստացողի դերում: Այսինքն՝ փոխանցելի կոնոսամենտների դեպքում կոնոսամենտի վրա կոնկրետ անձի անուն նշված չի լինում, և բեռի նկատմամբ իրավունքներ է ձեռք բերում այն անձը, ով կոնոսամենտը կներկայացնի փոխադրողին: Այդ իսկ պատճառով վերոնշյալ կոնոսամենտները հանդես են գալիս որպես ըստ ներկայացնողի արժեթղթեր: Ոչ փոխանցելի կոնոսամենտներն

²¹⁴ Տե՛ս **John F Wilson**, Carriage of goods by sea, 2010, էջ 136:

²¹⁵ Տե՛ս **Stasia Williams**, նշված աշխատությունը, էջ 561:

²¹⁶ Տե՛ս **Marek Dubovec**, նշված աշխատությունը, 448-449 էջեր:

²¹⁷ Տե՛ս **John F Wilson**, 'Carriage of goods by sea', 2010, էջ 136:

²¹⁸ Տե՛ս **Sean Thomas**, 'Transfers of documents of title under English law and the Uniform Commercial Code', 2014, էջ 573:

²¹⁹ Տե՛ս Sanders Bros v. Maclean & Co [1883] 11 QBD (CA) [327], [341]:

անգլիական իրավունքում հավասարեցվում են ծովային բեռնագրերին և այն ստացողին տիտղոսի իրավունք չեն տալիս, այսինքն՝ վեճ ծագելու դեպքում նման բեռնագիր ունեցողը չի կարող օգտվել պաշտպանության բոլոր միջոցներից և չի ունենա համապատասխան իրավունքներ՝ ընդդեմ բեռի սեփականատիրոջ: 33 քաղաքացիական օրենսգրքի 158-րդ հոդվածի առաջին մասը նույնպես սահմանում է, որ կոնոսամենտն արժեթուղթ է ապրանքը տնօրինելու մասին, որը հավաստում է դրատիրապետողի իրավունքը՝ տնօրինելու կոնոսամենտում նշված բեռը և փոխադրելուց հետո ստանալու այն, իսկ նույն հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ կոնոսամենտը կարող է լինել ըստներկայացնողի, օրդերային կամ անվանական:

Փոխանցելի կոնոսամենտները դժվարությամբ են ստեղծում Էլեկտրոնային առևտրի ոլորտում: Որպես տիտղոսային փաստաթուղթ՝ կոնոսամենտը երաշխավորում է, որ չկան երկու կամ ավելի մարդիկ, որոնք կարող են միաժամանակ ունենալ իրավունքներ կոնոսամենտի նկատմամբ: Միայն օրինական տիրապետողը կարող է փոխադրողից պահանջել ապրանքի առաքում: Նաև ունի փոխադրողի դեմ հայց հարուցելու իրավունք²²⁰: Փոխադրողը մի կողմից պարտավոր է առաքել բեռը կոնոսամենտի օրինական տիրապետողին (հետևաբար փոխադրողը պետք է վստահ լինի, թե ով է գնորդը), մյուս կողմից փոխադրողը պարտավոր է ձեռնպահ մնալ ապրանքն այլ անձի առաքելուց²²¹: Ստացողն իր հերթին պետք է կարողանա ապացուցել, որ ինքն է կոնոսամենտի օրինական տիրապետողը²²²:

Քանի որ Էլեկտրոնային փաստաթղթերը կարող են պատճենահանվել մի քանի միլիոն օրինակով, շատ դժվար է որոշել, թե ով է հանդիսանում բնօրինակի օրինական տիրապետողը, ինչպիսի փաստաթուղթն էլ այդ անձին կոնստրուկտիվ տիրապետման իրավունք տված կլինի²²³: Ենթադրվում է, որ Էլեկտրոնային կոնոսամենտները

²²⁰ Տե՛ս Transport legal update: Technology in shipping - Electronic Bills and the reluctance of the industry to use them, 2013:

http://www.eversheds.com/global/en/what/articles/index.page?ArticleID=en/Transport/Electronic_bills_and_in_dustry_reluctance_040913

²²¹ Տե՛ս Kuwait Petroleum Corp v I&D Oil Carriers Ltd (*The Houda*) [1994] 2 Lloyd's Rep 541:

²²² Տե՛ս **Chris Reed and others** (eds) Cross-border electronic banking: challenges and opportunities, 2000, էջ 75

²²³ Տե՛ս **Kenneth C. Kettering**, նշված աշխատությանը, էջ 1703:

պրակտիկայում հաստատվելու հնարավորությունն կունենան միայն այն դեպքում, երբ հիմնավորվի դրանց բնօրինակ լինելը: Հաղորդագրությունները կարող են ներառել թվային ստորագրություն կամ ժամանակային շտամպ, որն էլ կարող է օգնել փաստաթղթի օրիգինալը և պատճենը տարբերակելիս: Այդուհանդերձ, քանի որ էլեկտրոնային կոնոսամենտները շոշափելի չեն և չեն կարող փոխանցվել մեկ անձի ձեռքից մյուսին, կլինեն առնվազն երկու օրինակներ, որոնք կարող են ենթադրվել որպես օրիգինալ (բնօրինակ): Փաստացի դահեսց նույն հաղորդագրությունն է, որը պահպանված կլինի ուղարկողի «Ուղարկված» փոստարկղում և ստացողի «Ստացված» փոստարկղում: Սա առաջացնում է անհանգստություններ. եթե ուղարկողը միևնույն փաստաթուղթն ուղարկի մի քանի անգամ, ապա ով կլինի օրինական տիրապետողը:

Էլեկտրոնային բեռնագրերի ստեղծմամբ ու տարածմամբ զբաղվել են տարբեր ընկերություններ ու համակարգեր, որոնցից միայն բացառիկներն են հաջողել: Բոլերո, Գլոբալ Թրեյդ և ԹրեյդՔարտ համակարգերի առկայությունը վկայում է, որ ներկայիս ավտոմատացման պրոցեսն իր ազդեցությունն է ունենում թղթային կոնոսամենտների հետ էլեկտրոնայինների համարժեքության և էլեկտրոնային տրանսպորտային տվյալների ավելի լայն կիրառության վրա²²⁴: Հետազոտությունը ցույց է տալիս, որ կան նաև այլ նախաձեռնություններ, որոնք, սակայն, հաջողությամբ չեն պսակվել: Այնուամենայնիվ, կարևոր է նկատի ունենալ, որ նոր նախագծերը մշակման փուլում են, որոնք հաշվի են առել նախկին համակարգերի սխալներն ու փորձ են կատարել հանդես գալ նոր լուծումնային տարբերակներով:

Էլեկտրոնային բեռնագրերի կիրառման առաջին համակարգը **Սիհոքս Էր** (The Seaborne Trade Documentation System (SeaDocs)), որտեղ փորձ Էր արվում ավտոմատացնել տրանսպորտային փաստաթղթերը²²⁵: Դրա նախաձեռնողներից Էր Չեյզ Մանհեթեն բանկը: Այն խաղում էր կենտրոնական ռեգիստրի դեր, որտեղ պահպանվում էին էլեկտրոնային կոնոսամենտների տիտղոսի փոխանցումները:

²²⁴ Տե՛ս *Miriam Goldby*, Electronic documents in maritime trade, նշված աշխատությունը, պարագրաֆ 10.33:

²²⁵ Տե՛ս *Marek Dubovec*, նշված աշխատությունը, էջ 449:

Կոնոսամենտի սեփականատերը նախաձեռնում էր կոնոսամենտի տրամադրումը ՍիԴոքսի միջոցով, որը փոխանցում էր տեղեկությունը կենտրոնական համակարգին: Չնայած առաջարկված լուծումներն ընդհանուր առմամբ ընդունելի ու արդյունավետ էին, բանկերն ու վաճառողները չէին ցանկանում օգտվել այդ համակարգից: Պատճառն այն է, որ վաճառողները հատկապես անհանգստացած էին գեղծարարություններով, հարկային ստուգումներով կենտրոնական ռեգիստրում և այն հանգամանքով, որ երրորդ կողմին պետք է տրամադրվեր կոնֆիդենցիալ տեղեկատվություն²²⁶: Ինչ վերաբերում է բանկերին, ապա այդպիսիք չէին ցանկանում, որ իրենց մրցակից Չեյզ Մանհեթենն ունենար ռեգիստրի ֆունկցիաներ իրականացնելու բացառիկ իրավունք²²⁷: Բացի այդ՝ ՍիԴոքսը փակ համակարգ էր, որը թույլ էր տալիս առևտրով զբաղվել միայն իր անդամներին:

Էլեկտրոնային կոնոսամենտների վերաբերյալ կարգավորումներ նախատեսվել են նաև Էլեկտրոնային կոնոսամենտների վերաբերյալ **ՍիեմԱյ կանոններով** (CMI Rules), որոնք մշակվել են 1990 թվականին: Քանի որ կանոնները չունեն որևէ ուժ, կողմերը պետք է դրանք ինկորպորացնեն իրենց պայմանագրերում կամ հղում կատարեն դրանց: Յենց դա էլ առավելություն է տալիս ՍիԴոքսի համեմատ, քանի որ կանոններից կարող է օգտվել յուրաքանչյուր վաճառող: Կանոնները չեն ենթադրում որևէ համակարգի անդամագրվելու պարտականություն, ինչով ապահովում են միջազգային առևտրի մասնակիցների ճկունությունը: Գործարքների անվտանգությունն ու փաստաթղթերի ապահով փոխանցումն ապահովվելու համար կանոններն օգտագործում են հանրային/մասնավոր բանալիների համակարգը: Մասնավոր բանալուն տիրապետողը կոնոսամենտի օրինական տիտղոսակիրն է: Թղթային կոնոսամենտների հետ չխառնելու համար պետք է հստակեցնել, որ չնայած մասնավոր բանալուն տերը կոնոսամենտի օրինական տիրապետողն է, տիտղոսի փոխանցումը տեղի չի ունենում նույն մասնավոր բանալին նոր անձին

²²⁶ Տե՛ս *Pagnoni and Visconti*, նշված աշխատությունը, էջ 366:
²²⁷ Տե՛ս *Marek Dubovec*, նշված աշխատությունը, էջ 450:

փոխանցել ու միջոցով: Փոխադրողը, որը մասնակցում է բանակցային պրոցեսին, նոր մասնավոր բանալի է թողարկում, երբ նա տեղեկացվում է, որ ներկայիս տիրապետողը ցանկանում է իր տիտղոսը փոխանցել այլ անձի: Այդ կերպ փոխադրողը միշտ տեղեկացված է լինում նոր տիտղոսատիրոջ մասին, որին էլ պետք է առաքի բեռը²²⁸:

Էլեկտրոնային կոնոսամենտի փոխանցումն սկսվում է փոխադրողից, ով, ստանալով բեռը, թողարկում և ուղարկում է էլեկտրոնային կոնոսամենտը վաճառողին՝ վերջինիս տրամադրելով մասնավոր բանալի: Այն պահին, երբ վաճառողն ստանում է էլեկտրոնային կոնոսամենտը, նա դառնում է թե՛ էլեկտրոնային կոնոսամենտի, թե՛ մասնավոր բանալու տիրապետող: Մասնավոր բանալին օգտագործվում է՝ վաճառողին նույնականացնել ու և նրա տիտղոսը հնարավոր զեղծարարության ներքին պաշտպանել ու համար: Վաճառողն այնուհետ կարող է օգտագործել մասնավոր բանալին՝ փոխադրողի հետ ապահով հաղորդակցվել ու համար, եթե մտադրության ունենա փոխանցել տիտղոսն այլ անձի: Այդ կերպ փոխադրողը վաճառողի կողմից տեղեկացվելուց հետո պետք է ուղարկի էլեկտրոնային կոնոսամենտը նոր տիրապետողին: Նոր տիրապետողը պետք է պատասխանի փոխադրողին և նշի իր մտադրության մասին ընդունել բեռի առաքումն ու դրանց նկատմամբ հսկողության իրավունքը: Այդպիսի պատասխան ստանալուց հետո փոխադրողը կասեցնում է նախկին տիրապետողի մասնավոր բանալին և թողարկում ու ուղարկում է նոր մասնավոր բանալի նոր տիրապետողին: Ինչպես նշվեց, մասնավոր բանալու տիրապետողն ունի կոնոսամենտի նկատմամբ հսկողության իրավունք և հետևաբար դրանից ծագող բոլոր իրավունքները (ներառյալ փոխադրողից պահանջել ապրանքների առաքում, բեռի օտարում ու կոնոսամենտի նկատմամբ իրավունքների փոխանցում այլ գնորդի)²²⁹:

Փաստորեն, ՍիԷմԱյ էլեկտրոնային կոնոսամենտը թույլատրում է կատարել թղթային կոնոսամենտի բոլոր երեք գործառնությունները:

²²⁸ Տե՛ս **Marek Dubovec**, նշված աշխատությանը, էջ 451:

²²⁹ Տե՛ս **Miriam Goldby**, “The CMI Rules for Electronic Bills of Lading reassessed in the light of current practices”, 2014, էջ 57:

Միակ անհանգստությունն այն է, որ կոնոսամենտի ավտոմատ փոխանցում տեղի չի ունենում, ինչն առկա է թղթային կոնոսամենտների դեպքում: Ավելանում է մեկ փուլ, այն է՝ փոխադրողը կասեցնում է վաճառողի մասնավոր բանալին ու հասկացնում նոր բանալի գնորդին: ՍիեմԱյ մոդելի մեկ թերությունը փոխադրողի վրա դրված լրացուցիչ պարտականությունների ծավալն է, մինչդեռ փոխադրողները չեն ցանկանում ծանրաբեռնված լինել կամ կրել պատասխանատվություն իրենց սովորական պարտականությունների շրջանակից զատ այլ գործողությունների համար:

Քանի որ ՍիեմԱյ կանոնները լայն կիրառություն չստացան պրակտիկայում, 1995 թվականին մշակվեց **Բոլերոն**, որը թույլ տվեց օգտագործել փոխանցելի կոնոսամենտներ կենտրոնական ռեգիստրի համակարգի միջոցով: Բոլերոյում պրոցեսը սկսելու համար փոխադրողը փոխանցում է հաղորդագրությունը Բոլերոյի հաղորդագրությունների հարթակ՝ խնդրելով թողարկել Բոլերո կոնոսամենտ: Հենց այն թողարկվում է, վաճառողը դառնում է բեռի օրինական տիրապետող, որի անունը գրանցված է լինում նաև Բոլերոյի ռեգիստրում: Բոլերոյի կանոնագրքի 3.1.3 կանոնը սահմանում է ֆունկցիոնալ հավասարության սկզբունքը և նախատեսում, որ փոխադրողի հայտարարությունները բեռի նկարագրության, քանակի կամ այլ նկարագրության մասին նույնքան պարտավորեցնող են, որքան թղթային կոնոսամենտների դեպքում: Այս կանոնը սահմանում է, որ Բոլերո կոնոսամենտը գործում է որպես բեռի ստացման հավաստագիր: Որպեսզի վաճառողն իր տիտղոսը փոխանցի նոր գնորդին, վաճառողը պետք է տեղեկացնի այդ մասին հարթակին, որը վաճառողին իդենտիֆիկացնելուց (նույնականացնելուց), նրա ստորագրությունը նույնականացնելուց ու տիտղոսը ստուգելուց հետո փոխում է գրանցված տվյալները նոր գնորդի անունով: Համակարգը, փաստորեն, թույլ է տալիս, որ կոնստրուկտիվ տիրապետման իրավունք ունեցող անձը փոխանցի տիտղոսն ու դրա հետ կապված իրավունքներն այլ անձի, ով, սակայն, պետք է հանդիսանա Բոլերոյի անդամ: Պետք է նշել, որ, ի տարբերություն թղթային կոնոսամենտների, Բոլերո

կոնոսամենտների դեպքում հերթական նոր գնորդը դառնում է փոխադրման պայմանագրի կողմ նույնպես միջոցով, երբ նախկին կնքված փոխադրման պայմանագիրը դադարում է, և գնորդի ու փոխադրողի միջև կնքվում է նորը և ընդհանուր պայմաններով²³⁰:

Բոլերոն, այդուհանդերձ, մեծ տարածում չի ստացել, քանի որ այն փակ է միայն համակարգին գրանցված անդամների համար, իսկ անդամ դառնալու համար պետք է համաձայնել Բոլերոյի կողմից մշակված կանոնադրքին: Կանոնադրքն իր բնույթով բազմակողմ պայմանագիր է, որը պարտադիր է բոլոր անդամների համար և պարտականությաններ է առաջացնում թե՛ Բոլերոյի, թե՛ մնացած բոլոր անդամների հանդեպ²³¹: Բանկերը նույնպես անվստահության մեջ են ընդունում Բոլերո կոնոսամենտները և հաճախ դրանց դիմաց ակրեդիտիվի հիման վրավճարումներ չեն կատարում²³²:

Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած նորություն, այնպես էլ Բոլերոյին, նույնպես անհրաժեշտ է ժամանակ պրակտիկայում և միջազգային առևտրում ու փոխադրման ոլորտում հաստատվելու համար: Բոլերո կոնոսամենտի առավելությունները թղթային կոնոսամենտների նկատմամբ դրանց արդյունավետությունն ու արժեքն են²³³: Բոլերոյի կայքը ցույց է տալիս, որ արդեն իսկ տարբեր բանկեր, փոխադրողներ և առաքող ընկերություններ համագործակցում են Բոլերոյի հետ²³⁴: Բոլերոն Ավստրալիայում ընդունված է որպես իրավական պրակտիկա: Բացի այս առավելություններից՝ Բոլերո կոնոսամենտն ավելի ապահով է, քան թղթայինը, քանի որ այն ստորագրված է փոխադրողի կողմից վերջինիս մասնավոր բանալիով և հետևաբար չի կարող վեճերի առարկալիսել հետագայում²³⁵:

Էլեկտրոնային կոնոսամենտների մեկ այլ լուծում է տրված ԷսսԴոքսի կողմից, որը հիմնադրվել է 2005 թվականին: ԷսսԴոքս Էլեկտրոնային կոնոսամենտներն արդեն իսկ օգտագործվում են 63

²³⁰ Տե՛ս *Miriam Goldby*, Electronic documents in maritime trade, նշված աշխատությունը, պարագրաֆ 6.25:

²³¹ Տե՛ս *Ronald M. Lee and others*, նշված աշխատությունը, էջ 94:

²³² Տե՛ս *Pagnoni and Visconti*, նշված աշխատությունը, էջ 368:

²³³ Տե՛ս *Ronald M. Lee and others*, նշված աշխատությունը, էջ 93:

²³⁴ Տե՛ս Bolero Customers, <http://www.bolero.net/customers>

²³⁵ Տե՛ս *Miriam Goldby*, Electronic documents in maritime trade, նշված աշխատությունը, պարագրաֆ 6.12:

երկրների փոխադրման շուկաներում և ավելի քան 1600 մասնակիցների կողմից: ԷսսԴոքս Էլ Եկտրոնայ ին կոնոսամենտների ճկունությունն ապահովվում է վաճառողների, բանկերի, ֆրախտ ֆորվարդերների և տարբեր օպերատորների պահանջմունքներին համապատասխան մշակված լուծումներով: Բոլոր օգտագործողները պարտավոր են միանալ համապատասխան ԷսսԴոքս Օգտատերերի պայմանագրին, որը բազմակողմանի պայմանագիր է և պարտադիր է բոլոր օգտագործողների և ԷսսԴոքս ընկերության համար²³⁶:

Տրանսպորտային փաստաթղթեր ստեղծելիս կողմերը համագործակցում են համակարգի միջոցով, երբ վաճառողը տրամադրում է տեղեկատվությունը փոխադրողին, իսկ վերջինս լրացնում ու թողարկում է կոնոսամենտը: Համակարգն ապահովում է փաստաթղթերի ստորագրման, թողարկման, փոփոխման ուղարկման, վերադարձի, արտատպման, ավարտի և այլ ֆունկցիաներ: ԷսսԴոքսի համար Էական տարբերակիչ հատկությունը դրա կոնոսամենտի արտաքին վիզուալ նմանությունն է փաստաթղթային կոնոսամենտին: Ընդ որում՝ ԷսսԴոքսը, կախված կոնկրետ օգտատիրոջ տիպից, ավտոմատացնում է հենց այդ օգտատիրոջ կոնոսամենտի տիպային օրինակները, որոնք այնուհետև հեշտորեն կարող են օգտագործվել այդ կազմակերպության կողմից: Կոնոսամենտի հետևի Էջին տեղադրված են լինում սովորական պայմանները²³⁷: Փոխադրողը, Էլ Եկտրոնայ ին նամակով ստանալով բեռի մասին տեղեկատվությունը, ստորագրում է կոնոսամենտը, սակայն մինչ այդ համակարգն աուտենտիկացնում է փոխադրողին վերջինիս օգտանվամբ, գաղտնաբառով և թոքենով: Անվտանգությունն ապահովված է աուտենտիկության երկու մեխանիզմով՝ գաղտնաբառ և թոքեն: ԷսսԴոքս կոնոսամենտները կարող են այնուհետև ներկայացվել բանկերին, որոնց դիմաց վճարումը կատարվում է Էլ Եկտրոնայ ին ակրեդիտիվի կանոնների համաձայն²³⁸:

Այսօր ԷսսԴոքսը ամենաարդյունավետ համակարգն է միջազգային փոխադրումների մասնակիցների տեսանկյունից,

²³⁶ Տե՛ս Electronic Bills of Lading, <http://www.essdocs.com/products/cargodocs/electronic-bills-of-lading>

²³⁷ Տե՛ս **Nicholas Gaskell**, 'Bills of lading in an electronic age', 2014, էջ 263:

²³⁸ Տե՛ս **Miriam Goldby**, Electronic documents in maritime trade, նշված աշխատությունը, 11.30-11.33 պարագրաֆներ:

սակայն դրա բացասական կողմերից է պարտադիր անդամությունը: Անդամության պահանջը խոչընդոտ է թե՛ ԷսսԴոքսի, թե՛ Բոլերոյի համար: Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Գոլդբի, դժվարություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ անդամը փորձի առևտուր կատարել ոչ անդամի հետ: Նա առաջարկում է խոչընդոտող հաղթահարել միջնորդների միջոցով, որոնք մասնակից կլինեն համակարգին և ծառայություններ կմատուցեն նրանց, ովքեր անդամ չեն²³⁹, ինչով հաճախորդներն այլևս ստիպված չեն լինի անդամակցել ԷսսԴոքսին: Սակայն, մեր կարծիքով, նման սցենարը կարող է կողմերի համար լրացուցիչ ծախսեր և կոնֆլիկտացիաների խնդիրներ առաջացնել, մանավանդ այն դեպքերում, երբ բոլոր մասնակիցները չհանդիսանան համակարգի անդամ և վաճառք անեն միայն միջնորդների միջոցով՝ կրելով վերջիններիս մատուցած ծառայությունները փոխհատուցելու ծախսերը:

Այս արակտիկ լուծումները հիմնավորում են, որ Էլեկտրոնային կոնոսամենտներն ունեն ապագա և մինչ օրս կիրառվում են վաճառողների, բանկերի, փոխադրողների և միջազգային առևտրի այլ մասնակիցների կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում կամ օրենքով սահմանված կարգով հատուկ թույլտվություն (լիցենզիա) ստացած անձը կարող է անվանական կամ օրդերային արժեթղթով հավաստված իրավունքներն ամրագրել՝ ներառյալ ոչ փաստաթղթային (Էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի օգնությամբ և այլն) ձևով: Իրավունքներն ամրագրելու այդ ձևի նկատմամբ կիրառվում են արժեթղթերի համար սահմանված կանոնները, եթե այլ բան չի բխում նման ամրագրման առանձնահատկություններից: Ոչ փաստաթղթային ձևով իրավունք ամրագրած անձը պարտավոր է իրավունքի տիրոջ պահանջով նրան տալ ամրագրված իրավունքի մասին վկայող փաստաթուղթը: Ամրագրելու միջոցով հավաստված իրավունքների և իրավատերերի պաշտոնական ամրագրման, գրառումների փաստաթղթային հաստատման ու ոչ փաստաթղթային արժեթղթերով

²³⁹ Տե՛ս *Miriam Goldby*, Electronic documents in maritime trade, նշված աշխատությունը, պարագրաֆ 11.07:

կատարվող գործառնությունների կարգը որոշվում է օրենքով կամ օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ փաստաթղթային արժեթղթերով գործառնությունները կարող են կատարվել միայն իրավունքների գրառում կատարող անձին դիմելու միջոցով: Իրավունքների փոխանցումը, վերապահումը և սահմանափակումը պետք է պաշտոնապես ամրագրի այն անձը, ով պատասխանատվություն է կրում պաշտոնական գրառումները պահպանելու, դրանց գաղտնիությունն ապահովելու, այդ գրառումների մասին ճշգրիտ տվյալներ ներկայացնելու, կատարված գործառնությունների վերաբերյալ պաշտոնական գրառումներ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ՝

1. Ոչ փաստաթղթային ձևով արժեթղթերը կարող են ամրագրվել միայն օրենքով նախատեսված դեպքերում կամ օրենքով սահմանված կարգով լիցենզավորված անձի կողմից: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի²⁴⁰ ուսումնասիրությունից հետևում է, որ առայժմ արժեթղթերի շրջանառության բնագավառում լիցենզավորման են ենթակա Կարգավորվող շուկայի օպերատորի գործունեությունը, Կենտրոնական դեպոզիտարայի գործունեությունը, ներդրումային ծառայությունների մատուցումը: Այսինքն՝ այս պահի դրությամբ փոխադրումների բնագավառում կիրառվող արժեթղթերի մասով լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ անգամ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով չի նախատեսվում, ուստի օրենքը էլեկտրոնային տրանսպորտային փաստաթղթերի անգամ տեսական կիրառության հնարավորությունն չի ընձեռում: **Այս կապակցությամբ կարծում ենք, որ առկա է օրենսդրական բաց և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասում՝ արժեթղթերի շրջանառության բնագավառում, պետք է որպես առանձին գործունեության տեսակ նախատեսել նաև սփտղոսի ռեգիստրների կողմից անվանական կամ օրդերային արժեթուղթ հանդիսացող տրանսպորտային փաստաթղթով հավաստված իրավունքների ամրագրման գործունեությունը:**

²⁴⁰ Տե՛ս ՀՀ-193, ընդունվել է 30.05.2001թ.-ին, ուժի մեջ է 27.06.2001թ.-ից:

2. Իրավատերերի պաշտոնական ամրագրման, գրառումների փաստաթղթային հաստատման ու ոչ փաստաթղթային արժեթղթերով կատարվող գործառնությունների կարգը որոշվում է օրենքով կամ օրենքով սահմանված կարգով, սակայն մինչ այժմ փոխադրումների բնագավառում առկա արժեթղթերի կիրառման վերաբերյալ այդպիսի օրենք կամ որոշում չի մշակվել: Եթե Կենտրոնական բանկի որոշումներում անդրադարձ կատարվել է պարտատոմսերին, ապա մինչ այժմ մշակված չէ որևէ նախագիծ, որով անդրադարձ կատարվի ոչ թղթային կոնոսամենտներին:

3. Օրենքը ենթադրում է ոչ փաստաթղթային արժեթղթերով գործառնությունները գրառող կազմակերպության առկայություն: Մեր օրենքը որդեգրել է նույն Բուլերոյի մեխանիզմը, որի դեպքում ամեն անգամ տիտղոսի փոխանցման և արժեթղթի փոխանցման դեպքում համապատասխան գրառում կատարող անձին պետք է այդ մասին տեղեկացնել, որպեսզի վերջինս փոփոխություններ կատարի իր մոտ առկա տվյալների բազայում: Չնայած տիտղոսի գրանցման միտքը գրավիչ է թվում, պրակտիկայում, ինչպես նկարագրվել է վերևում, այն առաջացրել է մի շարք խնդիրներ:

Այդուհանդերձ, հաշվի առնելով օրենսդրությամբ որդեգրված տիտղոսի ռեգիստրում նենալում մոտեցումը, ինչպես նաև աշխարհում որևէ հաջողված եզակի լուծման բացակայությունը՝ կարծում ենք առայժմ անհրաժեշտություն չկա տիտղոսի ռեգիստրում նենալում հնարավորությունն իրաժարվել: Նման ռեգիստրում իրավունքներ գրանցելու համար իրավատերերը պետք է հետևեն որոշակի կանոնների, որոնք կամ մշակված և ընդունված կլինեն օրենքի տեսքով (ինչպես պահանջում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 152-րդ հոդվածը) կամ կարող են ձևակերպվել որպես այդ ռեգիստրի ներքին իրավական ակտկամ կարող են ներկայացվել որպես պայմանագիր, որը կկքնվի ռեգիստրի և իրավատիրոջ միջև: **Այդ կանոնները կամ պայմանագրի պայմանները պետք է առնվազն պարունակեն.**

1. **Ցանկացած օգտատեր պատասխանատու է իր տրամադրած տեղեկատվության ճիշտ և ամբողջական լինելու համար և պարտավոր է տեղեկացնել ռեգիստրին տեղեկատվության ցանկացած փոփոխության մասին:**

2. Ցանկացած օգտատեր պարտավոր է օգտագործել այնպիսի տեղեկատվական համակարգ, որն ընդունելի է ռեգիստրի կողմից և պարտավոր է այդ համակարգը պահպանել սեփառանքային բարեկարգ վիճակում:

3. Յուրաքանչյուր օգտատիրոջ տրվելու է մասնավոր բանալի, և օգտատերը պտտախանամու է ապահովել այդ բանալու անհասանելի լինելը: Յուրաքանչյուր օգտատեր պտտախանամու է անհասարկ տեղեկացնել ռեգիստրին, եթե կորցրել կամ այլ կերպով երրորդ անձանց հասանելի է դարձրել իր մասնավոր բանալին:

4. Օգտատիրոջ կողմից ռեգիստրի համակարգից օգտվելը դադարեցնելու դեպքում օգտատերը պարտավոր է.

ա) կարգալի իրեն ուղարկված բոլոր նամակները,

բ) բոլոր հնարավոր հասցեատերերը պետք է տեղեկացվեն համակարգից իր դուրս գալու մասին:

5. Փոխադրողի կողմից բեռի վերաբերյալ կատարված ցանկացած հայտարարություն և կունենան նույն իրավական ուժը, ինչ թղթային կոնոսամենսների դեպքում:

6. Էլեկտրոնային կոնոսամենսը կարող է լինել փոխանցելի և ոչ փոխանցելի: Եթե փոխադրողը մտադրված է ստեղծել փոխանցելի կոնոսամենս, նապետք է նշի, որ կոնոսամենսն օրդերային է:

7. Երբ փոխադրողը ստեղծում է էլեկտրոնային կոնոսամենս, նա պետք է նշի.

ա) բեռն առաքողին,

բ) կոնոսամենսի տիրապետողին և

գ) բեռն ստացողին

8. Նոր իրավատիրոջ կողմից իր որպես իրավատեր նշանակումն ընդունելու պահից կամ իրավատեր նշանակվելու պահից 24 ժամը լրանալուց հետո փոխադրման պայմանագիրը համարվում է կնքված փոխադրողի և նոր իրավատիրոջ միջև նույն փոխադրման պայմաններով, ինչպիսիք նշված են կոնոսամենսում: Նույն պահից դադարում են նախկին իրավատիրոջ իրավունքներն ու պարտականությունները: Նոր իրավատերն օգտվում է այն նույն իրավունքներից և կրում է նույն պարտականությունները, ինչ նախկինը:

9. Ցանկացած ժամանակ մինչև բեռն ստանալը իրավատերն իրավունք ունի պահանջել, որ փոխադրողն իրեն տրամադրի թղթային կոնոսամենստ նման պահանջ ստանալ ու ց հետո փոխադրողը պարտավոր է անմիջապես թողարկել թղթային կոնոսամենստ, որում պետք է ներառվեն էլեկտրոնային կոնոսամենստի բոլոր տվյալները, ինչպես նաև առանձին տվյալներ տվյալ կոնոսամենստի էլեկտրոնային տարբերակի նկատմամբ նախկինում եղած բոլոր իրավատերերի մասին: Էլեկտրոնային կոնոսամենստը կորցնում է իր ուժը թղթային համարժեքի թողարկման պահից:

Թղթային կոնոսամենստների պատմությունն ինչպես հետևում է, որ դրանք ձևավորվել և էվոլյուցիա են անցել երկար ժամանակի ընթացքում: Էլեկտրոնային կոնոսամենստները, սակայն, նման շռայլությամբ ժամանակ չունեն զարգանալ ու համար և պետք է շատ արագ հարմարեցվեն բիզնեսին²⁴¹: Անորոշությունը հետ է պահում ընկերություններին և անհատներին արդյունավետ ձևով օգտվել ու էլեկտրոնային կոնոսամենստներից²⁴²: Միջազգային առևտրի մասնակիցները հավատ չեն տածում էլեկտրոնային կոնոսամենստների և դրանց ապահովության հանդեպ: Քանի որ այս մոտեցումը մեծապես պայմանավորված է բարոյահոգեբանական վարքագծով, նման տպավորությունը կարող է փոխվել, եթե առկա լինեն իրավական հստակ կարգավորումներ: Վաճառողները շատ ավելի ապահով կզգան տեխնոլոգիական նորարարություններից օգտվելիս, եթե տեսնեն պետության աջակցությունը: Էլեկտրոնային կոնոսամենստների հետ կապված կադապարված մոտեցումը կարող է փոփոխվել դատական մեկնաբանությունների, օրենսդրական փոփոխությունների կամ պայմանագրային լուծումների շնորհիվ²⁴³: Կարևոր է, որ էլեկտրոնային փաստաթղթերին տրվի թղթային կոնոսամենստների նման հավասար կարգավիճակ, քանի որ առաջիններն ի վերջո փոխարինելու են երկրորդներին:

²⁴¹ Տե՛ս *SF du Toit*, 'The evolution of the bill of lading', 11(2) Fundamina, 2005, էջ 12:

²⁴² Տե՛ս *David Whitaker*, 'Rules Under the Uniform Electronic Transactions Act for an Electronic Equivalent to a Negotiable Promissory Note', 55(1) The Business Lawyer, 1999, էջ 439:

²⁴³ Տե՛ս *Rouhshi Low*, նշված աշխատությունը, էջ 202:

ԵՉՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ

Գործարքների կնքման ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ձևի համալիր վերլուծությունը, ինչպես նաև դրա առանձին հիմնախնդիրների իրավակարգավորման ու սուբստանսիալ թույլ են տալիս կատարել ու տեսական ընդհանրացումներով պայմանավորված **հետևյալ հիմնական եզրահանգուլները և առաջարկությունները**.

1. Յիմք ընդունելով ներկայիս զարգացումները, տեխնոլոգիաների լայն տարածումն ու ամենատարբեր ծառայությունների ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ մատուցման տարածվածությունը՝ կարելի է փաստել, որ գործարքի կնքման ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ձևը օրեցօր պահանջելու է յուրօրինակ մոտեցումներ ու կարգավորումներ՝ դրդելով այն քննարկել գործարքի կնքման գրավոր ձևից առանձին: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ փաստաթուղթն արդեն իսկ կատարում է գրավոր փաստաթղթի գործառնությունները՝ միևնույն ժամանակ վերացնելով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ միջավայրում “պատճեն” հասկացության գաղափարը ու հնարավորությունն ընձեռելով ունենալ անհամար բնօրինակ փաստաթղթեր: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ թվային և ձեռագիր ստորագրությունների ու սուբստանսիալ թույլ հանգում ենք, որ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ թվային ստորագրությունները ոչ միայն թույլ են տալիս նույնականացնել ստորագրողին, այլև հստակ որոշել ստորագրման պահը, ստորագրության տեղադրման կոնկրետ համակարգն ու համակարգիչը, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ թվային ստորագրության պաշտպանված փաստաթղթում փոփոխության կատարման հանգամանքը: Ավելին, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ փաստաթղթի ու ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ թվային ստորագրության իսկությունը բացահայտելու համար անհրաժեշտ չեն ձեռագրաբանական փորձաքննությունն ու ստորագրողի ձեռագրի այլ նմուշներ, որոնք հնարավոր է և հասանելի չլինեն: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ միջոցները կրճատել են տարածության և ժամանակային գործոններն ու դրանց հետ կապված ծախսերը: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ օֆերտայի և ակցեպտի, պայմանագրերի առանձին տեսակների, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ փաստաթղթի, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ թվային ստորագրության, պայմանագրի կնքման պահի, սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ

